Gagik Artsruni took the liberty of practical steps too, even when Abas Bagratuni had already acceded the throne. In early 930s Gagik Artsruni sent a letter to the Byzantine emperor Romanos Lekapenos (920–944) asking him to take Armenians under his patronage[49]. Who else, if not the king of Armenia, could write such a letter to the emperor talking on behalf of all Armenians. If we take into account that then the catholicosate was situated in Vaspurakan too[50], it will be clear that such a letter could not be written only on behalf of the kingdom or king of Vaspurakan. The fact, that such a letter had been written and it had grave consequences, is evidenced by a

---

[42] **Ibn al-Athīr**, 7, 35–36:

[43] **Հովհաննես Դրասխանակերտցի**, 542:

[44] **Կոստանդին Ծիրանածին**, 151:

[45] **Բօզոյեան Ա.**, 2009, 247:

[46] **Ibn al-Athīr**, 7, 31–33:

[47] «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, 2009, էջ 258:

[48] **Miskawayh**, 5, 223:

[49] «Գիրք թղթոց», 1901, 295–301:

[50] **Հովհաննես Դրասխանակերտցի**, 579:

record of Ibn al-Asir dated to 319 in Hijrah calendar (January of 931 – January of 932) according to which «that year Ibn al-Dayrani (son of Derenik, that is Gagik Artsruni – A.Y.) and other Armenian [princes] of Armenian peripheral [provinces] wrote to the Romans, impelling them to attack the Islam country and promising their help. The Romans attacked with a huge army and ruined Berkry, Khlat and its environs, killing most of the Muslims and taking a huge crowd captives»[51]. In fact, from the point of view of the author, Gagik Artsruni was certainly the Armenian regent, who united other princes of the country and asked Byzantium for help. It is quite possibe that the matter concerns the same event. That means that in early 930s the Byzantine army invaded Armenia at Gagik Artsruni's request, though there is nothing about it in the letter.

The recordings of Constantine VII Porphyrogennetos testify to the new status and the real position of Gagik Artsruni. It is known, that previously Byzantium accepted Ashot Yerkat as Prince of Princes of the Greater Armenia[52]. According to Constantine VII Porphyrogennetos, after the latter’s death Gagik Artsruni received the «Honour of Prince of Princes»[53], that is he took Ashot Yerkat’s stand. Another piece of information concerning Constantine VII Porphyrogennetos is important too, as it shows that in connection with the Byzantine emperor’s intention of conquering the Teodosupolis (Karin), the Georgian regents said that in that case the Byzantines would lose the «respect of ... Vaspurakanites (Gagik Artsruni – A.Y.) and [other] Armenian princes»[54]. Actually, Gagik Artsruni was considered the highest competent regent of Armenia, thus, the emperor was offered to send a delegate to Armenia to monitor the situation[55].

The fact, that Gagik really had the title of «King of Armenia and Georgia», that is he «filled the place of Bagratunis» for a while, is also substantiated by the fact that the next Bagratuni successor Abas is mentioned as «Magistrate» in Byzantine sources[56], as the title of Prince of Princes, i.e. in this case the title of the king of Armenia and Georgia belonged to Gagik Artsruni[57].

Actually, according to Hovhannes Draskhanakerttsi and other authors, Gagik Artsruni was the king of Armenia, according to Constantine VII Porphyrogennetos he was Prince of Princes, and according to the Anonymous author – King of Armenia and Georgia. In all three cases the changes in the status of Gagik Artsruni are intelligible. In the first case he «became» king of Armenia, for Hovhannes

[51] **Ibn al-Athīr**, 7, 69–70: Թարգմանությունը **Իբն ալ-Ասիր**. 1981, 178–179:
[52] **Բարթիկյան Հ.**, 1966, N 4, 252, 255:
[53] **Կոստանդին Ծիրանածին**, 151:
[54] Նույն տեղում, 15:
[55] Նույն տեղում:
[56] Նույն տեղում, 10–11: Տե՛ս նաև **Յուզբաշյան Կ.**, 1974, N 1, 36–37:
[57] **Կոստանդին Ծիրանածին**, 225, ծ. 15:

Draskhanakerttsi in connection with moving the Catholicosate to Vaspurakan, while the author avoided calling him King of Armenia, and in other cases it is the matter of Gagik Artsruni having the status of Bagratunis. After Ashot Yerkat's death he was Prince of Princes and in fact «king of Armenia and Georgia».

The abovementioned information of Anania Mokatsi shows that under Abas Bagratuni (929–953), who was qualified only as a «Magistrate» by Byzantium, thought in fact was the King of Armenia, Gagik Artsruni continued holding the title of «king of Armenia»[58]. As «King of Armenia» in 938 he is mentioned by Miskawayh. And the title of «King of Armenia and Georgia» continued undoubtedly to stay in Gagik Artsruni's title list.

The fact of the existence of two kings of Armenia in the Armenian reality of the second half of 930s and early 940s is best reflected in papers of Anania Mokatsi, where he also makes an attempt to «reconcile» the contraposition of titles of both kings. He writes: «[happened] in reign of two kings… the autocratic king of Armenia Gagik Arstruni and Great king of Armenia Abas Bagratuni[59]». Actually, the two kings of Armenia existing in parallel, were not opposed to each other, and what is more, sometimes they even supported each other, as it happened, when Abas suffered a defeat by enemies, invading Armenia, and Gagik Artsruni came to aid and annihilated the enemy[60]. In fact, after Ashot Yerkat's death up untill early 940s Gagik Artsruni had gained a highly important role in the Armenian political arena.

Summing up, we can note that Gagik Artsruni was proclaimed king by caliph and Atropatene emir Yusuf for several times. Before Smbat I died, he was king of Vaspurakan only, after Smbat I's murder he was proclaimed king of Armenia, and in the last period of Ashot Yerkat's reign he also received the title of «King of Armenia and Georgia». The latter was the title of the regent, belonging to Bagratuni house and having privilege in the country. The Caliphate recognized the person, having that title, as Shahanshah, and Byzantium – as Prince of Princes.

BIBLIOGRAPHY

Canard M., Bibliotheca Arabica, VIII, Paris, 1934.
Ibn al-Athīr, Al-Kāmil fī al-tārīkh, 6, Beirut, 1987.
Ibn al-Athīr, Al-Kāmil fī al-tārīkh, 7, Beirut, 1987.
Ibn Ẓāfir, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, Irbid, 1999, 2.
Minorsky V., Studies in Caucasian History, London, 1953.
Miskawayh, Tajārib al-umam wa taʿāqib al-himam, ed. S. Ḥasan, 5, Beirut, 2003.

[58] **Անանիա Մոկացի**, 256–260:
[59] **Անանիա Մոկացի**, 256:
[60] **Թովմա Արծրունի և Անանուն**, 292–294:

Еремян С., Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, N 3, էջ 6:

Степаненко В., Политическая обстановка в Закавказье в первой половине XI в. (к атрибуции монет Кюрикэ куропалата), «Античная древность и средние века», 1975, вып. 11.

Тер-Гевондян А., Армения и Арабский Халифат, Ер., 1977.

Բարթիկյան Հ., Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 4, էջ 252, 255:

Բօզոյեան Ա., Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերը, «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:

Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 35, 48:

Երեմյան Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», N 2, Եր., 1947, էջ 109, 111:

Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:

Իբն ալ-Ասիր. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:

Լալայան Ե., Վասպուրականի նշանավոր վանքերը, «Ազգագրական հանդես», 1919, գիրք XX, N 2, էջ 210:

Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:

Կոստանդին Ծիրանածին. Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862:

Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

«Մատենագիրք Հայոց», Ժ. հ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009:

«Մատենագիրք Հայոց», ԺԱ. հ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:

Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը), աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:

Յուզբաշյան Կ., Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հացեատերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, N 1, էջ 36–37:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Եր., 2011:

Տեր-Ղևոնդյան Ա., Հաղբատի հայերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «Լրաբեր հաս. գիտ.», 1979, N 1, էջ 73–80:

Տեր-Ղևոնդյան Ա., Մունաջջիմ-Բաշիի XI–XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 477:

Քարթլիի մատյան, թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, N 9, էջ 74:

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
Երևանի պետական համալսարան
Armyegh@yahoo.com

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻՆ՝ «ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ ԵՎ ՎՐԱՑ»

Բանալի բառեր. Գագիկ Արծրունի, թագադրություն, Բագրատունիներ, Անանուն, իշխանաց իշխան, շահնշահ, Վասպուրականի թագավոր, Հայոց թագավոր, թագավոր Հայոց և Վրաց, Աբաս:

907 թ. Գագիկ Արծրունին արաբական ութմանիկների ցեղախմբից վերագրավեց Ամյուկ բերդը Բզնունյաց ծովի հյուսիսարևելյան ափին: Սմբատ Ա-ի զորքերն արշավեցին դեպի Ամյուկ, գրավեցին այն, որից հետո բերդը վաճառվեց Գագիկին: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ այդ իրադարձությունը, ինչպես նաև այն, որ նույն ժամանակ Սմբատ Ա-ն մերժեց Գագիկի՝ Նախճավանը իրեն հանձնելու խնդրանքը, հանգեցրեց նրան, որ Վասպուրականի իշխանը սկսեց փնտրել Հայոց թագավորության դեմ թշնամական դիրք բռնած Ատրպատականի Յուսուփ ամիրի օժանդակությունը: Վերջինս Հայոց թագավորությունը տրոհելու և Սմբատ Ա-ի հզորությունը խորտակելու նպատակով 908 թ. թագադրեց նրան:

Արդեն Սմբատ Ա-ի գերեվարումից (913 թ.) հետո, ըստ Անանունի՝ Յուսուփը «տեսեալ եթէ ոչ ոք է որ կարողանայ տիրել եւ ունել զաշխարհս Հայոց, բայց միայն Գագիկ ..., թագաւորեցուցանէ զնա ի վերայ ամենայն Հայոց: Եվ եդեալ թագ ի գլուխ նորա...»: Իսկ թագադրությունից ու զորահանդեսից հետո Յուսուփը «տայ ի ձեռս նորա (իմա՛ Գագիկ Արծրունու – Ա.Ե.) զբոլոր Հայաստան աշխարհս...»:

Խալիֆը 914 թ. իր կողմից ևս թագ է առաքում՝ նրան վստահելով նաև արքունի հարկի հավաքումն ու փոխանցումը:

Գագիկ Արծրունու՝ երրորդ անգամ թագավոր հռչակվելու փաստը կապված էր մի շատ կարևոր իրողության հետ: Խնդիրն այն է, որ նախկինում Գագիկ Արծրունուն Հայոց թագավոր էր հռչակել Յուսուփը: Այժմ, երբ անհրաժեշտ էր Գագիկ Արծրունուն օգտագործել նրա դեմ, խալիֆը հարկ համարեց նրան թագ ուղարկել՝ հռչակելով Հայոց թագավոր:

Իսկ Ատրպատականի դեմ հանդես գալու պատճառ Գագիկ Արծրունին ուներ: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Յուսուֆի ձերբակալումով նրա սպառնալիքից փրկվեց Գագիկ թագավորը, այսինքն՝ այդ շրջանում՝ 918–919 թթ. սրվել էին նախկին դաշնակիցների հարաբերությունները:

Այդ շրջանում Գագիկ Արծրունին ինքն իրեն «Հայոց թագավոր» էր կոչում, որի վկայությունը 915–921 թթ. կառուցված Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու արձանագրություններից մեկի՝ «կտակի իմով ձեռամբ Գագկա Հա[յ]ոց արքայիս» գրությունն է:

Անանուն պատմիչը տեղեկացնում է, որ Յուսուֆը ձերբակալվելուց տարիներ անց ազատվելով գերությունից և նշանակվելով Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ՝ անձամբ Հայաստան չի գալիս, այլ կառավարիչներ է առաքում, իսկ Գագիկ Արծրունուն թագ է ուղարկում՝ հաստատելով նրա իշխանությունը Հայաստանում:

Անանունն այնուհետև տեղեկացնում է, որ եղբոր մահից (927) հետո Գագիկ Արծրունին «միապետեալ զբոլոր աշխարհս Հայաստան, ... բազմացուցանէ զխաղաղութիւն ի Հայաստան աշխարհի»: Ի վերջո, պատմիչը հաղորդում է, որ Գուրգեն Արծրունու մահվան առիթով հայտարարված սուգն անցնելուց հետո Յուսուֆը «տայ ի ձեռս արքայի (իմա՛ Գագիկ Արծրունու) զաշխարհս Հայոց եւ Վրաց, եւ ուխտ խաղաղութեան եդեալ, գնայ յերկիրն Պարսից»:

Միաժամանակ, Բագրատունիների՝ սկզբում Հայոց և Վրաց իշխանաց իշխան, այնուհետև՝ Հայոց և Վրաց թագավոր ու, վերջապես, Հայոց և Վրաց շահնշահ (թագավորաց թագավոր) հանդիսանալն ու համապատասխան տիտղոսներ կրելը հայկական և օտար աղբյուրներում ունի հստակ ու անխափան հետագիծ, որը միայն մի զահակալի պարագայում է, որ ընդհատվում է: Խոսքը հենց Աբասի մասին է, որը Գագիկ Արծրունու ժամանակակիցն էր: Աշոտ Ա-ն (887–89 նախքան թագավորելը 30 տարի եղել է Հայոց և Վրաց իշխանաց իշխան: Ըստ Թովմա Արծրունու՝ խալիֆայի կողմից «հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»: Աշոտ Ա-ի որդի Սմբատը թագավորեց՝ «տիրելով բոլոր հայրենեաց իւրոց՝ Հայոց եւ Վրաց»: Ըստ Ս. Երեմյանի՝ այս ամենի հիման վրա կատարած հիմնավոր եզրահանգման՝ Բագրատունի արքաները հանդիսացել են «թագավոր Հայոց և Վրաց»՝ կրելով համապատասխան տիտղոսը:

Բագրատունիների՝ «Հայոց և Վրաց իշխանաց իշխան», իսկ այնուհետև՝ «Հայոց և Վրաց թագավոր» հանդիսանալու իրողությունն արտացոլված է նաև արաբական աղբյուրներում: Ըստ իբն Ջաֆիրի՝ Հայաստանի գահակալը հանդիսանում էր «թագավոր Հայոց և Վրաց» (ملك ارمينية و جرزان, բառացի՝ «Հայաստանի և Վրաստանի թագավոր»):

Ավատատիրական հարաբերությունների խորացումն իր կնիքը թողեց նաև խնդրո առարկա տիտղոսի բովանդակության վրա: Վերջինս շուտով նոր ձևակերպում ստացավ: 919 թ. ձերբակալված Յուսուֆի փոխարեն կառավարիչ նշանակվեց Սբուքը: Նշանակվելուն պես նա խաղաղություն հաստատեց Աշոտ Երկաթի հետ՝ նրան ճանաչելով շահնշահ, այսինքն՝ գերագահ թագավոր երկրում գոյություն ունեցող այլ թագավորների նկատմամբ: Ասողիկի տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»: Խոսքը մասնավորապես Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու և Ատրներսեհ (հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունու մասին է:

Փաստորեն Աշոտ Երկաթը խալիֆի կողմից հռչակվել է որպես «Շահնշահ Հայոց և Վրաց», այսինքն՝ ճանաչվել է նրա գերագահությունը մյուս թագավորությունների (Վրաց, Աղվանից) նկատմամբ:

Աշոտ Բ-ի՝ Հայոց և Վրաց շահնշահ կամ թագավորաց թագավոր հռչակվելուց հետո Բագրատունի արքաների շրջանում հիմնականը դարձավ «շահնշահ» տիտղոսը, թեև Աբասը այն այդպես էլ չժառանգեց: Ըստ մի արաբական աղբյուրի՝ մոտ 953 թ. «Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշութ իբն ալ-Աբբաս [հմմ՛ Աշոտ՝ որդի Աբասի (953–977 թթ.) – Ա. Ե.] և Շահնշահ տիտղոսն էր կրում: Սա փորձեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել: Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից...»: Աշոտ Գ-ն, փաստորեն, ծանրակշիռ դիրք ուներ Կովկասյան լեռնականների շրջանում, որի վկայությունն է լեզգիների զորքի մասնակցությունը Դվինի ազատագրման ձախողված գործողությանը: Աշոտ Գ-ի՝ շահնշահ հանդիսանալու իրողությունը փաստված է այլ աղբյուրներում ևս:

«Շահնշահ» տիտղոսը կրում էր նաև Սմբատ Բ-ն (977–989 թթ.): Հայկական ու վրացական աղբյուրներում Գագիկ Ա Բագրատունին (989–1017 թթ.) համարվում էր «շահնշահ Հայոց և Վրաց» և կամ պարզապես «շահնշահ»:

Ակնհայտ է, որ «իշխանաց իշխան Հայոց և Վրաց»-ից Աշոտ Մեծի թագադրումից հետո անցում է կատարվել «թագավոր Հայոց և Վրաց»-ի, իսկ Աշոտ Բ-ի օրոք՝ «շահնշահ Հայոց և Վրաց»-ի: Այդ կարգավիճակն ունեցողին Բյուզանդիայի արքունիքը պաշտոնական գրագրության մեջ անվանում էր «[Մեծ Հայքի] իշխանաց իշխան»: Դա արտացոլում էր նրա գերագահ դիրքն Այսրկովկասում:

Գագիկ Արծրունու՝ «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը ստանալն ու պահպանելը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ Աշոտ Երկաթի հաջորդ Աբասը «շահնշահ» չէր կոչվում, իսկ նրանից հետո՝ Աշոտ Գ-ն հիշատակվում էր «շահնշահ» տիտղոսով: Բյուզանդական արքունիքն էլ, իր հերթին, ար-

ձազանքելով Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններին, Գագիկ Արծրունուն կոչում է «իշխանաց իշխան», իսկ Աբասին՝ պարզապես «մագիստրոս»:

Կարծում ենք, որ 927 թ. Գագիկ Արծրունուն «Հայոց և Վրաց թագավոր» հռչակելը կապված էր Հայաստանում տեղի ունեցող հույժ կարևոր զարգացումների հետ: Ըստ Ասողիկի՝ Աշոտ Երկաթը, ի վերջո, երկար տարիների պայքարից հետո «հալածական առնէ զԻսմայէլացւոց զաւրն յաշխարհէս Հայոց»:

Սակայն, Հայոց Միջնաշխարհին՝ Այրարատին տիրելու անհնարինությունն ի վերջո Գագիկ Արծրունուն պետք է վերադարձներ «ի շրջանս իւր», որն էլ արտահայտվեց Այրարատի մեծ մասի տեր Աբաս թագավորի հետ դաշինքով և փաստացիորեն միայն Վասպուրականի թագավոր մնալով, թեև մինչ ի մահ, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, de jure հանդիսանում էր «Հայոց թագավոր»: Նրան հիջրայի 326 թ. (937 թ. նոյեմբեր – 938 թ. հոկտեմբեր) դեպքերի կապակցությամբ որպես «Հայերի թագավոր» (ملك الارمن) է հիշատակում նաև Միսքավայհը:

Գագիկ Արծրունին իրեն վերապահեց նաև գործնական քայլեր, ըստ որում՝ այն ժամանակ, երբ Հայոց գահին արդեն բազմել էր Աբաս Բագրատունին (929–953): 930-ական թթ. սկզբին Գագիկ Արծրունին մի նամակ հղեց Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Ա Լեկապենոսին (920–944 թթ.)՝ խնդրելով հայերեն վերցնել իր հովանու ներքո: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ միայն Հայոց թագավորը կարող էր նման բովանդակությամբ թուղթ գրել կայսրին՝ խոսելով ողջ հայության անունից և նրան խոստանալով ոչ միայն հարկատու դառնալ, այլ նաև՝ հաղորդակից հունական եկեղեցուն: Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակ Վասպուրականում էր գտնվում նաև կաթողիկոսանիստը, ապա պարզ կդառնա, որ նման նամակը միայն Վասպուրականի թագավորության կամ թագավորի անունից գրվել չէր կարող: Այն, որ նման նամակ գրվել է և դա ունեցել է լուրջ հետևանքներ, հիմնավորվում է հիջրայի 319 թվականով (931 հունվար – 932 հունվար) թվագրված Իբն ալ-Ասիրի մի հիշատակությամբ, ըստ որի՝ «այդ տարում Իբն ալ-Դայրանին (իմա՛ Դերենիկի որդին, այսինքն՝ Գագիկ Արծրունին – Ա.Ե.) և Հայաստանի ծայրամասային [գավառների] այլ հայազգի [իշխաններ] գրեցին հոռոմներին, դրդելով հարձակվել իսլամի երկրի վրա և խոստանալով իրենց օգնությունը: Հոռոմները մեծ բազմությամբ հարձակվեցին, ավերեցին Բերկրին, Խլաթը իր շրջակայքով, մահմեդականներից շատերին սպանեցին և մեծ բազմություն գերեցին»: Փաստորեն, արաբ պատմիչի տեսանկյունից հենց Գագիկ Արծրունին էր Հայաստանի իշխողը, որն էլ համախմբելով երկրի մյուս իշխաններին՝ օգնության համար դիմել է Բյուզանդիային: Ի դեպ, խիստ հավանական է, որ խոսքը միևնույն իրադարձության մասին է: Իսկ դա նշանակում է,

որ 930-ական թթ. սկզբին Գագիկ Արծրունու հորդորով Հայաստան են ներխուժել բյուզանդական զորքերը, թեև նամակում նման խնդրանք չկա:

Գագիկ Արծրունու նոր կարգավիճակի և իրական դիրքի մասին են վկայում Կոստանդին Ծիրանածնի հետևյալ հաղորդումները: Հայտնի է, որ նախկինում Բյուզանդիան որպես Մեծ Հայքի իշխանաց իշխան էր ճանաչում Աշոտ Երկաթին: Վերջինիս մահից հետո, ինչպես վկայում է Կոստանդին Ծիրանածինը, Գագիկ Արծրունին «իշխանաց իշխանի պատիվն է ստացել», այսինքն՝ գրավել Աշոտ Երկաթի տեղը: Կարևոր է նաև Կոստանդին Ծիրանածնի մյուս տեղեկություն, թե Վրաց իշխողները Բյուզանդիայի կայսեր՝ Թեոդոսուպոլիսը (-Կարնո քաղաք) գրավելու մտադրության հետ կապված ասում էին, որ այդ պարագայում բյուզանդացիները կզրկվեն «Վասպուրականիտեսի (իմա՛ վասպուրականցի կամ Գագիկ Արծրունի-Ա.Ե.) և հայերի [մյուս] իշխանների հարգանքից»: Փաստորեն, Գագիկ Արծրունին համարվում էր Հայաստանի ամենաբարձր հեղինակությամբ իշխողը, ուստի՝ կայսերն առաջարկվում էր պատվիրակ ուղարկել Հայաստան՝ հետևելու իրավիճակին:

Այն, որ Գագիկն իրոք կրել է «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը, այսինքն՝ մի պահ «զբաղեցրել» Բագրատունիների տեղը, հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ Բագրատունի հաջորդ գահակալը՝ Աբասը, բյուզանդական աղբյուրներում հիշատակված է որպես «մագիստրոս», քանի որ իշխանաց իշխանի տիտղոսը, այսինքն՝ այս պարագայում՝ Հայոց և Վրաց թագավորի տիտղոսը, պատկանում էր Գագիկ Արծրունուն:

930-ական թթ. երկրորդ կեսի և 940-ական թթ. սկզբի հայ իրականության մեջ երկու Հայոց թագավորների գոյության իրողությունը լավագույնս արտացոլված է Անանիա Մոկացու թղթերում, որտեղ նաև փորձ է կատարվում «հաշտեցնելու» երկու թագավորների տիտղոսների հակադրությունը: Նա գրում է. «յաւուրս ... երկոցունց ինքնակալացն Հայոց թագաւորացն ... Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ ... Աբասայ Բագրատունոյ ... Մեծի Հայոց արքայի»: Փաստորեն, զուգահեռաբար գոյություն ունեն երկու Հայոց թագավորներ, որոնք միմյանց չեն հակադրվում, ավելին, երբեմն նույնիսկ աջակցում են իրար, ինչպես դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Աբասը պարտություն կրեց Հայաստան ներխուժած թշնամուց, իսկ Գագիկ Արծրունին օգնության գնաց նրան և ջախջախեց հակառակորդին: Փաստորեն, Աշոտ Երկաթի մահից հետո մինչև 940-ական թթ. սկիզբը Գագիկ Արծրունին Հայաստանի քաղաքական թատերաբեմում ձեռք էր բերել խիստ էական դերակատարություն:

АРМАН ЕГИАЗАРЯН
Доктор исторических наук
Ереванский государственный университет
Armyegh@yahoo.com

ГАГИК АРЦРУНИ – «ЦАРЬ АРМЕНИИ И ГРУЗИИ»

РЕЗЮМЕ

Ключевые слова: Гагик Арцруни, коронация, Багратиды, Анонимный автор, князь князей, шахншах, царь Васпуракана, царь Армении, царь Армении и Грузии, Абас.

В 907 году Гагик Арцруни захватил крепость Амюк на северо-восточном побережье Ванского озера. Войска Смбата I сразу же атаковали Амюк, взяли штурмом, а потом царь продал крепость Гагику. По словам армянского католикоса и автора Ованнеса Драсханкертци, это событие, а также тот факт, что в то же время Смбат I отклонил просьбу Гагика по передачи ему во владение региона Нахчаван, стал причиной того, что князь Васпуракане начал стремиться к покровительству эмира Атропатены Юсуфа, который к тому времени принял враждебную позицию в отношении Армянского царства. Он короновал Гагика в 908 г. в качестве царя Васпуракана.

Уже после того, как Смбат I был взят в плен в 913 г. Аноним пишет, что Юсуф «не видел кого-нибудь кроме Гагика в качестве правителя Армении и сделал его царем Армении. И короновал его ...». После коронации Юсуф «отдал ему всю Армению». Халиф послал ему корону от своего имени в 914.

Факт третей коронации Гагика Арцруни был связан с очень важным событием. Вопрос в том, что Гагик Арцруни получил корону от Юсуфа раньше. Теперь, когда было необходимо использовать его против Юсуфа, халиф счел необходимым послать ему корону и заново провозгласить его царем Армении.

В этот период Гагик Арцруни называл себя «царем Армении». В одной из надписей собора Святого Креста на острове Ахтамар, построенный в 915‒921 гг., сохранился надпись: «Гагик, царь Армении».

По информации Анонимного автора, когда Юсуф после нескольких лет ареста был восстановлен на посту правителя Атропатены, он прислал Гагику Арцруни новую корону и провозгласил его властителем Армении. Примечательно, что согласно Анонимному автору эти события имели место в 927 году.

Анонимный автор также сообщает, что после смерти своего брата Гургена в 927 г. Гагик Арцруни «стал властителем всей Армении».

По всей вероятности, выражение «передал царю правление Армении и Грузии» означает, что Гагик Арцруни был провозглашен «царем Армении и Грузии», присвоив соответствующий титул, который был привилегией Багратидов. В противном случае, с фактической точки зрения править Грузией для него было невыполнимой задачей, так же как и правление во всей Армении, хотя он и был провозглашен царем Армении несколько раз.

Это подтверждается тем фактом, что принадлежность Багратидам титула «князя князей Армении и Грузии» в начале, затем титула «царя Армении и Грузии», и, наконец, «Шаханшаха (царя царей) Армении и Грузии» имеет почти непрерывную траекторию в армянских и иностранных источниках, что прерывается только в случае одного царя – Абаса (929–953). Последний был современником Гагика Арцруни. Ашот I (887–891) был князем князей Армении и Грузии в течение 30-и лет до коронации, а его преемник Смбат I «унаследовал вотчину свою – Армению и Грузию». С. Еремян заключает, что Багратиды являлись «царями Армении и Грузии» и им было присвоено соответствующий титул. Этот факт отражается также и в арабских источниках. Согласно Ибн Зафиру царь Армении носил титул «царя Армении и Грузии».

Развитие феодальных отношений оставил свой глубокий отпечаток на содержание этого титула. В 919 г. Сбук, который заменил арестованного Юсуфа на посту правителя Атропатены, сразу же после своего назначения он заключил мир с Ашотом Еркатом и провозгласил его шаханшахом, то есть верховным царем над другими царями в стране.

По словам Асохика, после того, как Ашот Еркат изгнал врагов из Армении, он «нашел вассалов отца своего в качестве царей, был правозглашен Шаханшахом, то есть царем царей». В частности, это относится к кузену Ашота Ерката Ашоту, Гагику Арцруни и Атрнерсеху Багратиду (Нерсех в тексте автора).

На самом же деле, не было никаких существенных различий между «царем Армении и Грузии» и «Шаханшахом Армении и Грузии» с территориально-географической точки зрения. Замена титула «царя Армении и Грузии» титулом «Шахиншаха Армении и Грузии» была результатом образования мелких царств в пределах царства Багратидов. Багратидский властитель был уже не единственным царем, но и не был равен другим. Шаханшах / царь Армении и Грузии был первым и высшим царем среди других армянских и закавказских царей.

Титул «Шаханшаха» стал главным среди Багратидов, но Абас не унаследовал его, хотя его сын Ашот III (953–977) носил етот титул. По словам арабского источника, около 953 г. «В провинции Джурзан (Грузия) и других частях Армении был царь по имени Ашот б. 'Аббас [Ашот-сын Абаса – А. Е.], носящий титул Шаханшаха». Ашот III имел весьма серьезную позицию также среди кавказских горцев, что подтверждается участием войск лезгинов в безуспешной атаке Двина войсками Ашота.

Армянский царь Смбат II (977–989) также носил титул «Шахиншаха». В армянских и грузинских источниках Гагик I (989–1017) упоминается в качестве «Шаханшаха».

Провозглашение Гагика Арцруни «царем Армении и Грузии» в 927 был связан с событиями огромной важности, происходящих в Армении. По словам Асохиком, после долгих лет борьбы Ашот Еркат наконец «изгнал арабские войска из Армении». Это событие имело место после событий 927 года, когда во время вторжения византийской армии Ашот Еркат участвовал в защите Двина вместе с арабским войском во главе Насра ал-Субуки. По всей вероятности, Гагик Арцруни был провозглашен «царем Армении и Грузии», когда Ашот Еркат начал борьбу освобождения Армении. Скорее всего, Юсуф этим хотел использовать его против Ашота Ерката.

Но невозможность его господства над армянским средиземьем Айраратом в конечном итоге вернул Гагика Арцруни «в круги свои». Фактички он оставался царем Васпуракана, хотя, по словам Анании Мокаци до смерти он деюре являлся «царем Армении».

Сведения Константина Багрянородного также подтверждают новый статус и реальное положение Гагика Арцруни. Известно, что ранее Византия признавала в качестве «князя князей Великой Армении» Ашота Ерката. По словам автора, после смерти последнего Гагик Арцруни являлся «князем князей великой Армении», то есть ему перешло статус Багратидского царя.

Тот факт, что Гагик действительно заполучил титул «царя Армении и Грузии», подтверждается также тем обстоятельством, что царь Абас Багратид в византийских источниках упоминается как «Магистр».

На самом же деле Абас являлся царем Армении, хотя Гагик Арцруни также носил титул царя Армении. Этим титулом в 938 г. он упоминается Мискавайхом. А титул «царя Армении и Грузии», несомненно, по-прежнему остался в списке титулов Гагика Арцруни.

Факт существования двух царей Армении в армянской действительности второй половины 930 и в начале 940 гг. ярко отражено в записках Анании Мокаци, где он делает попытку «примирить» это противоречие. Он пишет: «[произошло это] во время правления двух царей ... самодержавного царя Армении Гагика Арцруни и великого царя Армении Абаса Багратида». Параллельное существование двух царей Армении не означало их противостояние. Они были в союзнических отношениях. Когда Абас потерпел поражение от врагов, именно Гагик Арцруни пришел на помощь и уничтожил врага.

Подводя итог, можно отметить, что Гагик Арцруни был провозглашен царем Васпуракана, далее – царем Армении, а в конце – получил титул «царя Армении и Грузии». Этот титул ранее принадлежал Багратидам. Деятель, носящий этот титул признавался «Шаханшахом» со стороны Халифата и «князем князей» со стороны Византии.

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
aramkosyan@yahoo.com

ՀԱՅԱՍԱՅԻ ԱՐՔԱՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազ. պետականությունների քաղաքական դաշտում առանձնահատուկ տեղ ունեն դրանցից երկուսը՝ Հայասան և Ազզին[1], որոնք հայագիտական ուսումնասիրություններում սովորաբար աղերսվում են հայոց հնագույն պետականության և «հայ» ցեղանվան հետ: Եթե Հայասա երկրանվան առնչակցությունը «հայ» ցեղանվանը դժվար է վիճարկել, ապա շատ ավելի բարդ է այս պետության տեղադրության հարցը: Ավանդական տեղադրությունը Բարձր Հայքում, որն առկա է մասնագետների մի զգալի մասի մոտ[2], մի շարք հիմնավոր փաստարկների լույսի ներքո հնարավոր է կասկածի տակ առնել: Վերջիններս նշում են Հայասայի (հնարավոր է, նաև Ազզիի) մոտավոր տեղը Վանա լճի արևմտյան և հյուսիսարևմտյան մերձափնյա գոտում[3], թերևս, ընդգրկելով նաև Բյուրակնի լեռնաշղթան կամ առնվազն դրա մի հատվածը[4]:

Հայասայի և Ազզիի պատմության ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեն այս քաղաքական միավորների արևմտյան հարևան Խեթական տերության հետ կնքված միջպետական պայմանագրերն ու այլ տեքստերը, որոնք ի վիճակի են լուսաբանելու ինչպես նրանց քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, այնպես էլ վերջինիս հետ ունեցած դարավոր փոխառնչությունների բնույթը: Այս խնդիրների ուսումնասիրության համար առանձնակի կարևորվում են մ.թ.ա. XIV դարում Հայասայի և Խեթական տերության փոխհարաբերություններն արտացոլող

---

[1] Այս երկու պետական կազմավորումների նույնականության մասին տեսակետը, որ գերիշխում է մասնագիտական գրականության մեջ, իրականում որևէ լուրջ հիմնավորում չունի (այդ մասին տե՛ս **Քոսյան,** 2008, 275–276):

[2] Հայասայի և Ազզիի տեղադրության վերաբերյալ արտահայտված տեսակետների համահավաքը տե՛ս **Քոսյան**, 2004ա, 44–45, 48–50:

[3] **Քոսյան**, 2013, 48–63: **Kosyan,** 2015, 271ff., նաև **Ղազարյան**, 2013, 113–117:

[4] Քանի որ Հայասայի և Ազզիի հարաբերակցության խնդիրը առայժմ վերջնական լուծում չի ստացել, ստորև տեքստում օգտագործվում է միայն Հայասա տերմինը:

երկու պայմանագրեր[5]: Առաջինը խեթական արքայի (ամենայն հավանականությամբ՝ Թուդխալիյաս III-ը) և Հայասայի կառավարիչ Մարիյայի, իսկ երկրորդը խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի կառավարիչ Խուկկանայի միջև կնքված պայմանագրերն են:

Սույն հոդվածում կքննարկվեն երկու խնդիրներ՝ ա) խեթա-հայասական երկու պայմանագրերի բնույթը, բ) պայմանագրերում ներկայացված հայասական կառավարիչների կարգավիճակը և ազգակցական հարաբերությունները, ինչպես նաև 3) քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական համատեքստը[6]:

Պայմանագրերի բնույթը

Խեթական տերության և Հայասայի միջև կնքված երկու պայմանագրերն էլ պատկանում են դիվանագիտական դաշտում՝ պետությունների փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրերի ոչ-պարիտետային տեսակին[7]: Հայասան այստեղ հանդես է գալիս որպես ոչ իրավահավասար կողմ: Այս հանգամանքը հստակ արտացոլված է պայմանագրերի գրեթե բոլոր հատվածներում, որտեղ ակնառու է հայասական կողմի վերցրած (ավելի ճշգրիտ՝ պարտադրված) պարտականությունների բացահայտ գերակշռությունը խեթականի հանդեպ: Ըստ էության, խեթական արքայի պարտավորությունները հանգում են միայն Խուկկանայի անձի և ընտանիքի անդամների պաշտպանությանը (§§ 5–6): Բացի այս հատվածից, տեքստերում ուղղակի բացակայում է փոխադարձության սկզբունքը:

Խեթական կողմի պայմանները, որոնք առկա են երկու պայմանագրերում, լավ զուգահեռվում են Խաթթիի և կախյալ պետությունների միջև

[5] Խեթա-հայասական պայմանագրերի ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (13–6A389, 2013 թ. հուլիս – 2015թ հուլիս):

[6] Հոդվածը տեքստային հղումներով չծանրաբեռնելու նպատակով մենք ուղղակի նշում ենք պայմանագրերի համապատասխան հատվածները: Ծրագիրն ամփոփող կոլեկտիվ մենագրության մեջ դրանք կներկայացվեն ամբողջությամբ: Այստեղ տեքստի վրա հղումների համար կիրառվում են հետևյալ հապավումները՝ ԴԿ = Դիմային կողմ, ՀԿ = Հակառակ կողմ: Խեթական տեքստերը և դրանց կատալոգը հղվում են համաձայն գիտական պրակտիկայում ընդունված հետևյալ համառոտագրությունների՝ Keilschrifttexte aus Boghazköi (= KBo), Keilschrifturkunden aus Boghazköy (= KUB), Laroche 1971 (= CTH), Hittite Texts in the British Museum (= HT):

[7] Հայագիտական հրատարակություններում այս փաստն արձանագրված էր դեռևս Գր. Ղափանցյանի մոտ (Капанцян 1948: 115сл.): Խեթական տերության և կախյալ երկրների միջև կնքված ոչ-պարիտետային պայմանագրերի մասին տե՛ս **Korosec,** 1931, 65ff.: Այդպիսի պայմանագրերի գերակշիռ մասը թվագրվում է հոդվածում քննարկվող պայմանագրերից հետո ընկած շրջանով, այն է՝ մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսից մինչև հաջորդ դարի 30-ական թվականներն ընկած ժամակահատվածով (խեթական արքաներ Մուրսիլիս II, Մուվատալլիս II, Խաթթուսիլիս III և Թուդխալիյաս IV կառավարման շրջանով):

կնքված մյուս պայմանագրերին[8]: Դրանք հիմնականում հանգում են հետևյալ կետերին, որոնք ամենուրեք կրկնվում են՝

1) լոյալություն արքայի անձի, արքայական ընտանիքի անդամների, նրա սերնդի և Խաթթիի հանդեպ[9]:

2) պատերազմի դեպքում ռազմական աջակցություն. շատ դեպքերում հատուկ նշվում է, որ կախյալ երկրի անմիջական հարևանությամբ թշնամական ուժերին առաջինը պետք է հակահարված տա հենց տվյալ երկրի զինուժը, նախքան խեթական զորքի հասնելը:

3) արգելք երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերությունների վրա. այս կետը հատուկ շեշտվում է բոլոր ոչ-պարիտետային պայմանագրերում[10]:

Քննարկվող պայմանագրերն ունեն մեկ տարբերիչ առանձնահատկություն: Խուկկանայի պայմանագիրը կնքված է իր պետությունը լիարժեք ներկայացնող իրավական անձի (Խուկկանա), իսկ ավելի վաղ ժամանակով թվագրվող երկրորդը՝ հավաքական կողմի (Մարիյա և «Հայասայի ժողովուրդ») հետ: Վերջինս իր բնույթով ստորադասվում է Խուկկանայի պայմանագրին և զուգահեռվում է այս տարածաշրջանի երկրների հետ կնքված մյուս պայմանագրերին՝ KUB XXIII 72+[11], KUB XXVI 29+KUB XXXI 55[12], նաև Առնուվանդաս I-ի կասկական պայմանագրերը[13]: Այստեղ խեթական արքայի հետ պայմանագիր կնքողները տոհմային ավագանու ներկայացուցիչներն են (LÚ^{MEŠ} «մարդիկ», LÚ^{MEŠ} ŠU.GI «ավագներ»)[14]:

Մյուս պայմանագրերի համեմատ, Խուկկանայի պայմանագիրը Խեթական տերության դիվանագիտական պրակտիկայում անցումային փուլ է ներկայացնում. միայն քիչ ավելի ուշ, Սուպպիլուլիումասի սիրիական արշավանքից հետո է ձևավորվում պայմանագրերի դասական տիպը[15]:

[8] Պայմանագրերի հրատարակությունները տես՝ **Weidner,** 1923, **Friedrich**, 1926–1930, **Beckman**, 1996:

[9] Երբեմն այս կետը, ուղղակի ձևակերպումից բացի, լրացվում է արքայի անձի մասին զանազան թշնամական խոսքեր չլսելու, այդ մասին նրան տեղեկացնելու պահանջներով (տե՛ս ԴԿ II 32–38, 52–59):

[10] Այս կետը հատկապես շեշտվում է բոլոր պայմանագրերում:

[11] Տե՛ս **Sayce,** 1930, 1ff. (թարգման.); **Gurney,** 1948, 32ff. (թարգման.); **Kosyan,** 2006, 72ff. (զիտական տառադարձում, թարգմ. և ծանոթ.):

[12] CTH 144 (հրատարակվել է հատվածաբար՝ **Otten,** 1967, 55–61).

[13] KBo VIII 35 (= CTH 139 [հրատ.՝ **Schuler von,** 1965, 109ff.]); KUB XXVI 19, KUB XXVI 20 + KBo XXII 132 (= CTH 140 [հրատ.՝ **idem,** 130ff.]) և այլն:

[14] Խեթական տերության հետ նվաճված երկրների փոխհարաբերություններում տոհմային ավագանու դերի մասին տես՝ **Klengel,** 1965, 223–236:

[15] Դեռ Է. Ֆորրերն էր նկատել, որ, ի տարբերություն մյուս բոլոր պայմանագրերի, այստեղ վկա-աստվածների ցուցակը ոչ թե եզրափակում է պայմանագիրը, այլ դրված է առաջին մասում (**Forrer,** 1931, 9): Սա վերաբերում է առաջին հերթին Սուպպիլուլիումասի՝ ավելի ուշ շրջանում

Հայասայի և Ազզիի դինաստիական խնդիրներ

Քննարկվող պայմանագրերում և խեթական այլ տեքստերում Հայասայի և Ազզիի կառավարիչների փոխհարաբերակցության խնդիրը ներկայումս բավարար չափով ուսումնասիրված չէ, չնայած այն հանգամանքին, որ նրանց կառավարման հաջորդականությունը որևէ կասկած չի հարուցում:

Հայասայի և Ազզիի կառավարիչների անունները պահպանվել են հետևյալ խեթական տեքստերում.

Սուպպիլուլիումասի գործունեությունը – «Դիպված 13»[16]

«Թուդխալիյաս III – Մարիյա» պայմանագիրը[17]

«Սուպպիլուլիումաս – Խուկկանա» պայմանագիրը[18]

Մուրսիլիս II-ի տարեգրությունները[19]

HT 85[20]

KBo L 49[21]

KUB XVIII 2

Այս ոչ մեծ խմբում ներկայացված են ընդամենը չորս անուններ՝ Կարաննի (կամ Լաննի), Մարիյա, Խուկկանա և Աննիյա:

Սրանցից միայն Կարաննիի կառավարման ժամանակն է հստակ, այն է՝ Թուդխալիյաս III-ի կառավարման վերջին շրջանը, երբ արքան գահակից Սուպպիլուլիումասի հետ միասին ճակատամարտ է տալիս Կումմախայի մոտ (տես ստորև): Ինչ վերաբերում է Մարիյային, ապա նա հանդես է գալիս որպես խեթական անանուն արքայի հետ կնքված պայմանագրի մի կողմը, և ում անձը, հաշվի առնելով Սուպպիլուլիումասի և Խուկկանայի պայմանագրում հիշատակվող և Սուպպիլուլիումասի հոր (այն է Թուդխալիյաս III-ը) կողմից Խաթթուսասում մահապատժի ենթարկված Մարիյա անունը կրող անձի հետ համադրումը, պետք է նույնական լինեին: Սրանից կարծես բխում է, որ Մարիյան Թուդխալիյասի ժամանակակիցն է եղել, ում կյանքն ավարտվել է դեռևս նրա կենդանության օրոք, այսինքն Կումմախայի ճակատամարտից քիչ առաջ կամ հետո:

(սիրիական պատերազմներից հետո) կնքած պայմանագրերին (CTH 51 – «Միտտանիի արքա Շատտիվազա», CTH 53 - «Նուխաշշեի արքա Տետտե», CTH 49 – «Ամուրրուի արքա Ազիրու»):

[16] **Güterbock,** 1956, 66, Fragm. 13.

[17] **Friedrich,** 1930, 103ff.; **Beckman,** 1996, 22ff.

[18] **Idem.**

[19] **Götze,** 1933, passim. Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրությունների» հայերեն հրատարակությունը տե՛ս **Ղազարյան** 2013:

[20] **Carruba,** 1988, 71.

[21] **Carruba,** 1988, 72.

Սակայն այնուհետև ծագում են լուրջ խնդիրներ կապված արևելքում Սուպպիլուլիումասի ռազմաքաղաքական ձեռնարկումների ժամանակագրության հետ, որոնք պահպանվել են «Սուպպիլուլիումասի գործունեությունը» անվանումը կրող ընդարձակ տեքստերում[22]: Բացառությամբ առաջին երկու աղյուսակների, մյուսների տեղը Սուպպիլուլիումասի կառավարման ժամանակագրության մեջ շատ դեպքերում պայմանական է և հստակ չէ:

Առաջին հերթին դա վերաբերում է «Դիպված 13»-ից հետո մինչև «Դիպված 25»-ն ընկած ժամանակահատվածին, այն է Կումմախայի ճակատամարտից մինչև Սուպպիլուլիումասի կողմից դեպի Իսուվա և այնտեղից էլ Հայասա արշավանքը, որի նպատակը այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձնելն էր: Հենց այս ժամանակահատվածում, ըստ գաղափարի, պետք է տեղադրել 1) Մարիյայի կառավարումը, 2) նրա մահապատիժը Խաթթուսասում և, ամենայն հավանականությամբ, 3) Խուկկանայի պայմանագիրը: Ստորև կտեսնենք նաև, որ, հավանաբար, վերոհիշյալ իրադարձություններին կարելի է հավելել նաև Խուկկանայի կառավարման ավարտը:

Առաջին ժամանակահատվածի սկիզբը, անկասկած, պետք է թվագրվի Թուդխալիյաս III-ի կառավարման վերջին տարիներով, այն է 1350–1345 թթ. միջև: Ինչ վերաբերում է դրա ավարտին, ապա այն, ամենայն հավանականությամբ, պետք է տեղի ունենար ինչ-որ մի պահ դեպի Իսուվա Սուպպիլուլիումասի կազմակերպած արշավանքից առաջ կամ ընթացքում, նախորդելով Սուպպիլուլիումասի սիրիական առաջին արշավանքին[23]: Այսպիսով, Խուկկանայի կառավարումը կարող էր համեմատաբար կարճատև լինել, սկսվելով Թուդխալիյաս III-ի վերջին շրջանում և ավարտվելով սիրիական արշավանքի նախօրեին, այն է Սուպպիլուլիումասի գործունեության այն ժամանակահատվածով, որն ընկնում է «Դիպված 25»-ի շրջանում: Այսպիսի առաջարկը թեև առայժմ ամուր հիմքեր չունի, սակայն այդ առնչությամբ կարելի է վկայակոչել Խուկկանայի պայմանագրի վերջում առկա խեթական արքայի պահանջը Խաթթիի փախստականներին վերադարձնելու մասին[24]:

Վերոհիշյալ «Դիպված 25»-ում հիշատակվում է դեպի Իսուվա կազմակերպված արշավանքը, որի նպատակն էր դեպի այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձը[25]: Հատկանշական է, որ տեքստում նշվում է Իսուվայից Հայասա ուղղված հավելյալ արշավանքը և այնտեղից խեթական

[22] **Güterbock,** 1956.

[23] Դեպի Իսուվա արշավանքի համար տե՛ս օրինակ, **Bryce,** 2005, 156.

[24] ՀԿ II 84‘) [k]u-iš *ŠA* KUR ^{URU}Ha-at-ti NAM.RA$^{HI.A}$ pa-ra-a *Ú-UL* pa-[a-i na-at *A-NA* ZAG$^{HI.A}$], 85’) [š]a-an-na-a-i na-an zi-ik ^{m}Hu-uq-qa-na-a-aš e-[ep nam-ma(?) hal-lu-u-wa-i] (նույնը B տարբերակում):

[25] Հ. Գյուտերբոկի կողմից հրատարակված համապատասխան տեքստի KUB XL 8 կրկնօրինակը և եզրակացությունները տե՛ս **Klengel,** 1968, 66ff.

փախստական բնակչության վերադարձնելը: Ամենայն հավանականությամբ, Խուկկանան կամ չէր կատարել խեթական արքայի պահանջը կամ այդ պահին նա արդեն զրկվել էր իր իշխանությունից:

Հաջորդ խնդիրը առայժմ չթվագրված «Դիպված 39»-ը և «Դիպված 40»-ն են, որոնց խիստ վնասված տողերում շարադրվում են Հայասայի դեմ իրականացված արշավանքի որոշ մանրամասներ: Հ. Գյուտերբոկը «Դիպված 39»-ը պայմանականորեն տեղադրում էր Սուպպիլուլիումասի սիրիական երկրորդ պատերազմի շրջանով, ինչ վերաբերում է «40»-ին, ապա նա առաջարկում էր կամ «Դիպված 39»-ը կամ «Դիպված 13»-ը[26]: Առայժմ այս հարցում որևէ նոր առաջարկ կատարելը հնարավոր չէ երկու բեկորների վատ պահպանվածության պատճառով, թեև խիստ նախնական ենթադրություն կարելի է կատարել, դրանք տեղադրելով միևնույն «Դիպված 25»-ի շրջանով: Նմանապես առայժմ պետք է ձեռնպահ մնալ նաև Սուպպիլուլիումասի հայասական արշավանքների համատեքստում «Մաշատիյոյուք 96» նամակի ժամանակագրման հարցում: Դատելով այս նամակում հիշատակվող իրադարձությունների տրամաբանությունից (Խաթթիի հյուսիսային, արևելյան և հարավ-արևելյան շրջաններից, այդ թվում նաև Իսուվայում օգնական զորքերի հավաքագրման դժվարությունները, դեպի Հայասա կազմակերպվելիք արշավանքը, թերևս, այդ զորքերի օգնությամբ), նամակը կարող է թվագրվել Առնուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանից[27] մինչև Թուդալիյաս III-ի կառավարման ավարտական շրջանը ընկած ժամանակահատվածով[28]: Այս ընդարձակ ժամանակահատվածում մեզ հետաքրքրող իրադարձության թվագրման հարցում թերևս մի փոքր կռվան կարելի է առանձնացնել: Իսուվայի հայտնվելը զորահավաքի աշխարհագրության մեջ կարող է վկայել վերջինիս նկատմամբ այդ պահին թեկուզ փոքր խեթական ազդեցության առկայության օգտին, ինչը, թվում է, հնարավոր չէր մինչև «Դիպված 25»-ի ժամանակահատվածը: Այսպիսով, կամ իրոք Մաշատիյոյուքի նամակը կարելի է տանել դեպի Առնուվանդասի ժամանակները կամ «Դիպված 25»-ի շրջանը:

Կարաննի

Հայասայի արքա Կարաննին (հնարավոր է նաև՝ Լաննի ընթերցումը), հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Մուրսիլիս II-ի կողմից կազմված Սուպպի-

[26] **Güterbock,** 1956, 49.

[27] Մաշատիյոյուքի նամակների այս վաղ թվագրումն առաջարկել է Ց. Քլինգերը (**Klinger,** 1995, 74ff.):

[28] **Alp,** 1980, 58; **Houwink ten Cate,** 1998, 52.

լուլիումաս I-ի գործունեությունը ներկայացնող տեքստերում[29]: Այստեղ հիշատակվում է Թուդխալիյաս III-ի և թագաժառանգ Սուպպիլուլիումասի գլխավորած արշավանքը դեպի Հայասա և Կումմախայի (հայկ. Կամախ-Անի քաղաքը) մոտ տեղի ունեցած ճակատամարտը. դժբախտաբար, տեքստն այստեղ ընդհատվում է: Կարաննիի մասին այլևս որևէ այլ աղբյուրում տեղեկություն չի պահպանվել: Կարելի է միայն վստահաբար ասել, որ Կումմախայի ճակատամարտից ոչ շատ ժամանակ անց Թուդխալիյաս III-ը մահացել էր և իշխանության էր եկել Սուպպիլուլիումասը: Մասնագետների միահամուռ կարծիքով, Կումմախայում խեթերը հաղթել էին և իրենց գերիշխանությունը հաստատել Հայասայի նկատմամբ[30]:

Մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում առաջարկել էինք խեթա-հայասական փոխհարաբերությունների, Կարաննիի և Մարիյայի կառավարման հետ կապված մի վարկած[31], որը ներկայումս hակված ենք վերանայելու: Ըստ դրա, Մարիյայի սպանությունը Խաթթուսասում նախորդել էր Կարաննիի կառավարմանը: Իրենց արքայի սպանությունը ընդվզում էր առաջ բերել Հայասայում. վերջինիս բնակչությունը ռազմական գործողություններ էր սկսել Խաթթի դեմ, դրդելով Թուդխալիյասին արշավելու Հայասա: Ենթադրում էինք նաև, որ հենց այդ պատճառով Կարաննիի կառավարումը Հայասայում պետք է կարճատև լիներ:

Մարիյա

Անվան գրելաձևը.

ᵐMa-ri-ya-aš (ուղղ.)	-	III 68’, IV 51’.
ᵐMa-ri-ya (տր./հայց.?)	-	III 80’, IV 58’; HT 85 3’.
ᵐMa-ri-ya-an (հայց.)	-	IV 42’; KBo L 49 ԴԿ I 4.

Պայմանագրերում Մարիյա անունը հիշատակվում է երեք ենթատեքստերում և, նկատի առնելով համապատասխան անձանց նույնացման հարցում առկա որոշ բարդությունները, մասնագիտական հրատարակություններում սովորաբար տարբերակվում են «ավագ» և «կրտսեր» Մարիյաներ: Այսպես.

1) Որպես անցյալում խեթական արքունիքում սեռական հարաբերությունների հողի վրա պալատական արարողակարգը խախտելու պատճառով

[29] **Güterbock,** 1956, Դիպված 13 (A IV 42–45). Նկատի առնելով այս անվան ընթերցման հարցում առակ կասկածները, մենք ձեռնպահ կմնանք դրա որևէ ստուգաբանությանն անդրադառնալուց:

[30] Տես, օրինակ, **Bryce,** 2005, 149f.:

[31] **Քոսյան,** 2008, 275–276:

Թուդխալիյաս III-ի կողմից մահվան դատապարտված անձ (ՀԿ III 68–73) – «ավագ» Մարիյա:

2) Ոմն անձ, որը Խուկկանայի պայմանագրի կնքման պահին Հայասայի արքայի փեսան էր (դստեր ամուսինը) (ՀԿ III 80) – «կրտսեր» Մարիյա:

3) «Սուպպիլուլիումաս – Խուկկանա» պայմանագրին կցված խեթա-հայասական ավելի վաղ պայմանագրում հանդես է գալիս որպես Հայասայի կառավարիչ (ՀԿ IV 42, 58). հավանաբար, նույնը, ինչ «ավագ» Մարիյան:

Պայմանագրերի՝ գիտական հանրությանը հայտնի դառնալու շրջանից ի վեր մասնագետների գերակշիռ մասը գտնում էր, որ այս անունը կրել են հայասական երկու տարբեր կառավարիչներ (պայմանականորեն նրանք տարբերակվում էին որպես «ավագ» և «կրտսեր» Մարիյաներ). ներկայումս էլ այս տեսակետը դեռևս շարունակում է շրջանառվել, չնայած դրա համար որևէ հիմք չկա:

Է. Փորրերի կարծիքով, «ավագ» Մարիյան Հայասայի արքա Կարաննիի հաջորդն էր, ով սպանվել էր Թուդխալիյաս III-ի օրոք, իսկ «կրտսերը» «ավագի» ազգականն էր (հավանաբար, թոռը)[32]:

Ի տարբերություն Է. Փոռերի, Է. Կավենյակի կարծիքով[33], «ավագ» Մարիյան Թուդխալիյաս III-ի կողմից Կումմախայի ճակատամարտից հետո նշանակվել էր Հայասայի կառավարիչ: Պայմանագրի չորրորդ սյունակը ներկայացնում է նրա հետ կնքված պայմանագիրը:

Է. Փորրերի տեսակետն ընդունվում է մասնագետների կողմից[34]: Ընդ որում ենթադրվում է, որ երկու Մարիյաները չեն պատկանել երկու հաջորդական սերունդների (օր., հայր-որդի, հորեղբայր/քեռի-եղբորորդի/քրոջ որդի և այլն), քանի որ, ըստ ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող պապպոնիմիայի սովորույթի, անունը փոխանցվում էր թոռանը, այլ ոչ որդուն[35]:

[32] **Forrer,** 1931, 3. Ի.Մ. Դյակոնովի կարծիքով (**Дьяконов,** 1968, 91 сл.), այս երկրորդ Մարիյան կարող էր Խուկկանայի գահակիցը լինել, մի բան, որն իրոք նրան կարող էր Խուկկանայի ժառանգորդը դարձնել՝ որդու բացակայության դեպքում:

[33] **Cavaignac,** 1930, 16f. ըստ նրա, «կրտսեր» Մարիյայի դիպվածում (III 80) խոսքն ընդամենը սպանված «ավագ» Մարիյայի տանից դստերը ետ վերցնելու մասին է, այսինքն երկրորդ Մարիյա չի եղել: Այս կարծիքին էր, անկախ Է. Կավենյակից, նաև Գր. Ղափանցյանը (**Капанцян,** 1948, 19сл.):

[34] **Carruba,** 1988, 67f.; **Beckman,** 1996, 27.

[35] **Güterbock,** 1940, 35f.; **Carruba,** 1988, 68. Մարիյա անունը կրող երկու ենթադրյալ անձանց խնդրի մի մեկնաբանություն էլ նշենք (**Խաչատրյան**, 1998, 47–49). նրա կարծիքով, Թուդխալիյաս III-ի օրոք ապրած Մարիյայի անունը հետագայում վերածվել է հայասական (ըստ Խաչատրյանի՝ «Հայքի») արքաների տիտղոսի:

Վերոհիշյալ տեսակետը ենթադրում է պայմանագրերում որպես Հայասայի կառավարիչ/արքա հիշատակվող անձանց հետևյալ հաջորդականությունը.

Թուդխալիյաս III	↔	Կարաննի
	↔	«ավագ» Մարիյա
Սուպպիլուլիումաս I	↔	«կրտսեր» Մարիյա – Խուկկանա

Հայասայի կառավարիչ Մարիյային առնչվող աղբյուրների հիման վրա վերոհիշյալ վերականգնումը, սակայն, թույլ է հիմնավորված, ինչին կանդրադառնանք ստորև:

Եզրափակելով Մարիյայի մասին հատվածը, նշենք այդ անվան մեկնաբանությունները, որոնք առաջարկվել են մասնագետների կողմից:

Հայ ականավոր լեզվաբան Գ. Ջահուկյանը իր վաղ ուսումնասիրություններից մեկում ենթադրում էր, որ Մարիյայի անունը կարող էր ծագել հնդեվրոպական մի արմատից, որը լատիներենում վկայված է maro «ղեկավար, առաջնորդ» ձևով[36]: Հետագայում նա թեականորեն առաջարկում էր հետևյալ բացատրությունը[37]: Ըստ նրա, այս անձնանվան հիմքում կարող էր ընկած լինել խեթա-լուվիական mer-, meri- արմատը (անհայտ իմաստով), որը վկայված է մի շարք անձնանուններում (խեթ. Marakkui-, Maraššali-, Maraššaliya-, լիդ. Marinda [վերջինս դիցանուն է]): Սակայն քիչ ավելի ուշ նա կասկածի տակ առավ իր տեսակետը, գտնելով, որ սույն բաղադրիչի իմաստը խեթա-լուվիական լեզուներում բացահայտված չէ և չի կարելի նման համեմատություն առաջարկել[38]:

Երկրորդ հնարավոր մեկնաբանության համաձայն, այն համեմատելի է խուրր. mariyanne (միջագետքյան, ուգարիտյան և խեթական տեքստերում՝ mariyannu), ուրարտ. mari-[39] բառերի հետ, որոնք առաջարկվել է բխեցնել հին հնդկ. márya- «երիտասարդ, պատանի» բառից»[40]: Այս տերմինը հին առաջավորասիական տարածաշրջանում հիշատակվում է սոցիալական աստիճանա-

---

[36] **Джаукян,** 1964, 37.

[37] **Ջահուկյան**, 1987, 326–327:

[38] **Джаукян,** 1988, 65. Այստեղ նա հակված էր ընդունելու այլ մասնագետների կողմից առաջարկվող համադրությունը սեպագրական աղբյուրներում հանդիպող mariyannu, ուրարտ. mari- բառի հետ (տես ստորև տեքստում), ինչի մասին նա գրել էր դեռևս 1964 թ. (**Джаукян,** 1964, 37):

[39] Այս բառը պարունակող ուրարտական տեքստում գրված է ^{LÚ}ma-re-GI, որը հրատարակիչն ընթերցում է ma-re-ji և մեկնաբանում որպես «ազնվական» և համեմատում խուրրիերեն marianne-ի հետ (**Дьяконов,** 1963, 39):

[40] Վ. Իվանովն առաջարկում է այս ուրարտերեն բառը մեկնաբանել որպես «ազնվածին երիտասարդ» (**Иванов,** 1979, 102) և համեմատել Հայասայի արքայի անվան հետ:

կարգում բարձր դիրք գրավող ռազմական ազնվականության առնչությամբ (արքայական ծառայության մեջ գտնվող կառավար մարտիկներ)[41]: Նշենք նաև, որ ի տարբերություն հայասական մյուս անձնանունների, Մարիյա անունը մեկուսացած չէ միայն Հայասայի և Ազզիի անվանաբանությամբ: Այն վկայված է հյուսիսային Փոքր Ասիայի խեթական հնավայրերից մեկից (Մաշատհյոյուք = խեթ. Տապիգգա քաղաքը) հայտնաբերված և մոտավորապես Թուդխալիյաս III-ի (Սուպպիլուլիումաս I-ի հոր) ժամանակներով թվագրվող մի նամակում (^{m}Ma-ri-i-ya)[42]:

Եվ, վերջապես, կա Մարիյա անվան ևս երկու ստուգաբանություն: Լ. Գինդինի կարծիքով, այս անունը համադրելի է խեթական աղբյուրներում վկայված ^{GIŠ}mari- «նիզակ» բառի հետ[43]: Իսկ Վ. Խաչատրյանը փորձում է այն համադրել հայերենում առկա հնդեվր. *mar- «տեր. արմատի հետ (եայ-ն հայերենի վերջածանց է)[44]:

Ավարտելով Մարիյա անվան ստուգաբանության մասին կարծիքները, նշենք Ջ. Ջահուկյանի ևս մեկ մոտեցում խնդրին[45]: Ըստ նրա, Մարիյայի անունը կազմված է ընդհանուր հնդեվրոպական մի հիմքից, որից ծագում են ինչպես սեպագրական mariyannu, ուրարտ. mari- բառերը, այնպես էլ հայերենում պահպանված mari բառը (վերջինս նշանակում է «էգ թռչուն»), նշելով, որ հայասական փուլում այն կարող էր տրվել տղամարդուն, եթե ընդունենք, որ Հայասայում պետք է ուժեղ լինեին մայրիշխանական ավանդույթները[46]:

Խուկկանա

Խուկկանայի անունը պահպանվել է, բացի Պայմանագրից, ևս մեկ տեքստում, որը կազմված է շատ ավելի ուշ ժամանակներում (այդ մասին տես ստորև): Խուկկանայի անվան գրելաձևերը այսպիսի պատկեր են ներկայացնում:

^{m}Hu-uq-qa-na-a-aš (ուղղ.հոլ.) - I 8,10,31, II 10, III 85’; KUB XVIII 2 III 10.
^{m}Hu-uq-na-a-aš (ուղղ.) - I 17.
[^{m}Hu]-uq-qa-na-a (տր.?) - II 20.

[41] Այդ մասին տես, մասնավորապես, **Albright,** 1930–1931, 217; **Kammenhuber,** 1961, 16; **Иванов**, 1979, 107сл.:

[42] **Alp,** 1991, N 48, Vs.2. նամակը, գրված է այդ Մարիյայի և մեկ այլ անձի կողմից, որոնք հանդիսանում են խեթական արքայի հպատակները (ամենայն հավանականությամբ, գտնվում են արքայական ծառայության մեջ):

[43] **Гиндин,** 1967, 116.

[44] **Խաչատրյան,** 1998, 45, 49:

[45] **Джаукян,** 1988, 65сл.

[46] Այս մոտեցումը Մարիյայի անվանը (նաև Աննիյայի), կարծում ենք, ոչ մի կերպ չի կարելի հիմնավորել: Սա ուղղակի ենթադրություն է, որը ականավոր հայագետ-լեզվաբանն առաջարկել է այս անունների թվացյալ ստուգաբանության տպավորության տակ:

Hu-uq-qa-na-a-an (հայց.) - I 2.

^{m}Hu-uq-qa-[na-a]-an (հայց.) - I 16.

Խուկկանայի անվան առնչությամբ առայժմ առաջարկվել են երկու հնարավոր մեկնաբանություններ:

Դեռևս ժամանակին Գր.Ղափանցյանն հակված էր այն մասնատելու hugg-/kk- հիմքի և -ana վերջածանցի և գտնում էր, որ այս անձնանունն ունի անատոլիական-խուրրիական (տերմինը Ղափանցյանինն է) ծագում «հմայել» իմաստով: Այդպիսով, Խուկկանայի անունը կարող էր նշանակել «հմայիչ»[47]:

Խուկկանայի անվան երկրորդ մեկնաբանությունը պատկանում է Գ. Ջահուկյանին, ով, հենվելով հայտնի ֆրանսիացի խեթագետ Է. Լարոշի կարծիքի վրա (անվան հիմքը = խեթ. huh(h)a- «պապ»)[48] , հակված էր այդ անվան հիմքը բխեցնելու հնդեվր. *(H)au(H)o- «պապ» (հայ. *հաւ*) բառահիմքից [49]:

Պայմանագիրը սուղ տեղեկություններ է պահպանել Խուկկանայի անձի, այն է՝ մինչև Հայասայի արքա նշանակվելը նրա ունեցած կարգավիճակի մասին:

Հայասայում Խուկկանայի իշխանության գալու մասին պայմանագրում ուղղակի ասվում է հետևյալը.

ԴԿ I

1) [*U*]*M-MA* ^{d}UTU^{ŠI} ^{m}Šu-up-pí-lu-li-u-ma LUGAL KUR ^{URU}Ha-at-ti

2) ka-a-ša tu-uk ^{m}Hu-uq-qa-na-a-an ap-pé-ez-zi-in UR.⌜GE$_7$⌝-an

3) ša-ra-a da-a-ah-hu-un nu-ut-ta SIG$_5$-in i-ya-nu-un

4) nu-ut-ták-kán ^{URU}Ha-at-tu-ši *A-NA* LÚ^{MEŠ} ^{URU}Ha-ya-ša-ya aš-šu-li iš-tar-na

5) te-ek-ku-uš-ša-nu-nu-un nu-ut-ta am-me-el NIN$_9$-*YA AŠ-ŠUM* DAM^{UT-TIM} *AD-DIN*

1) «Այսպես (ասում է) Արևս՝ Սուպպիլուլիումասը, Խաթթիի արքան:

2) ՙՏես, քեզ՝ Խուկկանայիդ, ետին շանը

3) ես բարձրացրեցի և քեզ լավ վերաբերվեցի:

4) Խաթթուսասում քեզ հայասացիների շարքում

5) ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի»:

Մինչև վերջին տարիները խեթագիտական, այդ թվում նաև հայագիտական ուսումնասիրություններում Խուկկանայի իշխանության գալու, նրա

[47] **Капанцян,** 1948, 69сл. Նրա կարծիքով, այս անունը հնարավոր է համեմատել հայ. *խոկ-ամ* «խոսում եմ, կարդում եմ» բայի հետ:

[48] **Laroche,** 1952, 111f.

[49] **Ջահուկյան,** 1987, 325: Հեղինակը գտնում էր, որ հայասերեն անձնանվան գրության ձևը խեթա-լուվիական լեզուների շարքում ավելի մոտ է լիդիերեն ձևին՝ *xuga*: Ավելի վաղ նա որպես Խուկկանայի անվան լիդիական համարժեք էր դիտում, հետևելով գերմանացի հայտնի խեթագետ Ա. Հոյբեքին (**Heubeck,** 1959, 62), Լիդիայի արքա Գիգեսի անունը, (**Джаукян,** 1964, 44сл.; **Ջահուկյան,** 1970, 43, 73–81):

կարգավիճակի և Պայմանագրի կնքման համատեքստի խնդիրների մեկնաբանությունը հենվում էր դրա տեքստի հրատարակիչ Յ. Ֆրիդրիխի մի ընթերցման վրա: Նա տեքստի երկրորդ տողում appe/izzi-ին հաջորդող բարդ գաղափարագրի երկրորդ, վատ պահպանված մասը վերականգնել էր որպես UR.SAG և պայմանականորեն թարգմանել «շարքային հերոս»՝ խեթական արքաների հիմնական տիտղոսներից մեկի (UR.SAG «հերոս») նմանակությամբ: Ըստ նրա տրամաբանության, եթե խեթական արքան «հերոս» է, ապա Խուկկանան պետք է դիտվեր որպես սովորական, շարքային հերոս: appe/izzi-UR.SAG-ը վկայված է միայն այս տեքստում: Յ. Ֆրիդրիխը այն տիպաբանորեն համադրում էր appe/izzi antuhša- «ստորին մարդ» արտահայտության հետ, գտնելով, որ սա կարող էր նշել Խուկկանայի սոցիալական ցածր կարգավիճակը՝ մինչև Հայասայի արքա նշանակվելը[50]: UR.SAG-li(ya)- «քաջ, խիզախ; հերոս» (=խեթ. hašta/ili(ya)-) բառը ծագում է haštai, hašt- «ոսկոր; ուժ» (= աքքադ. qarradu)[51] բառից: Այն տեքստերում սովորաբար հանդես է գալիս խեթական արքաների տիտղոսաշարում՝ որպես մակդիր (անձնանուն + «մեծ արքա» + Խաթթիի արքա + UR.SAG): Յ. Ֆրիդրիխը այս մակդիրը թարգմանում էր «փոքր մարդ» կամ «սովորական զինվոր»[52]: «Սովորական հերոսը» ավելի ստույգ կարող է բնութագրել Խուկկանայի նախնական կարգավիճակը. նա չէր կարող «հերոս» կոչվել, քանի որ այդպիսին միայն խեթական արքան էր:

Այս բառակապակցության ֆրիդրիխյան ընթերցումը և մեկնաբանությունը հիմք էր տվել Է. Ֆոռերին առաջարկելու Խուկկանայի կարգավիճակի յուրովի մեկնաբանություն: Ըստ նրա, եթե այս տերմինը նշանակում է կախյալ անձ, ապա Խուկկանան, նախքան խեթական արքայի հետ պայմանագիր կնքելը պիտի կախված լիներ մեկ այլ պետությունից, քանի որ փախել էր Խաթթի: Է.Ֆոռերը հետևյալ կերպ էր ներկայացնում Խուկկանայի խնդիրը[53].

1) Երիտասարդ տարիքում Խուկկանան եղել է Միտտանիից կախյալ կառավարիչ, այնուհետև փախել և ապաստան էր գտել Խաթթիում՝ Սուպպիլուլիումասի կառավարման սկզբում կամ ավելի վաղ:

2) «Կրտսեր» Մարիյայի դիպվածը (Խուկկանայի փեսան) վկայում է այն մասին, որ պայմանագրի կնքման պահին Խուկկանան արդեն հասուն դուստր ուներ Սուպպիլուլիումասի քրոջից, այսինքն Խաթթի գնալուց մինչև պայմանագրի կնքումը պիտի առնվազն 20 տարի անցներ:

---

[50] **Friedrich**, 1930, 137.

[51] **Puhvel,** 1991, 233f.

[52] Յ. Պուհվելն առաջարկում էր մոտավորապես նույնպիսի թարգմանություն («the lowest form of heroic life» – **Puhvel,** 1991, 234).

[53] **Forrer,** 1931, 3ff.

Այս մեկնաբանությունը չնայած կարող է որոշակիորեն apriori ընդունվել, սակայն դրա համար պայմանագիրը որևէ հիմք չի տալիս: Միտտանիից կախյալ Խուկկանայի փախուստը Խաթթի բացառապես հենվում է appe/izzi UR.SAG տերմինի վերոհիշյալ մեկնաբանության վրա[54], և չի հիմնավորվում այլ աղբյուրներով:

Սակայն հետագայում Յ. Ֆրիդրիխի ընթերցումը և մեկնաբանությունը վերանայվեց և վերոհիշյալ բաղադրյալ գաղափարագրի երկրորդ մասը (SAG) առաջարկվեց ընթերցել GE_7, ինչի արդյունքում ստացվեց բավական տարօրինակ մի արտահայտություն՝ UR.GE_7 «ետին/ստորին շուն», մի բառակապակցություն, որը խեթական տեքստերում այլևս վկայված չէ (ի դեպ, նույնը պետք է ասել նաև ֆրիդրիխյան թարգմանության կապակցությամբ)[55]:

UR.SAG-ի փոխարեն UR.GE_7 վերընթերցումը ստիպեց մասնագետներին ուշադրություն դարձնել Խուկկանայի անունը հիշատակող մեկ այլ խեթական տեքստի վրա:

Վաղուց հրատարակված մի գուշակային տեքստում (KUB XVIII 2 = CTH 569), որ կազմված է մ.թ.ա. XIII դ. երկրորդ կեսին (թերևս, Թուդխալիյաս IV-ի օրոք)[56], հիշատակվում է «ազգեցի Խուկկանան»: Տեքստն իրենից ներկայացնում է գուշակային հարցում երկու խնդիրների վերաբերյալ[a] 1) արդյոք Խուկկանան հավատարիմ կմնա արքային, 2) եթե Ազզին այժմ արքայի դաշնակիցն է, ապա արդյոք ապագայում էլ կդաշնակցի արքայի սերունդների հետ:

---

[54] Ըստ Է. Ֆոռերի, եթե այս տերմինը նշանակում է կախյալ անձ, ապա Խուկկանան պիտի հանդիսանար մեկ այլ պետության արքայի ենթական, քանի որ փախել էր Խաթթի: Սակայն տերմինի մեկնաբանությունը որևէ հիմք չի տալիս նրան փախստական համարելու: Դեռ ժամանակին Գր. Ղափանցյանը appezzi UR.SAG-ը մեկնաբանում էր որպես «երկրորդ, հաջորդ» և գտնում, որ այս տերմինը նշել է Խուկկանայի ստորադաս կարգավիճակը խեթական արքայի հանդեպ (**Капанцян,** 1948, 19): Նույնը խեթերի մոտ Խուկկանայի ապրելու ժամկետի մասին, որը Է. Ֆոռերը բխեցնում էր նրա դստեր՝ ամուսնացած լինելու փաստից: Այս փաստարկը համոզիչ չէ, քանի որ Խուկկանայի հասուն դուստրը, թերևս, պիտի ծնված լիներ նրա առաջին կնոջից, որը հիշատակվում է պայմանագրում (ՀԿ III 80’-81’) և որին Սուպպիլուլիումասը պահանջում է հարճ դարձնել: Ի վերջո, խեթերի և մյուս բոլոր ժողովուրդների մոտ կանանց ամուսնության տարիքը 12–15-ն էր (**Houwink ten Cate,** 1996, 55), որոշ դեպքերում՝ 10-ը (**Hagenbuchner,** 1992, 116 Anm. 24 [վերջինս ըստ միջին ասորեստանյան օրենքների՝ 43 II 25, 29, 31]):

[55] Օրինակ, **Rüster-Neu,** 1989, 116 («շուն» – արհամարհական իմաստով, քանի որ խեթերեն «շուն» [kuwan-/kun- բառը սովորաբար գրվում է պարզ UR գաղափարագրով]); **Beckman,** 1996, 23 («a lowly dog»); **Klinger,** 2005, 108 («letzte Hund») և այլն: Քիչ ավելի հավանական է UR.GE_7-ի մեկ այլ մեկնաբանություն, այն է դրա կապը խեթական տեքստերում հիշատակվող մի բառի հետ, որը գրվում է [LU]UR.GE_7 և նշանակում է «շնապահ; որսորդ» (սրանցից առաջին իմաստը վերաբերում է ծիսական արարողություններին – **Rüster-Neu,** 1989, 116):

[56] **Klinger,** 1998, 107, Anm. 10 (այսպիսի թվագրման համար հեղինակը հղում է **Schuol,** 1994, 100):

Վերոհիշյալ տեքստը իր տեսակում եզակի չէ: Այն պատկանում է մ.թ.ա. XIII դ. կազմված զգալի քանակությամբ նման տեքստերի թվին (գերազանցապես Թուդխալիյաս IV-ի շրջանը), որոնց նպատակն էր նպաստել արքայական իշխանության անարատությանը և սրբագործմանը[57]: Դրանցում ներկայացված են բացառապես մ. թ. ա. XIV–XIII դդ. ապրած հայտնի քաղաքական գործիչները (հիմնականում՝ արքայատոհմի անդամներ)[58], որոնք ժամանակին ներգրավված են եղել զանազան դավադրություններում (դավադրության մասնակիցներ կամ զոհեր): Գուշակային հարցման նպատակը հետևյալն էր՝ արքայատոհմի ներսում ընթացած պայքարին զոհ գնացածների հոգիներին խաղաղություն պարգևել և հակադիր խմբավորումներին հաշտեցնել:

KUB XVIII 2-ում «ազգեցի Խուկկանայի» հիշատակվելը որպես գուշակային հարցման օբյեկտ ինքնին արդեն կարող է ուղղորդել նրա քաղաքական կարյերայի պարզաբանման հարցում: Խնդիրն այն է, որ CTH 569-ում հիշատակվող բոլոր անձինք կամ զոհ են գնացել դավադրություններին կամ դրա մասնակիցներն են եղել[59]: Այստեղ նշենք մի կարևոր հանգամանք կապված Խուկկանայի երկրի առնչությամբ: Բանն այն է, որ գուշակային տեքստում Խուկկանան նշվում է որպես «ազգեցի»[60]: Նկատենք, որ վերոհիշյալ գուշակային տեքստը կազմված է Խուկկանայից առնվազն հարյուր տարի հետո, այն ժամանակ, երբ Հայասա տերմինը վաղուց արդեն դուրս էր եկել շրջանառությունից: Վերջին անգամ Հայասան խեթական տեքստերում հիշատակվում է Մուրսիլիս II-ի „Տարեգրություններում“, որից հետո այս տարածաշրջանում բացառապես առկա է միայն Ազզին:

Աննիյա

Անվան գրությունը.

ᵐAn-ni-ya-aš (ուղղ.)	-	KUB XXVI 79 I 8; KBo L 49 2’
[ᵐAn]-ni-ya-aš	-	KBo L 49 2’, 6’
ᵐAn-ni-ya	-	KBo III 4 III 93
ᵐAn-n[i-ya]	-	KUB XIV 29 I 5

57 CTH 569 (փոխկապակցված տեքստերի այս խմբի հրատարակությունը և ուսումնասիրությունը՝ **Hout van den**, 1998.

58 Դրանք են՝ Սուպպիլուլիումասի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստր «տավանաննան» (Ամմիննայա(?) – **Hout van den,** 1998, 44), Մուրսիլիս II-ի վերջին կինը՝ Դանուխեպան, արքա Ուրխի-Թեշուբը, Հալեպի արքա Խալպացիտին, Սուպպիլուլիումասի եղբոր որդին՝ Արմա-Թարխունտասը և այլք:

59 Որ վերոհիշյալ տեքստում Խուկկանայի հիշատակությունը որպես գուշակային հարցման օբյեկտ կարող էր կապված լինել նրա կողմից իր պարտավորությունների խախտման հետ նկատվել է վաղուց (**Riemschneider,** 1972–1975, 489):

60 Խուկկանայի՝ ազգեցի լինելու մասին՝ **Carruba,** 1988, 69; **Klengel,** 1999, 154f.:

^{m}An-ni-ya(-)[...] - HT 85, 1’

^{m}An-ni-ya[…] - KBo L 49, 8’

Գ. Ջահուկյանը այս անվան սկզբի an- հիմքը, հետևելով հայտնի խեթագետ Է.Լարոշին[61], բխեցնում էր հնդեվր. *(H)an- „արական կամ իգական սեռի նախնի“ արմատից, որից խեթա-լուվիական լեզուներում վկայված են մի շարք արական և իգական սեռի անձնանուններ (Anna, Annaniya, Annanza, Annitta և այլն)[62]: Հետագայում նա հակված էր Աննիյայի անունը անվերապահորեն բացատրելու հայերենով[63], ինչպես նաև այդ անվան առկայությամբ հայասական հասարակությունում տեսնելու մայրիշխանական ավանդույթների գոյությունը: Հայասերենում վերոհիշյալ արմատի առկայության մասին, ըստ նրա, կարող է վկայել հայերենում *հանի* “տատ“ բառի առկայությունը, որտեղ բառասկզբի h-ն կարող էր երկրորդային բնույթ ունենալ[64]:

Գ. Ջահուկյանը չէր բացառում նաև Աննիյայի անվան ստուգաբանության մեկ այլ հնարավորություն, այն է՝ հայասական Անի քաղաքի անունից: Այս մեկնաբանությունը ընդունելի չէ, քանի որ հենվում է դեռևս ժամանակին Գր. Ղափանցյանի մի ենթադրության վրա, ըստ որի Հայասայի արքա Աննիյան իր անունով էր իբրև թե վերանվանել հայասական Ուրա քաղաքը[65]:

Աննիյա անվան մեկ այլ մեկնաբանության համաձայն, այն կարելի է համադրել հայ. *անիացեալ* «խնամյալ» բայի հետ, առանձնացնելով *անի-* հիմքը և *եալ* վերջածանցը[66]:

Հայասայի արքա Աննիյան[67] հիշատակվում է Սուպպիլուլիումաս I-ի որդի և հաջորդ Մուրսիլիս II-ի տարեգրություններում («Տասնամյա» և «Ընդարձակ»), վերջինիս կառավարման 7–11-րդ տարիների ընթացքում Հայասա-

---

[61] **Laroche,** 1952, 111f. Խեթերենում այս արմատից են կազմված anna-, իսկ լուվիերենում՝ anni(ya)- «մայր» բառերը:

[62] **Ջահուկյան,** 1987, 324–325:

[63] **Джаукян**, 1988, 63–65.

[64] Գ. Ջահուկյանը հղում է Հր.Աճառյանին, ըստ որի վրացերենում հայերենից փոխառյալ *հանի* բառը նշանակում է «նախնի» (**Աճառյան,** 1977, 33): Հենվելով այս մեկնաբանության վրա, նա ենթադրում էր, որ հայերեն բառը կարող էր պահպանել հնդեվրոպական միասնության շրջանի նախնական իմաստը:

[65] **Капанцян,** 1948, 52. Որևէ հիմք չկա ենթադրելու, որ վերոհիշյալ Ուրան նույնական է հետագայի հայկական աղբյուրների Անի-Կամախ քաղաքին: Գ. Ջահուկյանն ինքն էլ էր նշում, որ Աննիյայի և Անիի համադրությունը կարող է ուղղակի պատահական նմանության հետևանք լինել:

[66] **Хачатрян**, 1980, 110: **Խաչատրյան,** 1998, 46:

[67] Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» (= CTH 61 [հրատ.՝ Götze 1933]) Աննիյասը հիշատակվում է որպես «Ազգիի արքա»:

յի/Ազզիի[68] դեմ մղված պատերազմների համատեքստում: Պարզ չեն ինչպես Աննիյայի՝ Հայասայում իշխանության գալու հանգամանքները և ժամանակը, այնպես էլ նրա հետագա ճակատագիրը: Տարեգրություններում վերջին՝ 11-րդ տարվա հայասական իրադարձությունների կապակցությամբ Աննիյան անվանապես չի հիշատակվում: Այստեղ ուղղակի նշվում է այն մասին, որ Խալիմանա քաղաքից ոմն Մուտտիս ներկայանում է Մուրսիլիսին և հայտնում իրենց հնազանդության մասին[69]: Համենայնդեպս, եթե Աննիյան նախորդ տարվա արշավանքի ընթացքում զահազրկված լիներ կամ մահացած, ապա Մուրսիլիսն այդ մասին անպայման կհիշատակեր:

Հատկանշական է, որ նախորդ՝ 10-րդ տարում հայասական արշավանքն անավարտ էր մնացել[70], որի պատճառը խեթական արքայի երկու տարբեր տեքստերում տարբեր կերպ է ներկայացվում: Ընդարձակ տարեգրություններում որպես պատճառ նշվում է ձմռան վրա հասնելը, այնինչ մեկ այլ տեքստում խոսվում է Արևի խավարման և այդ առիթից օգտվելով թագուհու կողմից արքային զահազրկելու մտադրության մասին[71]: Թերևս, երկու տարբերակներն էլ կարող էին համապատասխանել իրականությանը: Խեթական թագուհին (տեքստում՝ տավանաննա) ոչ թե Մուրսիլիսի կինն էր, այլ, թերևս, նրա հոր՝ Սուպպիլուլիումաս I-ի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստրը, ում հետ Մուրսիլիսի հարաբերություններն ի սկզբանե լարված էին, ինչի մասին վկայում է մեկ այլ տեքստ ևս[72]:

Հենվելով Մուրսիլիսի «Տարեգրությունների» և «տավանաննայի» դավադրության մասին պատմող տեքստի ընձեռած հնարավորությունների վրա, ինչպես նաև հաշվի առնելով Աննիյայի հետ Մուրսիլիսի կնքած պայմանագրի առկայությունը (տես վերը)[73], Հայասայի հնազանդեցումը հազիվ թե տեղի ունենար այս երկրի ամբողջական նվաճման արդյունքում: Ամենայն հավանականությամբ, խեթա-հայասական տևական հակամարտությունն ավարտ-

[68] Այս ընդարձակ տեքստում Հայասա և Ազզի երկրանունները հերթագայվում են և այդ հանգամանքը վճռական դեր է խաղացել դրանց համարժեքության մասին ենթադրության համար, ինչը ներկայումս գերիշխում է մասնագիտական հրատարակություններում (տես վերը ծանոթ. 1):

[69] **Götze,** 1933, 140.

[70] Հենց այս արշավանքի ընթացքում էին գրավվել հայասական երկու քաղաքները՝ «ծովի մեջ գտնվող» Արիպսան և Դուքզամման:

[71] KUB XIV 4 ՀԿ 24-32 (De **Martino,** 1998, 19ff., նաև **Քոսյան**, 2004բ, 199–200):

[72] KUB XIV 8 + Izmir 1277 (հրատ. **Bin-Nun,** 1975, 177ff.; **Hoffner,** 1983, 187ff.; **Den Hout,** 1998, 42f.; **De Martino,** 1998: 19ff.). հավանաբար, թագուհու անունն էր Ամմիննայա (**Den Hout,** 1998, 44):

[73] Հավանաբար, միևնույն պայմանագրի մասն է կազմում վաղուց հայտնի KUB XXVI 39 տեքստը (այդ մասին տե՛ս **Carruba,** 1988, 69ff.): Տես նաև **Քոսյան,** 2005 (տեքստի գիտական հրատարակությունը և մեկնաբանությունները):

վել էր ոչ-պարիտետային պայմանագրի կնքմամբ և Աննիյան շարունակել էր կառավարել իր պետությունում:

Աննիյայի կառավարման հանգամանքների առնչությամբ հնարավոր է առաջարկել մի վարկած, որը կարծես կարելի է հիմնավորել Սուպպիլուլիումասի և Խուկկանայի միջև կնքված պայմանագրում պահպանված մի կարևոր տեղեկությամբ: Խոսքը պայմանագրի այն կետի մասին է, որտեղ խեթական արքան հորդորում է Խուկկանային Մարիյային տրված իր դստերը վերցնել և տալ նրա (այսինքն՝ Մարիյայի) եղբորը (ՀԿ 80‘-81‘), ինչպես նաև կին չվերցնել Ազզիից: Առաջին պահանջը լիովին համահունչ է հին առաջավորասիական հասարակություններում ընդունված՝ ամուսնական հարաբերությունները կարգավորող օրենքների հետ[74]: Երկրորդ պահանջի էությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. այդ քայլով Սուպպիլուլիումասը փորձում էր Հայասայում ապահովել խեթական արքայատոհմի գահաժառանգման իրավունքը, քանի որ Խուկկանայի որդին ազզեցի կնոջից, ինչպես նաև նրա դստեր և Մարիյայի ժառանգը կարող էին ապագայում իշխանության հավակնել[75]: Այսինքն, Սուպպիլուլիումասը ձգտում էր Հայասայի գահին ապահովել խեթական արքայադուստրից ծնված գահաժառանգի իշխանության օրինականությունը:

Սակայն միաժամանակ Խուկկանայի և Մարիյայի միջև փեսա – աներ փոխհարաբերության առկայությունը, ինչպես նաև Աննիյայի հետ կնքված պայմանագրում որպես վերջինիս նախնի Մարիյայի հիշատակությունը թերևս կարող է վկայել այն մասին, որ այնուամենայնիվ Մարիյայի անմիջական հաջորդը կարող էր ինչ-որ ժամանակ անց (Խուկկանայից հետո) հասնել իշխանության: Այս հանգամանքի պարզաբանման հարցում արտակարգ կար-

[74] Սա այսպես կոչված լևիրատի սովորույթն է, ըստ որի մահացած ամուսնու կինը չէր կարող վերադառնալ հայրական տուն, այլ պետք է դառնար նրա եղբոր կինը: Ի դեպ, այս սովորույթն ամրագրված է խեթական օրենսգրքի 193-րդ հոդվածում (**Hoffner,** 1997, 152), ըստ որի մահացածի կինը պետք է դառնար նրա եղբոր, այնուհետև հոր, իսկ նրանից հետո հորեղբոր կինը: Ի դեպ, այս սովորույթի մասին հիշատակությունը պայմանագրում ամենևին չի նշանակում, որ այն առկա էր հայասական հասարակությունում, չնայած բացառված չէ: Բանն այն է, որ պայմանագրի տարբեր կետերում խեթական արքան տարբեր առիթներով շարունակաբար հորդորում է Խուկկանային այսուհետև վարվել այնպես, ինչպես ընդունված է Խաթթիում: Այսինքն, նա կարծես ձգտում էր Հայասայում (համենայնդեպս երկրի վերնախավում) ներդնել Խեթական տերությունում գործող սովորույթները:

[75] Ըստ Խեթական տերությունում գահաժառանգման վերաբերյալ գործող Տելեպինուսի օրենքի (= CTH 19 [հրատ.՝ **Hoffmann,** 1984]), արական սեռի ժառանգի բացակայության պարագայում, արքա կարող էր դառնալ արքայի ավագ դստեր ամուսինը (հետևաբար, նաև՝ որդին).

ԴԿ II 38) ... ma-a-an DUMU.LUGAL-ma IBILA NU.GÁL nu ku-iš DUMU.MUNUS ha-an-te-ez-zi-iš

39) nu-uš-ši-iš-ša-an ^{LÚ}an-ti-ya-an-ta-an ap-pa-a-an-du nu LUGAL-uš a-pa-a-aš ki-š[a-ru]

նոր տեղեկություն է պահպանվել O. Կարրուբայի կողմից գիտական տառադարձմամբ և թարգմանությամբ հրատարակված «Մուրսիլիս – Աննիյա» պայմանագրի մասերը հանդիսացող երկու խիստ վնասված բեկորների վրա (HT 85 և KBo L 49)[76]:

Այստեղ Մարիյան հիշատակվում է որպես Աննիյայի նախնիներից մեկը: Աննիյայի և Մարիյայի անունների համատեղ հիշատակությունը կարող է որոշակիորեն պարզել Հայասայում Կարաննիից հետո իշխած կառավարիչների հաջորդականության, Խուկկանայի և նրա հաջորդի միջև հարաբերակցության խնդիրը: Պայմանագրի այս հատվածում, որը դրա պատմական ներածականի մասն է կազմում[77], հիշատակվում են Մարիյայի օրոք տեղի ունեցած իրադարձությունները (դժբախտաբար, այլ տեղեկատվություն, բացի վերոհիշյալ անուններից, չի պահպանվել): Ահա այդ բեկորները.

HT 85[78]

1’) [...................]x ^{m}An-ni-ya(-)[.........
2’) [...................]x *A-BÍ A-BÍ-Y*[*A* ....
3’) [...................]x-*KA*-ya ^{m}Ma-ri-[ya(-) ....
4’) [.................. S]IG$_5$-in iš-tén? x-?[......
5’) [.....................]x^{MEŠ}-*ŠU-NU* SIG$_5$-i[n ......
6’) [.....................]x-x-[............

Թարգմանություն

1’) .... Աննիյա [......
2’) .... պապի[ս ....
3’) .... և քո [պապի]ն՝ Մարի[յային ....]
4’) .... լավ .....
5’) .... նրանց լա[վ ....
6’) ....

KBo L 49

ԴԿ

2) [...............] nu zi-ik ^{m}An-ni-ya-aš
3) [...............-t]a-ni
4) [...............] ^{m}Ma-ri-ya-an

[76] **Carruba,** 1988, 71f. Հենց նրա կարծիքով են այս բեկորները դիտվում որպես պայմանագիր Մուրսիլիս II-ի և Հայասայի արքա Աննիյայի միջև:

[77] **Carruba,** 1988, 71f.

[78] **Idem,** 71.

5) […………]-in ku-wa-pí
6) […………. ^{m}An]-ni-ya-aš
7) [……………]x e-eš-tén
8) [……………]x ^{m}An-ni-ya[…]
9) […………..]x nu šu-me-eš-š[a-…]

Թարգմանություն

2‘) .... Եվ դու՝ Աննիյա
3‘) ....]
4‘) ....] Մարիյային (եզ.հայց.)
5‘) ………..] Երբ
6‘) ………. Ան]նիյա
7‘) ………] եղեք/կլինեք
8‘) ………] Աննիյա[]
9‘) ………] Եվ դուք

O. Կարրուբայի կարծիքով, HT 85-ում «պապիս» բառի առկայությունը կարող է հիմք տալ ենթադրելու, որ այստեղ Մուրսիլիսը նկատի ունի իր պապի՝ Թուդխալիյաս III-ի օրոք ապրած Մարիյային: Նույն բեկորի հաջորդ տողի վնասված հատվածի վերջում սկսվող բառը, ըստ հրատարակչի, պետք է վերականգնվի որպես [..... *A-BÍ A-B*]*Í-KA*-ya «և քո [պապ]ին»[79]:

Այստեղ, սակայն, ծագում է մի կարևոր խնդիր: Արդյոք սույն բեկորի երրորդ տողի վնասված մասում առկա բառը պետք է վերականգնել որպես [*A-BÍ A-B*]*Í-* «պապ»: Որ լակունայում գրված նշանը իրոք *BÍ*-ն է, վկայում է տողավերևի փոքր եռանկյունին, սակայն ինչու չենթադրել, որ այնտեղ կարող էր գրված լինել ուղղակի «հայր» բառը [.....*A-B*]*Í-KA*, այլ ոչ «պապ»: Մեր առաջարկած տարբերակը կարող է էականորեն փոխել հայասական արքայատոհմի՝ մասնագետների կողմից ընդունված հաջորդականությունը և հնարավորություն ընձեռել ենթադրելու, որ HT 85 բեկորում Մարիյան ներկայանում է ոչ թե որպես Աննիյայի պապ, այլ հայր, ինչը և թույլ կտա Աննիյային համարելու Խուկկանայի թոռը, ծնված նրա դստեր և Մարիյայի ամուսնությունից, ինչի մասին Խուկկանայի պայմանագրում խոսվում է:

Վերոհիշյալ վերականգնման և դրանից բխող համապատասխան մեկնաբանության հիման վրա կարող ենք առաջարկել հետևյալ վարկածը: Մարիյան ամուսնացած էր հայասական ազնվականներից մեկի՝ Խուկկանայի դստեր հետ: Ինչ-ինչ պատճառներով նա դրժում է իր պարտավորությունները, որի

[79] **Carruba,** 1988, 71f.: Այս կարծիքին էր նաև Ի. Մ. Դյակոնովը (**Дьяконов,** 1968, 92 прим. 43), ով հենվում էր վերը հղված HT 5-ի վրա:

հետևանքով սպանվում է Խաթթուսասում[80]: Նրա սպանությունից հետո Հայասայում որոշ ժամանակ կառավարում է Խուկկանան, Մարիյայի աները: Խուկկանայից հետո Հայասայում իշխանությունն անցնում է վերջինիս թոռանը՝ նրա դստեր և Մարիյայի որդուն:

Խեթական տերության պատմության՝ այսօր առավել ընդունելի ժամանակագրության[81] հիման վրա, Թուդխալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի՝ Հայասայի և Ազզիի հետ ունեցած փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ.

1350–1345	- Թուդխալիյաս III-ի արշավանքը Հայասա[82]. Կումմախայի ճակատամարտը. պայմանագիր Մարիյայի հետ. Մարիյայի մահապատիժը. Խուկկանայի նշանակումը որպես Հայասայի արքա[83]:
1345-?	- Խուկկանայի կառավարումը Հայասայում (Խուկկանան պետք է իշխանության գար դեռևս Թուդխալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի համատեղ կառավարման ավարտական շրջանում և կառավարեր վերջինիս օրոք՝ նախքան Մուրսիլիս II-ը):
?-?	- Աննիյայի կառավարումը Հայասայում (սկիզբը կարելի է տեղադրել Մուրսիլիս II-ի կառավարմանը նախորդող ինչ-որ շրջանում, իսկ ավարտը պարզ չէ)[84]:

[80] Պայմանագրի այդ հատվածում որպես Մարիյայի սպանության պատճառ է ներկայացված արքունի պալատի կնոջ վրա նայելը, ինչը մասնագետները յուրջ չեն ընդունում, այն համարելով «պալատական անեկդոտ»: Այս առնչությամբ նշենք Պայմանագրի առաջին հրատարակիչ Յ. Ֆրիդրիխի մեկնաբանությունը, ով փորձել էր այդ երևույթի զուգահեռները հայտնաբերել ազգագրական նյութերի հիման վրա (**Friedrich,** 1930, 159f.):

[81] **Otten,** 1968**, Wilhelm – Böse**, 1989, 74ff.; **Astour,** 1989**, Bryce**, 1989, 30.

[82] Այս արշավանքը 5–6 տարվա հատվածում տեղադրելը պայմանական է, քանի որ առ այսօր չկա որևէ կռվան Թուդխալիյաս III-ի կառավարման շրջանի իրադարձությունների թվագրման համար: Հայասական արշավանքը պիտի տեղի ունենար նրա կառավարման վերջերին:

[83] «Ավագ» Մարիյայից հետո, մինչև Խուկկանայի կառավարումը, այլ արքայի գոյության մասին ենթադրությունը հենվում է երկու փաստարկների վրա՝ 1) երկու հաջորդաբար կառավարած նույնանուն կառավարիչների առկայության անհավանականությունը, 2) Աննիյայի հետ կնքված պայմանագրում նրա պապ Մարիյայի հիշատակությունը:

[84] Եթե Աննիյայի կառավարման սկիզբը զուտ տրամաբանորեն տեղադրվի 1320-ական թվականներին, այն է՝ Սուպպիլուլիումասի սիրիական երկրորդ պատերազմի շրջանում («Դիպված 25»-ից հետո, երբ խեթերի ողջ ուժերը ներգրավված էին Միտտանիի և նրա դաշնակից Եգիպտոսի դեմ մղվող պատերազմում), ապա հնարավոր է ենթադրել, որ նա Մուրսիլիս II-ի ժամանակակիցն էր վերջինիս կառավարման համենայնդեպս մեծ մասի ընթացքում: Մուրսիլիսի հայասական արշավանքների ավարտին (նրա 11-րդ տարին՝ մ.թ.ա. 1310 կամ 1311 թ.) նրա և Աննիյայի միջև կնքված պայմանագիրը թույլ է տալիս ենթադրելու, որ վերջինս պետք է շարունակեր իշխել:

Խուկկանայի կառավարման սկիզբը և ավարտը տրամաբանորեն պիտի տեղադրել խեթա-հայասական փոխհարաբերությունների ծայրահեղ սրման երկու փուլերի միջև: Նրա կառավարման ավարտի համար որպես ելակետ հնարավոր է մոտավորապես դիտել Սուպպիլուլիումասի հայասական արշավանքը («Դիպված 25»): Կումմախայի ճակատամարտից հետո խեթերի՝ Հայասայի դեմ արշավանքները (տես վերը՝ «Դիպված 25» և «39») պիտի թվագրվեն Սուպպիլուլիումասի սիրիական պատերազմների ժամանակաշրջանով: Վերջիններս երկուսն են՝ 1) «առաջին» պատերազմ (մոտ. 1340), 2) «երկրորդ» պատերազմ (մոտ. 1327–1322):

Եթե արշավանքը տեղադրվի «երկրորդ» պատերազմի շրջանում, որ ավելի հավանական է[85], ապա հնարավոր կլինի այն դիտել որպես հետևանք Հայասայում հակախեթական ապստամբության, որի ընթացքում Խուկկանան կարող էր զրկվել իշխանությունից:

Հիմնական եզրակացությունները

Հոդվածում ներկայացված խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին:

1) Թուդխալիյաս III-ի կառավարման ավարտին, Կումմախայի ճակատամարտից հետո Հայասան ընկավ Խեթական տերության գերիշխանության տակ: Հայասայի հաջորդ կառավարիչը Մարիյան էր, ում հետ կնքվել էր պայմանագիր: Առայժմ անհայտ հանգամանքների բերումով Մարիյան խախտել էր իր վրա դրված պարտավորությունները, որի համար մահապատժի ենթարկվեց Խաթթուսասում, միևնույն Թուդխալիյաս III-ի օրոք:

2) Մարիյայի փոխարեն Հայասայի կառավարիչ նշանակվեց հայասացի ազնվական Խուկկանան, ով Մարիյայի կնոջ հայրն էր: Սուպպիլուլիումասի և Խուկկանայի միջև կնքվեց պայմանագիր: Կախյալ պետությունների հետ կնքված պայմանագրերին հատուկ պարտավորություններից զատ Խուկկանան պարտավորվում էր վերադարձնել ժամանակին Հայասայում ապաստան գտած Խաթթիի բնակչությանը, ինչպես նաև դստերը ետ վերցնել Մարիյայի տանից և հանձնել նրա եղբորը:

3) Պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց Խուկկանան խախտում է իր պարտավորությունները, ինչը դրդում է Սուպպիլուլիումաս I-ին դիմելու ռազմական միջամտության: Խեթական զորքը մտնում է Հայասայի հարևան Իսուվա (հետագայի Ծոփք), այնուհետև արշավում է Հայասա և վերադարձնում խեթական բնակչությանը:

[85] Հնարավոր է, Սուպպիլուլիումասը «Դիպված 39»-ում հիշատակվող արշավանքը նկատի ուներ փարավոնին հղված իր նամակում (KUB XIX 20, տես վերը՝ տեքստում):

4) Սուպպիլուլիումասի և Խուկկանայի պայմանագրի պահպանված տեքստը հավանաբար դրա բնօրինակը չէ, այլ ավելի ուշ շրջանի խմբագրություն: Այստեղ, արդեն Խուկկանայի լոյալության ավարտից հետո կատարվել են որոշ փոփոխություններ, որոնք արտացոլված են տեքստի ներածականում և ավարտական տողերում (Խուկկանայի անձի հանդեպ արհամարհական արտահայտությունը, ինչպես նաև խեթական բնակչությանը վերադարձնելու մասին հատվածը). այդ փոփոխությունները ուշ շրջանի ներդիրներ են:

5) Առայժմ առկախ է մնում մեկ հարց: Արդյոք դեպի Հայասա խեթական արշավանքի պահին Խուկկանան դեռևս կառավարում էր այնտեղ, և եթե այո, ապա ինչպիսի ավարտ կարող էր ունենալ այն[86]: Համենայնդեպս, հայասական արշավանքից հետո խեթական աղբյուրներում Հայասայի հիշատակությունները բացակայում են[87] ընդհուպ մինչև Սուպպիլուլիումաս I-ի որդի Մուրսիլիս II-ի կառավարման յոթերորդ տարին, երբ որպես Հայասայի (տեքստում նաև՝ Ազզիի) արքա հանդես է գալիս Աննիյան՝ որպես Խաթթիի հանդեպ թշնամական դիրքորոշում ունեցող անձ: Աննիյայի և Մուրսիլիս II-ի միջև կնքված պայմանագրի երկու բեկորներից մեկի վնասված մասում նոր վերականգնման հնարավորության լույսի ներքո կարելի է ենթադրել, որ Աննիյան կարող էր լինել Խուկկանայի թոռը, ծնված նրա դստեր և Մարիյայի ամուսնությունից:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր., 1977, Հայերեն արմատական բառարան, հ.Գ, Երևան:

Խաչատրյան Վ.Ն., 1998, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան:

Ղազարյան Ռ., 2013ա, Մուրսիլիս II-ի Տասնամյա տարեգրությունը, Երևան:

Ղազարյան Ռ., 2013բ, Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ. – «Հայկազունիներ. առասպել և պատմություն» (խմբ. Վ. Բարխուդարյան և ուրիշներ), Երևան:

[86] Հայասական արշավանքից հետո Սուպպիլուլիումասը ուղղակի ի վիճակի չէր լրջորեն զբաղվելու Հայասայով, քանի որ մեծ պատերազմ էր սպասվում Միտտանիի հետ: Իսկ նրա մահվանը հաջորդած առաջին տարիները կարելի է բնորոշել որպես ծայրահեղ բարդ, որ հիմնականում հետևանք էր Փոքր Ասիայում բռնկված համաճարակի: Համաճարակի մասին հիշատակվում է Արիննա քաղաքի Արևի աստվածուհուն և «Խաթթիի բոլոր աստվածներին» ուղղված՝ Մուրսիլիս II-ի աղոթքներում (= CTH 376 [հրատ.՝ **Gurney**, 1940, **Carruba,** 1969, 239ff.]): Հավանաբար, Սուպպիլուլիումասն ինքը և նրան կարճ ժամանակով հաջորդած ավագ որդին՝ Առնուվանդաս II-ը զոհ գնացին համաճարակին: Մուրսիլիսի «Տարեգրություններում» հիշատակվում է միայն Առնուվանդաս II-ի հիվանդության մասին (**Götze,** 1933, 14f.): Մուրսիլիս II-ի «Տարեգրությունները» հաղորդում են, որ Առնուվանդասի մահվանից հետո բոլոր կախյալ երկրներն ապստամբեցին և սկսեցին հարձակվել Խաթթիի վրա (**Götze,** 1933, 14f.):

[87] Միայն մեկ տեքստում է հիշատակվում Հայասան՝ ուղղված Եգիպտոսի փարավոնին Սուպպիլուլիումաս I-ի նամակում, որտեղ նշվում են խեթական արքայի նվաճումները, այդ թվում Հայասան (KUB XIX 20 ԴԿ 2՛, հրատ.՝ **Van den Hout,** 64):

Ջահուկյան Գ. Բ., 1970, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան:

Ջահուկյան Գ. Բ., 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան:

Քոսյան Ա., 2004ա, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան:

Քոսյան Ա., 2004բ, Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները (նոր սկզբնաղբյուրներ), Պատմաբանասիրական հանդես 2004/2, էջ 197–204:

Քոսյան Ա., 2005, Հայասայի աստվածները (KUB XXVI 39), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIV, Երևան, էջ 444–457:

Քոսյան Ա., 2008, Հայասան և Ազզին. - «Ծնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն» (Հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին), Երևան, էջ 263–291:

Քոսյան Ա., 2013, Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), - «Հայկազունիներ. առասպել և պատմություն» (խմբ. Վ.Բարխուդարյան և ուրիշներ), Երևան, էջ 48–63:

Джаукян Г.Б., 1964, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван.Джаукян Г.Б. 1988, О соотношении хайасского и армянского языков, Историко-филологический журнал 1988/1, 68–88.

Дьяконов И.М., 1963, Урартские письма и документы, Москва.

Дьяконов И.М., 1968, Предыстория армянского народа, Ереван.

Гиндин Л.А., 1967, Язык древнейшего населения юга Балканского полуострова, Москва.

Иванов Вяч.Вс., 1979, Урартск. mari, хурритск. marianne, хайасск. Marija, Переднеазиатский сборник III, Москва, 101–112.

Капанцян Гр., 1948, Хайаса-колыбель армян, Ереван.

Хачатрян В.Н., 1980, Страна Хайк‘ в составе Урарту, Вестник общественных наук АН АрмССР, 1980/6, 101–112.

Albright W.F., 1930–1931, Mitannian *maryannu*, «chariot-warrior», and the Canaanite and Egyptian Equivalents, Archiv für Orientforschung 7, 217–221.

Alp S., 1991, Die Hethitische Briefe aus Maşat-Höyük, Ankara.

Archi A. und **Klengel H.,** 1980, Ein hethitischer Text über die Reorganisation des Kultes, Altorientalische Forschungen VII, S. 143–157.

Astour M., 1989, Hittite History and Absolute Chronology of the Bronze Age, Gothenburg-Partille.

Beckman G., 1996, Hittite Diplomatic Texts, Atlanta.

Bin-Nun Sh., 1975, The Tawananna in the Hittite Kingdom, Heidelberg (= Texte der Hethiter 5).

Bryce T.R., 1989, Some Observations on the Chronology of Suppiluliuma's Reign, Anatolian Studies 39, 19–30.

Bryce T.R., 2005, The Kingdom of the Hittites, Oxford (II ed.).

Carruba O., 1969, Die Chronologie der hethitischen Texte und die Geschichte der Grossreichszeit (ZDMG Suppl.1), Wiesbaden, S.226-249.

Carruba O., 1988, Die Hajasa-Verträge Hattis. - In: Documenta Asiae Minoris (= Festschrift H.Otten), Wiesbaden, 59–75.

Cavaignac E., 1930, Mariya, Revue Hittite et Asianique I, fasc.1, 15–17.

De Martino S., 1998, Le accuse di Mursili II alla Regina Tawananna secondo il testo KUB XIV 4. - In: EOTHEN 9, 19–48.

Forrer E., 1931, Hajasa-Azzi, Caucasica IX, 1–24.

Friedrich J., 1926–1930, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, Bd.1-2, Leipzig.

Götze A., 1933, Die Annalen des Muršiliš, Leipzig.

Gurney O.R., 1940, Some Hittite Prayers, Liverpool Annals of Archaeology and Anthropology 27, 2–163.

Gurney O.R., 1948, Mita of Pahhuwa, Liverpool Annals of Archaeology and Anthropology 28, 32–48.

Güterbock H.G., 1940, Siegel aus Boghazköi, Bd.I, Berlin.

Güterbock H.G., 1956, The Deeds of Suppiluliuma as told by his son, Mursili II, Journal of Cuneiform Studies X, 41-68, 75–98, 107–130.

Hagenbuchner A., 1992, War der ^{LÚ}*tuhkanti* Neriqqaili ein Sohn Hattusilis III.?, Studi Micenei ed Egeo-Anatolici 29, 111–126.

Hawkins J.D., 1980, Kargamis. - In: Reallexikon der Assyriologie V/1, 426–446.

Heubeck A., 1959, Lydiaka, Erlangen.

Hittite Texts in the British Museum, London, 1920.

Hoffmann I., 1984, Der Erlaß Telipinus, Heidelberg.

Hoffner H.A., 1983, A Prayer of Mursili II about his Stepmother, Journal of American Oriental Society 103/1, 187-192.

Hout Th.P.J. van den 1998, The Purity of Kingship, Leiden - Boston – Köln.

Houwink ten Cate Ph.H.J. 1996, The Dynastic Marriages of the Period between ca.1258 and 1244B.C., Altorientalische Forschungen 1, 40–75.

Houwink ten Cate Ph.H.J. 1998, The alternative date for the Šunaššura Treaty (KBo I 5), Altorientalische Forschungen Bd.25/1, p. 34–53.

Kammenhuber A., 1961, Hippologia Hethitica, Wiesbaden.

Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig und Berlin, 1916ff.

Keilschrifturkunden aus Boghazköy Berlin, 1921ff.

Klengel H., 1965, Die Rolle der «Ältesten» (LÚ^{MEŠ} ŠU.GI) im Kleinasien der Hethiterzeit, Zeitschrift für Assyriologie 57, 223–236.

Klengel H., 1968, Die Hethiter und Isuwa, Oriens Antiquus 7, S. 63–76.

Klengel H., 1999, Geschichte des Hethitischen Reiches, Leiden-Boston-Köln.

Klinger J., 1995, Das Corpus der Maşat-Briefe und seine Beziehungen zu den Texten aus Hattusa, Zeitschrift für Assyriologie 85, 74–108.

Klinger J. 1998, Zur Historizität einiger hethitischer Omina, Altorientalische Forschungen 25/1,104–111.

Klinger J. 2005, Der Vertrag Šuppiluliumas I. mit Hukkana von Hajaša. – In: Staatsverträge, Herrscherinschriften und andere Dokumente zur politische Geschichte (Hrsg. B.Janowski und G.Wilhelm)(= TUAT, Neue Folge, Band 2), Gütersloh, 106–112.

Kosyan A., 2006, Arnuwandas I in the East, Armenian Journal of Near-Eastern Studies I, 72–97.

Kosyan A., 2013–2014, Rulers of Hayasa: Hukkana, Armenian Journal of Near-Eastern Studies VIII/1–2, 128–134.

Kosyan A., 2015, Between the Euphrates and Lake Van (on the Location of Hayasa and Azzi). – In: International Symposium on East Anatolia South Caucasus Cultures. Proceedings (eds. M.Işıklı and B.Can). vol.I, Cambridge, 271–276.

Korosec V., 1931, Hethitische Staatsverträge. Ein Beitrag zu ihre juristischen Wertung, Leipzig.

Kühne C. und **Otten H.,** 1971, Der Šaušgamuwa-Vertrag, Wiesbaden.

Laroche E., 1952, Recueil d'onomastique hittite, Paris.

Laroche E., 1971, Catalogue des textes hittites, Paris.

Miller J., 2007, Amarna Age Chronology and the Identity of Nibhururiya in the Light of a Newly Reconstructed Hittite Text, Altorientalische Forschungen 34, 252-293.

Otten H., 1967, Ein hethitischer Vertrag aus dem 15./14. Jahrhundert v. Chr. (KBo XVI 47), Istanbuler Mitteilungen 17, 55–61.

Otten H., 1968, Die hethitischen historischen Quellen und die altorientalische Chronologie, Wiesbaden.

Puhvel J., 1991, Hittite Etymological Dictionary, vol.3. Words beginning with H., Berlin – New York.

Riemschneider K. Hukkana. – In: Reallexikon der Assyriologie, Bd.IV, Berlin – New York, 489.

Rüster Chr. – **E. Neu**, 1989, Hethitisches Zeichenlexikon, Wiesbaden (= Studien zu den Boghazkoy Texten, Beih.2).

Sayce A.H., 1930, Hittite and Moscho-Hittite, Revue Hittite et asianique 1, fasc.1, 1-8.

Schuler E. von, 1965, Die Kaškäer. ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin.

Schuol M., 1994, Die Terminologie des hethitischen SU-Orakeln. Eine Untersuchung auf der Grundlage des mittelhethitischen Textes KBo XVI 97 unter vergleichender Berücksichtigung akkadischer Orakeltexte und Lebermodelle I und II, Altorientalische Forschungen 21, 73–124, 247–304.

Van den Hout Th.P.J., 1994, Der Falke und das Kücken: der neue Pharao und der hethitische Prinz?, Zeitschrift für Assyriologie 84, 60–88.

Weidner E., 1923, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig.

Wilhelm G., 2005, Der Vertrag zwischen Šuppiluliuma I. von Hatti mit Tette von Nuhašše. – In: Staatsverträge, Herrscherinschriften und andere Dokumente zur politische Geschichte (Hrsg. B.Janowski und G.Wilhelm)(= TUAT Neue Folge Band 2), Gütersloh, 122–123.

Wilhelm G. –Böse J., 1989, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderte v.Chr. - In.: High, Middle or Low?, Gothenburg, 74–117.

ARAM KOSYAN
Doctor of Sciences
Institute of Oriental Studies, NAS RA
aramkosyan@yahoo.com

THE KINGS OF HAYASA

(SUMMARY)

Among the political entities of the Armenian Highland of the II millennium B.C. Hayasa and Azzi hold special place since in the Armenological studies they are associated with the early Armenian statehood the indigenous name of Armenians «hay». The problem of localization of these state formations is an object for scholarly discussions since the beginning of Hittitology.

For the study of the history of Hayasa and Azzi the international treaties concluded between the Hittite empire and Hayasa and other Hittite cuneiform texts («The Deeds of Suppiluliumas I», «The Annals of Mursilis II», HT 85, KBo L 49 and KUB XVIII 2) are of utmost importance, since they contain essential data for the clarification of political and ethnolinguistic situation in the western parts of the Armenian Highland. The first treaty among the abovementioned was signed between the Hittite king Tudhaliyas IV and Mariya, the ruler of Hayasa, the second one between the Hittite king Suppiluliumas I and the ruler of Hayasa Hukkana.

In the article three aspects of the history of Hayasa and Azzi were studied – 1) the character of these treaties, 2) the status of the rulers of Hayasa and their interrelationship, 3) political context of the period under consideration. Despite significant damages, the texts of the treaties had preserved valuable information regarding the abovementioned problems.

In this comparatively small group of texts the names of only four kings of Hayasa and Azzi are mentioned – Karanni, Mariya, Hukkana, and Anniya. Among these the rule of Karanni is less illustrated, although, according to scholars, associated with his name is the capture of Hayasa by the Hittites after the battle near Kummaha («The Deeds of Suppiluliuma I» – Fragment 13).

The main results of the study could be presented as follows.

1) Towards the end of the rule of the Hittite king Tudhaliya III, after the battle near Kummaha against Karanni, king of Hayasa, the latter was put under the Hittite control. With Mariya, the next ruler of Hayasa signed a vassal treaty, which has been preserved with considerable damages. At some point Mariya violated his commitments and was executed by Tudhaliya in Hattusa, the Hittite capital.

2) Instead of Mariya the throne of Hayasa was given to Hukkana, the father-in-law of Mariya and with him a new treaty was signed. The latter includes regulations characteristic for the Hittite vassal-treaties, such as 1) loyalty towards the Hittite king, his family and Hatti to that moment and in the future, 2) military aid in the case of war (Hukkana was obliged to act on his behalf until the arrival of the Hittite army), 3) prohibition on relations with the third party without the permission of the Hittite king, 4) also Hukkana had to inform the Hittite king about any disloyalty. The treaty was strengthened with the dynastic marriage; one of the sisters of the Hittite king Suppiluliuma I was given to Hukkana as a wife. Among the obligations of Hukkana was the return of Hittite population that had previously found refuge in Hayasa.
3) At some uncertain period after the treaty was signed Hukkana also had violated the oath which forced Suppiluliuma I to take an offensive. Suppiluliuma I invaded first the neighboring country of Isuwa, then Hayasa, returning the Hittite refugees.
4) The preserved copy of the treaty between the Hittite king and Hukkana is not the original variant, but a later version where some changes haD been made after the disloyalty of Hukkana. First of all such a conclusion could be reached when one reads the first lines of the treaty (derisive wording with regard to his adopted son), as well as its final part regarding the refugees.
5) To this date one question remains open. Was Hukkana still alive during the Hittite campaign against Hayasa? If yes, then to what consequences this campaign could lead. The badly broken part of the text misses the reference to the ruler of Hayasa; only the refugees are mentioned. In the Hittite texts Hayasa does not figure until in the seventh year of the «Annals» of Mursili II the hostilities are mentioned with Anniya, the king of Hayasa. Taking into account our considerations regarding the restoration of the treaty signed between Mursili II and Anniya, it could be suggested that Mariya was the grandson of Hukkana and son of Mariya.
6) Regarding the names of the kings of Hayasa and Azzi several contradictory etymologies have been offered by Armenian and foreign scholars (Gr. Kapancyan, G. Jahukyan, I. M. Diakonoff, W. Ivanov and others). It should be mentioned that the main difficulty in etymologizing these names is the establishment of the language to which they belonged (several Indo-European – Armenian, Hittite, Luwian, Hurrian-Urartian etc.). Unfortunately, the affiliation of the Hayasaean language remains uncertain. Today the Hayasaean lexics is represented only by a number of proper names (personal names, toponyms and theonyms), which is not enough for establishing its place in some linguistic family (most probably, Indo-European). Difficulties in etymologizing Hayasaean personal names regard also to toponyms and theonyms.

АРАМ КОСЯН
Доктор исторических наук
Институт Востоковедения НАН РА
aramkosyan@yahoo.com

ЦАРИ ХАЙАСЫ

РЕЗЮМЕ

В числе государственных образований Армянского нагорья II тыс. до н.э. особое место занимают Хайаса и Ацци, которые в арменоведческих исследованиях обычно ассоциируются с древнеармянской государственностью и этнонимом армян. Вопрос о точном местонахождении этих государственных образований является обьектом дискуссий чуть ли не с самого начала хеттологической науки.

Для исследования истории Хайасы и Ацци имеют важнейшее значение межгосударственные договоры заключенные с соседней Хеттской империей и связанные с ними другие клинописные тексты («Деятельность Суппилулиумаса I», «Анналы» Мурсилиса II, HT 85, KBo L 49 и KUB XVIII 2), которые предоставляют необходимые материалы для выяснения политической и этнолингвистической ситуации западной части Армянского нагорья. Из вышеперечисленных договоров первый был заключен между хеттским царем Тудхалиясом III и правителем Хайасы Марийа, второй – между Суппилулиумасом I и хайасским правителем Хукканой.

В статье рассматриваются три проблематичных вопроса истории Хайасы и Ацци – 1) характер хеттско-хайасских договоров, 2) статус хайасских правителей и их родственные связи, а также 3) политический контекст изучаемой эпохи. Несмотря на значительные повреждения, теткстыі договоров сохранили ценную информацию по интересующим вопросам.

В этой относительно небольшой группе текстов сохранились имена лишь четырех правителей Хайасы и Ацци – Каранни, Марийа, Хуккана и Аннийа. Среди них менее всего известно о правлении Каранни, хотя с его именем связано, по мнению специалистов, завоевание Хайасы хеттами в результате битвы при Куммахе («Деятельность Суппилулиумаса I» – Фрагмент 13).

Основные выводы исследования можно представить следующим образом.

1) К концу правления Тудхалияса III, а именно после битвы при Куммахе между хеттами и хайасским правителем Каранни, Хайаса подпала под влияние Хеттской империи. С новым правителем Хайасы Марийа

был подписан вассальный договор, который сохранился в значитеьлно поврежденном виде. После этого Марийа не выполнил наложенные на него обязательства, и был казнен в хеттской столице тем же Тудхалиясом.

2) Вместо Марийа правителем Хайасы хеттским царем был назначен его тесть Хуккана, с которым также был заключен договор. Последний включает типичные для хеттских вассальных договоров пункты, регулирующие взаимоотношения зависимого царства с метрополией, а именно – 1) лояльность по отношению к хеттскому царю, к его семье и к Хатти как в настоящее время, так и в будущем, 2) поддержка хеттскому царю воинским контингентом в случае войны (Хуккана обязывался действовать по обстоятельствам до тех пор пока не прибудут хеттские войска), 3) запрет на самостоятельные отношения с третьей стороной без ведома хеттского царя, 4) Хуккана должен был заблаговременно оповестить царю о действиях нелояльных людей. Договор был подкреплен династическим браком; Хуккане была отдана в жены одна из сестер хеттского царя. В числе обязательств Хукканы текст договора упоминает возвращение хеттских беженцев, которые еще раньше нашли пристанище в Хайасе.

3) через некоторое время после подписания договора Хуккана также отказался от своих обязательств, что привело к применению силы со стороны хетсского царя. Суппилулиумас I отправился в поход сначала в соседнюю с Хайасой Исуву, а затем и в Хайасу, откуда вернул хеттских беженцев.

4) Сохранившийся текст договора между хеттским царем и Хукканой не является оригиналом, а более поздней версией, где после нелояльных действиях Хукканы были произведены некоторые изменения. В особенности на такое мнение можно прийти из чтения начальных строк договора (издевательская форма обращения к своему зятю), а также концовки, где хеттский царь настоятельно требует вернуть беженцев.

5) В настоящее время остается невыясненным один вопрос, был ли жив Хуккана во время похода хеттов на Хайасу. Если да, то каковы могли быть последствия этот похода. В достаточно поврежденной части текста не сохранилось упоминание о правителе Хайасы; там повествуется только о возвращении беженцев. В хеттских текстах отсутствуют какие-либо упоминания о Хайасе до тех пор, пока в «Анналах» Мурсилиса II под седьмым годом говорится о натянутых отношениях с царем Хайасы Аннией. На основании предложенной автором статьи реконструкции текста договора между Мурсилисем и Аннией можно

предположить, что последний мог являться внуком Хукканы и сыном Марийа.

6) По поводу имен царей Хайасы и Ацци в специальной литературе были высказаны мнения – порой противоречащие друг другу – со стороны ведущих армянских и зарубежных лингвистов (Гр. Капанцян, Г. Джаукян, И. М. Дьяконов, Вяч. Иванов и др.). Следует отметить, что ученые расходятся в основном относительно возможного языка-основы этих имен (несколько индоевропейских – армянский, хеттский, хурритско-урартский и др.). К сожалению, до сих пор остается невыясненным вопрос о принадлежности хайасского языка. Последний в настоящее время представлен лишь рядом собственных имен (личные имена, топонимы и теонимы), что явно недостаточно для определения места этого языка в какой-либо языковой семье (наиболее вероятным кандидатом являются индоевропейские языки). Трудности по поводу этимологизации имен царей Хайасы в равной степени относиться и к хайасским топонимам и теонимам.

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Մաշտոցի անվան Մատենադարան
arusiak_t@mail.ru

«ՄԱՆՐՈՒՍՄԱՆ» ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1. «Մանր», «նուրբ» արվեստի ըմբռնումը հայ միջնադարյան գեղագիտական փորձառության մեջ «Մանր» եզրը մատենագրության մեջ

Միջնադարում կիլիկյան հոգևոր կենցաղավարության մեջ հայտնի են դառնում «Մանրուսումն» կոչվող ծիսական-երաժշտական մատյանները, որ ամփոփում են ողջ ծիսական օրվա՝ ժամագրքի, ինչպես նաև պատարագի հատվածներ՝ գիշերային ժամից մինչև երեկոյանը[1]: Այս մատյաններն աչքի են ընկնում ճոխ, մելիզմատիկ երգեցողությամբ հագեցած եղանակներով, սրանց հմուտ, գերհարուստ խազագրությամբ և վերջապես՝ ութ հիմնական ձայնեղանակների մեջ ածանցվող հարյուրն անցնող չափանմուշ եղանակներով:

Այսպես «մանրուսում» հասկացությունը, բացի զուտ ծիսամատյանից, մատնանշում է առհասարակ միաձայն երգեցողական ավանդույթի մեջ ձևավորված հմտությունների, գիտելիքների ամբողջությունը, սրանց նշանների նրբին՝ «մանր» արվեստը[2]: Այստեղ կարևոր է բուն «մանր» եզրի, «մանր» արվեստի գեղագիտական չափանիշի հետ կապվող ըմբռնումների «միջավայրը» հայ մատենագրության մեջ:

«Մանր» բառը, բացի «*փոքր, աննշան»-ից*, ունի նաև «*նուրբ, մանրամասն կերպով*» նշանակությունը. սրանով բարդված են՝ «*մանրագործ*» (մանր, նուրբ, ճարտարվեստ կերպով արված [գործ]), «*մանրագործել*» (մանր, նուրբ, ճարտարվեստ գործ անել), «*մանրագործութիւն*» (մանրագործելը, ճարտարություն, նրբություն), «*մանրախոյզ*» (մանրազնին, մանրակրկիտ), «*մանրահետել*» (մանրամասն հետազոտել, պրպտել, քննել) և բուն՝ «*մանրամասն, մանրակրկիտ*» բա-

---

[1] Սրանք հիմնականում սաղմոսատողերի, սամոսատների վրա ձևավորված երգեր են՝ թագավորներ, ալելուներ, առավոտերգեր, փառեր, ստողոգիններ և այլն: Այստեղ ներառված չեն շարականները, գանձերն ու տաղերը, որոնք ունեն իրենց առանձին ծիսամատյանները:

[2] Մանրուսման արվեստը, ըստ Կոմիտասի, սկզբնավորվելով ԺԱ դարում, իր ծաղկման շրջանին է հասնում ԺԲ-ԺԷ դարերում (տե՛ս **Կոմիտաս,** 2005, 62–63): Մանրուսման արվեստի տիրապետումը անհրաժեշտ նախապայման էր քահանայի ձեռնադրության համար (տե՛ս **Ներսես Շնորհալի,** 1865, 79):

ռերը (ՆԲՀԼ): Բոլոր այս դեպքերում այն կրում է «*մանրամասն, մանրակրկիտ, նուրբ, նրբարվեստ*» երանգները:

Շատ կարևոր է «*նուրբ*»-ի հետ «*մանր*» եզրի նույնությունը: Այս վերջինը միջնադարյան համակարգում կապվում է «նուրբ» տեսության, ներքին, աննյութ շերտերում բնագրերի այլաբանական մեկնության հետ[3]: «Նուրբ» բառը՝ թաքնված, ոգեղեն, «անոսր» իրողությունների ու իմաստի վերհանման առումով, բազմիցս օգտագործում է Ներսես Լամբրոնացին «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատության մեջ[4]: Այս երկու հասկացությունների ընդհանրությունը նկատել է դեռևս Ն. Թահմիզյանը[5]: Հատկանշական է, որ Գրիգոր Նյուսացու՝ «Երգ Երգոցի» մեկնության նախաբանի թարգմանության մեջ հանդիպում է «մանր»-ից բարդված բառը («*մանրամասնաբար* տեսութեանցն») հենց «նուրբ»-ի իմաստով (λεπτοτέρας θεωρίας)[6]:

---

[3] Միջնադարյան մատենագիտական ցուցակներում «նուրբ» գրերի մեջ մտնում են Փիլոն Ալեքսանդրացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու և այլոց մեկնությունները (տե՛ս **Անասյան Հ.,** 1959, XI–XII): «Նուրբ» մեկնությունների մանրակրկիտ քննությանը մեկնողական համակարգում սպառիչ կերպով անդրադարձել է Օ. Վարդազարյանը (**Вардазарян О.,** 2006, 81–115):

[4] «Նուրբ է խորհուրդս եւ շատ աշխատասիրութիւն պիտի առնի» (Լամբրոնացի, Մեկնութիւն սաղմոսաց, տե՛ս ՄՄ ձեռ. 1526, 64ա), «զի խիստ և նուրբ է ճանապարհ աւրինացն» (103բ–104ա), «ամենևին ընդ նուրբն տանի զառակս խորհրդոյս» (116ա), «նուրբ է խորհուրդս եւ *մաքուր մտաց տեսանելի* հաւատովք» (143ա), «նուրբ է ասացեալս և մանուածով» (623ա), «քանզի անա՛ւսր է և նուրբ փրկական մեր խորհուրդքն» (726բ), օգտագործվում են «նուրբ և վայելուչ, զոր յայտնի կացուցանէ մեզ տէրունական առակն» (765 ա), «նուրբ խորհուրդ» (767 ա): Սրան հակադրվում է «պարզ տեսությունը». «Ամենայնիւ այլաբանութեան կարաւտեմք… և ո՛չ պարզ տեսութեան» (376ա), «յայս կարգ բանիցս տարադէպ է զայս յիշել ըստ պարզ տեսութեան, սակայն առ ի միտս վայելուչ…» (472բ): Այս օրինակներում «նուրբ»-ն օգտագործված է «*նուրբ, խորագետ հոգուն հասանելի, մանվածապատ, թաքցված*» իմաստներով. «*անոսր*»-ը, բացի «*նուրբ*» ու «*թեթև*»-ից, ունի նաև «*աննյութ, հոգեղեն*» («թանձր»-զգայական աշխարհին անհասանելի) նշանակությունը: Նույն տրամաբանությամբ օգտագործվում է ***նրբաձայն*** բառը «Խոնարհեցո, Տէր, զունկն քո եւ լուր ինձ» (Սղմ. ՁԵ. 1) տեղիի մեկնության մեջ՝ կապված առ Աստված ուղղված ձայնի և Աստծո ունկնդրության ներքին ոլորտների հետ. Աստված լսում էր Աննայի «անմռունչ», անձայն հեծեծանքը և նրբաձայն Մովսեսին ասում՝ «Ինչո՞ւ ես աղաղակում» (Ելից. ԺԴ. 15. Լամբրոնացի, Մեկնութիւն սաղմոսաց, 493ա):

[5] «Ստուգաբանորեն «մանր ուսմունք» նշանակում է նուրբ (այն է՝ նրբազեղ-ոճավոր) իրողությունների մասին ուսմունք, ինչպես միջնադարում եղել է նաև՝ «նուրբ գրեանք» հասկացությունը, փիլիսոփայական երկերի իմաստով» (**Թահմիզյան Ն.,** 1969, 195–196):

[6] Տե՛ս **Вардазарян О.,** 2006, Հավելված՝ բնագրեր, էջ 205-208: Նյուսացին դժվար հասկանալի նյութն առանց խորազնին մեկնության հրամցնելը համեմատում է կոշտ, ուտելու ոչ ենթակա կերակուր տալու հետ՝ «ոչ փշրելով զցօռունն եւ ոչ հոսչաւ ի յարդէն ի բաց որոշելով զսերմանսն, **և ոչ մանրեալ զցորեանն յալևր**… զոր օրինակ անզործ բոյսք անասնոց և ոչ մարդկան են կերակուր, նոյնպէս ասասցէ որ արդեաւք անբանիցն մանաւանդ քան թէ բանաւորացն զոլ կերակուր՝ **ոչ գործեցեալն ի ձեռն մանրամասնաբար տեսութեանցն** Աստուածաշունչ բանքն…» («Երանելոյ տեառն Գրիգոր Նիւսացւոյ եպիսկոպոսի եղբաւր Բարսղի թուղթ յաղագս Երգոյ Երգոցս». նույն տեղում, 206):

Այսպիսով «մանր» գեղագիտական չափանիշը կապվում է մի կողմից մանրակրկիտ-մանրազարդ արվեստավոր իրագործման, մյուս կողմից՝ առավել «նոսր», նուրբ-ոգեղեն թափանցումների, մանվածապատ հյուսվածքի բազմաշերտ բանալիների մեկնաբանությունների հետ: Սա միանգամայն համապատասխանում է և մանրուսման արվեստի չափանիշներին՝ իրար մեջ ավելի ու ավելի զատվող-հղկվող «մանրեղանակներով» և «զարդանախշվող» ձայնավորների դրվագումներով[7], սրանք հեղեղող տարատեսակ կատարման կերպերով[8],

[7] Մանրուսմունքներում երաժշտական նյութը հիմնականում բաշխվում է առանձին, ընդարձակ եղանակավորվող վանկերի վրա, որ ներդիրի տպավորություն են թողնում: Ընդ որում, ամենուր հարուստ զարդոլորված է նույնիսկ «**ը**» ձայնավորը. ՄՄ 8587. 136բ. [կովք]), իսկ «է» և «ի» ձայնավորներով վանկերի եղանակման ժամանակ հաճախ ներմուծվում են «կեղծ» ձայնավորներ. օրինակ. ՄՄ 6107. 106բ. . ՄՄ 8570. 103ա. : Ինչպես տեսնում ենք, այս վանկերը հյուսվում են հիմնականում միևնույն մոտիվների վրա՝ գլխավորապես «ամենաավարտուն», ամբողջ երաժշտական դարձվածք կամ ելևէջ մատնանշող *որոպ* ընտանիքի խազերով (, ,  և այլն), որ հատուկ են հարուստ, զարդոլորուն երգասացություններին: Այս հարահոս, միաժամանակ «կանգնած», «ի շրջանս յուր վերադարձող» պտույտները պետք է որ ներգործության մեծ ուժ ունենային: Առհասարակ «կեղծ» վանկերի ներմուծումը հատուկ է բյուզանդական երգեցողությանը իր ծաղկման շրջանում (տե՛ս օրինակ **Герцман Е.,** 1988, 143–144):

[8] Մանրուսմունքները հատկապես հարուստ են կատարման այլևայլ մանրամասներ մատնանշող խազերով. դրանք են նախ տառ-խազերը, որ դրվում են հիմնական խազերի տակ: Տառխազերի վերծանության պատառիկ է բերում Ե. Տնտեսյանը Երուսաղեմի Ս. Յակոբեանց վանքի մի ձեռագրից՝ «բ [բարձր], դ [դարձ], զ [զարկ], թ [թանձր], լ [լայն], ծ [ծանր], կ [կամաց], յ [յետ ձգէ], շ [շատ], պ [պինդ], ս [սրէ], վ [վերցո], ց [ցած], ք [քաշ]» (**Տնտեսեան Ե.,** 1933, 48, տե՛ս նաև **Թահմիզյան Ն.,** 2003, 121–122): Հաճախ նույն տառ-խազը դրվում է անընդհատ, միև նույն կրկնվող հիմնական խազի տակ.  (ՄՄ 8573. 239բ): Հիմնական խազերի տակ դրվող հավելյալ նշաններով (շեշտեր, ստորակետեր, կետեր) հատկապես հարուստ է ՄՄ 763 ձեռագիրը: Համեմատության համար բերում ենք նույն գրչի ձեռքին պատկանող ՄՄ 753-ին զուգահեռ մի քանի օրինակներ՝ հավելյալ նշաններով և առանց սրանց. ՄՄ 753. 26բ , . ՄՄ 763. 48ա , . ՄՄ 753. 95ա. . 763. 146ա.  (առաջին օրինակում ՄՄ 763-ում հիմնական *որոպ* խազերի տակ ավելացված են ստորակետեր, երկրորդում՝ ՄՄ 753-ի մեկ «դ» հնչյունի փոխարեն ՄՄ 763-ում չորս

որ իրենց նրբակերտ ոլորումներով հարստացնում ու միաժամանակ ավելի «նոսրացնում»-«տարածում», թեթևացնում են երաժշտական-բանաստեղծական հյուսվածքը:

Միջնադարյան ավանդույթի մեջ առկա է նաև գրերը կուլ տալու, «մանր» ուտելու [մանրատել-ծամելու], մանր աղալու խորհրդապատկերը գիտելիքի յուրացման, այն սեփական՝ ներքին իրողության վերածելու իմաստով: Սրա սկզբնաղբյուրն է Եզեկիելի տեսիլը[9]: Իմաստների խորքային ընկալման՝ գրերը կլանելու այլաբանությունը հայտնվում է «Յոթնագրերում». «եւ զէ.[7] ձայնաւոր գիր ի հետ եւ կուլ տուր» (ՄՄ 6962, 55բ[10]): Որպես խորհուրդները դանդաղ ճաշակելու, ծամծմել-փշրելով պատճառը քննելու ընթացք Փիլոնը մեկնում է դրախտի ծառերից օգտվելիս «ուտելով կերիցիս» [«ուտելով կուտես»] Աստծո հորդորը (Ծն. Բ. 16)[11]: Քրիստոսը «մանրում է» խորունկ իմաստները՝ պարզ առակներով դրանք հասանելի դարձնելով («**մեկնողութեամբ մանր գործելով լսաւղացն զհոգեւոր կերակուրն**». Եղիշե, Արարածոց մեկնութիւն, էջ 891): Լամբրոնացին «Սաղմոսների մեկնությունն» ավարտում է նույն պատկերով. նա մանրատում է

«դ» է): ՄՄ 752-ում (1314 թ.) հավելյալ խազերը, ինչպես նաև խմբագրական տարբերակ ներկայացնող երաժշտական դարձվածքները, դրվում են հիմնական խազերից վեր կամ վար՝ կարմիր թանաքով. ՄՄ 752. 96բ. , : Առաջին օրինակի նույն վանկում ՄՄ 753 ձեռագրում հիմնական խազերը և նրանցից վերև դրված տարբերակը բաշխված են տարբեր տների նույն հատվածի վրա. 131բ , 132ա. , իսկ երկրորդ օրինակում բացակայում են հիմնական խազերի տակ դրված շեշտերը. ՄՄ 753. 131 բ. :

[9] «Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ՝ զոր ինչ գտանես ի դմա՝ կեր: **Կե՛ր մանր զմատեանդ զայդ…** Եբաց զբերան իմ, եւ ջանբեաց զմատեանն: Եւ ասէ ցիս, Որդի մարդոյ՝ **բերան քո կերիցէ, եւ որովայն քո լցցի ի մատենէ այտի, որ տուաւ քեզ**: Կերայ զայն, եւ եղեւ ի բերան իմ իբրեւ զքաղցրութիւն մեղու» (Եզէկ. Գ. 1–3):

[10] Այս հատվածում նկարագրվում է՝ ինչպես յոթ բանալի-հնչյունների դռներով հոգին թափանցում է Աստծո գիտության դաշտը, ուր հրեշտակները խոսում են իր հետ «առանց վանկի» անճառելի խոսքով, որ ինքը երբևէ չի լսել, և որը սկսում է բխել և իրենից:

[11] Աստված ասում է ոչ թե սոսկ՝ «կուտես», այլ՝ «ուտելով կուտես», «այսինքն՝ մանրատել-փշրելով ու ծամծմելով՝ ոչ թե անկիրթ մարդու, այլ ըմբշի նման կերակուրը [յուրացնելով]»: Նրանց մարզիչները հրահանգում են ոչ թե խոշոր-խոշոր կուլ տալ ուտելիքը, այլ **ազատ, ժամանակ տրամադրելով մանրացնել** («ոչ կոտորատել, այլ պարապով մանրել»), որ [ուտելիքը], բազմանալով, ուժ տա: Մարդը կերակրվում է միայն ապրելու, իսկ ըմբիշը՝ պարարտության, գիրանալու և հզորության համար: Նույն կերպ հոգևոր ոլորտում սոսկ ուտելը բարքերի, սովորույթի ուժով գործելն է, իսկ «մանր» ծամելը՝ պատճառի քննությունը, գլխավոր հանդերձը հանելով՝ «ուտելով», և պատճառն առանձնացնելով, այն մերկացնելն ու բացահայտելը (Փիլոն, 1892 [Աստուածային աւրինացն այլաբանութիւն], 139–140, հուն.՝ **Philo,** *Legum allegoriae*, 1.98–1.99):

հոգևոր կերակուրն ու տալիս իր եղբայրներին, որ օգտվեն սրանց աստվածային իմաստների սեղանից [12] (նույնը տե՛ս Նյուսացի, վերը, ծան. 6):

Այսպիսով, բացի նուրբ, նրբահայացություն պահանջող իրողությունների հետ առնչվելուց ու սրանք նրբորեն արտահայտելուց, «մանր» եզրը մատնանշում է այդ իմաստների բացահայտման-ճաշակման խորազնին ընթացքը՝ որպես դանդաղ, մանր-մանր ուտելու հոգևոր վարժանք:

Եվ վերջապես «մանր» եզրին, կապված բուն սաղմոսների երգեցողության հետ, հանդիպում ենք Աթանաս Ալեքսանդրացու՝ հայ մատենագրության մեջ որպես Սաղմոսարանի Նախադրություն շրջանառվող գրվածքում[13]: Այն հատվածում, որտեղ խոսվում է սաղմոսների՝ ամեն ինչ ներառող բովանդակության մասին, և որպես օրինակ թվարկվում են որոշները, հայերեն բնագրում զուգահեռ բերվում են և սրանց կատարման հետ կապվող բնորոշումներ («մեծաձայն», «քաղցրանվագ» և այլն. «Ըստ նմին օրինակի և գիրք Սաղմոսացն ունին զպէսպէս միտս զամենայն գրոց յինքեանս. և զայս **լայնաձայն քաղցրանուա՛գս սաղմոսէ** [τῇ κατὰ πλάτος φωνῇ μέτὰ μέλους ψάλλει] յերգելն իւրում». էջ 622. p. 20.16–20): Հետաքրքիր է, որ սա արտացոլված չէ հունարեն բնագրում[14]: Այսպես՝ Աստծո զորությամբ բարձրացող հոգին նրան դիմում, փառաբանում է «**մեծաձայն**»՝ բարձրաձայն, ուժգին[15], իսկ Աստծո օգնությանն ապավինելու

---

[12] Եւ յառազաստ պարու քո[յ]ին հանդիսի.
Հոր ի խնջոյս նոր յեղանակի:
…Եւ կարգեալ տնտեսս քեզ ըստ ոչ արժանի.
Զծառայակի՛ցս *իմ կերակրեցի*:
Եւ զքանքարս տուեալ ի յիս Տէրունի.
Ահա ի սեղանաւորս քո սփռեցի:
Եւ ի սաղմոսս, որ ի լեզուաց եղբարցդ իմ երգի.
Իմաստութեամբ ասել յայտնեցի:
Եւ զհացս, որով հոգի ամեն կերակրի
Մանրել ուտել ձեզ պատրաստեցի (ՄՄ 1526, 852բ):

[13] Այս բնագիրն իրականում հատված է Մարկելիանոսին ուղղված Ալեքսանդրացու նամակից (Athanasius. Epistula ad Marcellinum de anterpretatione Psalmorum. *MPG* 27, p. 12–45):

[14] Այսպես՝ պարզապես հունարեն ψάλλει բառը հայերեն թարգմանված է տարատեսակ արտահայտություններով. ամենապարզը «երգեալ՝ նուագէ» բառակապակցությունն է (**Աթանաս,** 1899, [Յառաջաբան], 616, 623, 639, 633. նաև՝ «երգեա՛ և նուագեա՛», «երգեալ նուագեա՛». հմմտ. **Athanasius,** Epistula, p. 12. 41), կան սակայն և նկարագրական արտահայտություններ, ինչպես «սքանչելագործ երգս առեալ՝ և ասէ» (Սղմ. ՂԷ, էջ 617- հուն.՝ ᾄδει καλῶς, p.12. 48) «երգս առեալ… ասէր» (էջ 619. ᾄδει. p. 13.57), «երգս առեալ նուագէ և ասէ» (էջ 617, նաև էջ 623. հուն. միայն՝ ἐμφάινει… λέγων. p. 13. 18–19), «յամենայն երգս իւր նշանակեալ նուագէ» (էջ 618. ἐν ἑκαστῳ σημάινει. p. 13. 44), պարզապես՝ «նուագէ» (էջ 618. ψάλλει. p. 13. 53), «նուագեսջի՛ր» (էջ 635), «նուագէ ասելով» (էջ 619. περιέχει λέγουσα. p. 16. 5), «գոչելով նուագէ» (էջ 619. ἔμφασιν… λέγων. p. 16. 24-25), «երգս առեալ սաղմոսէ» (էջ 623), «մեծաձայն գոչէ և ասէ» (էջ 617. ψαλμῷ λέγων. p. 27.12.49), «այլ վաղվաղակի յայտնապէս գոչելով, նուագէ խրատութիւնս» (էջ 619. ἀλλ᾽ εὐθύς ἔμφασίν τινα δίδωσιν… λέγων. P. 16. 24–25):

[15] «**Մեծաձայն**» երգելը կապվում է ՃԺԳ սաղմոսի հետ («մեծաձայն գոչէ». Աթանաս, 1899 [Յառաջաբան], էջ 617), որ ներկայացնում է Աստծո անասելի զորությունը, նրա իրագոր-

սաղմոսներում՝ «**լայնաձայն**»՝ համարձակաձայն (նաև՝ «լայն կերպով, լայնաբար, ճոխաբար»), «**մեծ և լայն ձայնով**»[16]: ԻԸ սաղմոսը, որի բնաբանն է «Տիրոջ ձայնը փոթորկի մեջ», կատարվում է «մեծաբարբառ», յուրաքանչյուր տունն էլ՝ «**մանր-մանր**» նվագելով բոլոր գործերը[17]. այս դեպքում «մանր»-ը մատնանշում է բազմազան զորությունների թվարկումը, որի պատկերներով հագեցած է սաղմոսը: «Գեղեցկախառն», «մանր» Դավիթը նվագում է ՃԻԵ՝ «օրհնութիւնք աստիճանաց» սաղմոսը[18], մեծաձայն գոչումով, քաղցր ձայնով և «աղեներգործությամբ» «մանր» նվագելով՝ ԽԶ սաղմոսը[19]: Ապագայի տեսիլների, փառաբանության հետ կապվող նշված երկու սաղմոսի դեպքում էլ «մանր նվագը», բացի հարուստ տեսարանների մանրամասն նկարագրությունից, կա-

---

ծած հրաշքները իր ժողովրդին Եգիպտոսից դուրս հանելիս (Սղմ. ՃԺԳ. 3–4. «Ծովը տեսավ և փախավ, Հորդանանը հետ դառավ: Սարերը խոյերի պես վեր վեր խաղացին, և բլուրները՝ գառների պես»): Այս կատարումը նշվում է դարձյալ Աստծո զորությունը մատնացույց անող ԺԹ. 8–10 սաղմոսատան կապակցությամբ («**մեծաձայն գոհանալով նուագէ** և ասէ». էջ 618. հուն. միայն՝ ψάλλει… λέγων. p.13. 29):

[16] «**Լայնաձայն**» և «**քաղցրանվագ**» Աթանասը պատվիրում է սաղմոսել, երգելով ԼԶ. 8. տեղին («Դադարի՛ր բարկությունից և թո՛ղ տուր սրտմտությունը. մի բարկանար՝ որ չար գործես»). «և զայս լայնաձայն քաղցրանուագս սաղմոսէ յերգելն իւրում. օրհնադրեալ հրաման տայ» (Աթանաս, 1899 [Յառաջաբան], էջ 622): Է. սաղմոսի հետ կապված նշում է. «*մեծ* և *լայն* ձայնիւ երգեա՛ և ասա… «Տէր Աստուած իմ, ի քեզ յուսացայ» (էջ 633): Հանդերձյալ կյանքի, երկնային ոլորտների հետ կապվող սաղմոսի դեպքում երգեցողությանը միանում է պարը. «Եւ եթէ կամիցիս գիտել՝ թէ որպէս արժան է լինել երկնային քաղաքացն քաղաքակից և բնակակից, *երգս առեալ պարելով նուագեա՛* զԺԴ. Սաղմոսն. «Տէր՝ ո՛վ կացէ ի խորանի քում» (Սղմ. ԺԴ. 1. էջ 634):

[17] «Ի ԻԸ սաղմոսին՝ մեծաբարբառ գոչէ երգելով (**հուն. միայն՝** ψαλμῷ. p. 13. 14–17) և ասէ … և այլն՝ մի ըստ միոջէ, **մանր նուագելով զամենայն գործն և զզօրութիւնսն, քաղցր ձայնիւ նուագէ**» (Աթանաս, Յառաջաբան, էջ 617): Սղմ. «Տիրոջ ձայնը զօրությունով է…Տիրոջ ձայնը փշրում է մայրերը… Եվ նրանց վեր-վեր է վազել տալիս հորթերի նման… Տիրոջ ձայնը կրակի բոցեր է ճեղքում… Տերը նստում է ջրհեղեղի վրա. և Տերը թագավոր կնստի հավիտյան…»:

[18] «Եւ վասն զրոցն Եզրի ի ՃԻԵ. սաղմոսին ասացեալ է, որ են օրհնութիւնք աշտիճանաց. **գեղեցկախառն մանր նուագէ** [τῶν ἀναβαθμῶν ᾠδει] և ասէ». էջ 618, p. 13. 34–35): Այս սաղմոսի բնաբանն է «Վերադարձի երգ» («Օրհներգություններ բարձունքի աստիճանների վրա», Աստուածաշունչ, 1994), կամ «Սիոնի գերիների ազատությունը. աստիճանների երգ» (Աստուածաշունչ, 1895. այստեղ՝ Սղմ. ՃԻԶ): Սղմ. «Երբոր Տէրը Սիօնի գերութիւնը դարձնէ…Այն ժամանակ մեր բերանը կլեցուի ծիծաղով եւ մեր լեզուն ցնծութիւնով… Այն, որ գնում է եւ լաց լինում՝ ցանելու սերմը տանելով, գալով կգայ ցնծութիւնով՝ իր ցորենի խուրձերը բերելով» (Աստուածաշունչ, 1895):

[19] «Եւ ի ԽԶ. Սաղմոսին՝ **մեծաձայն գոչէ հնչմամբ** և **փառաբանեալ աղէներգործութիւնս հնչողական քաղցր ձայնիւ՝ մանր նուագեալ եղանակէ** և ասէ. «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, գոչմամբ Տէր ձայնիւ փողոյ» [հուն. միայն՝ ἐν δὲ τεσσαρακοστῷ]. p. 27. 17. 15, էջ 621): Այս սաղմոսում ևս շեշտված է փառաբանության երգեցողությունը. Սղմ. «Բոլոր հեթանոսներ, ծա՛փ զարկէք, ցնծութեան աղաղակով դիմեցէ՛ք Աստծուն…Աստուած բարձրացաւ օրհնութեամբ, եւ մեր Տէրը՝ շեփորների ձայնով: Սաղմո՛ս երգեցէք մեր Աստծուն, սաղմո՛ս երգեցէք մեր թագաւորին, սաղմո՛ս երգեցէք…» (Աստուածաշունչ, 1994):

րող է մատնացույց անել ցնծագին երգն ուղեկցող նրբակերտ, զարդանախշող նվագակցությունը:

Այսպիսին է «մանր»-ի հետ կապվող ընկալումների միջավայրը. «մանր» արվեստի՝ որպես առավելագույն մշակվածության, կաղապարների մեջ նորանոր շերտավորումների արվեստի ցուցադրությունն են մանրուսման ձեռագրերը (ինչպես նշեցինք, մանրուսմունքներում առկա են ութ հիմնական ձայնեղանակներից ածանցված բազում չափանմուշ եղանակներ):

Առհասարակ, որքան ավելի հաստատված են չափանմուշ-բանաձևերը, այնքան ավելի նրբացող-«մանրացող» են դառնում սրանց մեջ շարժերը, զատումներն ու խոտորումները, զգայուն՝ դրանց ընկալումը, ինչպես նաև արտաբերման վարպետությունը, ուր տեղադրվում է ողջ ստեղծագործական խտությունը[20]: Բացի այդ՝ ինքին այդ չափանմուշներն այնքան շատ են ու հարուստ, որ դրանց իմացությունն իսկ կլանում է մեծ ներուժ և սրանց արտացոլման դաշտը վերածում *մտածվող հնարավոր բոլոր ձևերի ընդգրկման*: Այսպես ձեռագրից ձեռագիր, դարեր շարունակ անցնում է մանրուսմունքների հիմնական երաժշտական նյութը՝ առանց որևէ փոփոխություն կրելու: Սա զարմանալի հավատարմություն է բնօրինակին, եթե պատկերացնենք, որ այն բառիս բուն իմաստով ներկայացնում է «մանրուսմունք»՝ մանրամասն վերլուծական-նկարագրական գրառում՝ հարուստ «խիտ» խազախմբերով, դրանք ուղեկցող կատարման նրբերանգներ, երաժշտական նյութի կազմակերպման հետ կապված հավելյալ ցուցումներ մատնանշող տրոհման նշանների, շեշտերի, տառերի մանրակրկիտ շարահարումով: Եվ ահա այս նշանների՝ հատկապես տառ-խազերի գործածումը շատ ավելի ազատ է և փոփոխվում է նույնիսկ նույն գաղափար օրինակից օգտվելու, նույն գրչի առկայության դեպքում[21]՝ ի տարբերություն հիմնական խազերի, որոնք փոխանցվում են բարձրարվեստ ճշգրտությամբ: Այսպիսով նյութի յուրացման մեջ ստեղծագործական սկիզբն ի հայտ է գալիս ա. կատարման նրբությունների, հնարանքների ու մանրամասների մեջ (մանրեղանակները ևս հաճախ ծնունդ են առնում կատարման որոշակի ձևից, ինչը ցույց է տալիս մեկ սկզբունքի՝ ասենք միայն անընդհատ կրկնվող խազի վրա հիմնվող

[20] Նույն կերպ կիրառվում են խազերը՝ հիմնվելով նախապես յուրացված բանալի ձայների վրա, ըստ սրա էլ ձեռք բերելով հաստատված «ինչույթների» մեջ «ազատ տեղաշարժման»՝ որոշակի տարբերակումների հնարավորություններ: Խազագրության սկզբունքն իսկ՝ մանրակրկիտ-նկարագրական, սրանով էլ՝ ոչ այնքան ճշգրիտ ֆիքսող, որքան ասոցիատիվ-հուշարար, այս ընկալումների վառ օրինակն է:

[21] Այս տեսակետից կարելի է համեմատել, օրինակ, ՄՄ 753, ՄՄ 763 ձեռագրերը: Երկուսն էլ գաղափարել է Արիստակես գրիչը Ավագ վանքում (Երզնկա) երեք տարվա տարբերությամբ (ՄՄ 753՝ 1405 թ., ՄՄ 763՝ 1408 թ.):

հյուսվածքը[22]), բ. ավելի մասնավոր տարբերակումների մեջ, գ. արդեն հստակորեն ամրապնդված երգասացությունների մեջ «բացվող» հանկարծաբանական հատվածների՝ ըստ ցանկության ընդարձակվող ու կրճատվող ձայնավորների զարդոլորումների «երկրորդ հարկի» մեջ: Այս բոլորը խոշոր առումով վերաբերում են միևնույն՝ անփոփոխ նյութի ավելի «խորը» յուրացման-արտածման ոլորտին. այստեղ ստեղծագործությունը նույնանում է կատարման եզակի գործողության, վարպետության հետ:

Այսպես «մանր» և «նուրբ» հասկացությունները դիտվում են իբրև հոգու հայեցման կամ արտահայտչականության ավելի բարձր ձևեր («այլաբանության»՝ ձևի մեջ նոր ձևի դրվագման, նոր վերակերպումների բացման հմտություն). այս նրբարվեստ ոճի և հնարանքների ամբողջությունն է «մանր» ուսմունքը:

2. «Ուղիցի» մանրեղանակների անվանումները, սրանց փոխառնչությունները, բնույթն ըստ անվանումների և խազային պատկերի

Մանրուսմունքներում, ինչպես նշեցինք, զետեղված են ութ-ձայնի մեջ ևս ճյուղավորվող, ենթաբաժանվող չափանմուշ եղանակներ՝ մեղեդիական-տիպական բանաձևեր: Սրանք հյուսվում են միևնույն սաղմոսատողի վրա («Ուղիղ եղիցին աղաւթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր: Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի». Սղմ. ՃԽԱ. 2), ըստ որի համառոտ կոչվում են «ուղիցի»: «Ուղիցի»-ն, այսպիսով, ունի նաև զուտ ծիսական նշանակություն. այն կատարվում է երեկոյան մեսեդիներից հետո[23]՝ ըստ օրվա խորհրդի և ձայնեղանակի (մանրուսմունքներում երբեմն որոշ «ուղիցի»-ներ զետեղված են իրենց համապատասխան մեսեդիներից հետո): Մանրուսմունքներում սակայն «ուղիցի»-ների քանակն անցնում է հարյուրից: Սրանք տեղադրված են առանձին բաժնում՝ յու-

---

[22] Սրա ամենաբնորոշ օրինակներից է ամբողջությամբ *բեննորճների* խազախմբերից հյուսված «ջահրիկ» մանրեղանակը.  (ՄՄ 763. 281բ): Հավանաբար անմիջապես իրար հաջորդող նույն խազի խտացումներից ծավալվող, իրենց հերթին կրկնվող մոտիվները ինչ-որ կերպ թռչնի ելևէջում են հիշեցնում. ՄՄ 591. 227ա , : Նման կրկնվող մոտիվների վրա է հյուսված «արծիվ» եղանակը. սա առհասարակ բնորոշ է մանրեղանակներին (այլ օրինակները ստորև).  Բեռլինի պետական գրադարան. ձեռ. 279, 127ա:

[23] Մեսեդիները երեկոյան ժամի երգասացություններ են, որ կատարում են նույն պաշտոնը, ինչ գիշերային ժամի մեջ ալելուներն ու առավոտյանի առավոտերգերը (փառաբանության կանչ, որ երգվում են կամ թիվ ասվում երեկոյան ժամասացության մաղթանքի ու քարոզի միջև): Առաջացել է հունարեն μεσῳδία μεσῳδός ձևերից՝ որպես երկու երկար տների միջև երգված միջանկյալ կարճ տուն [μέσος. միջին երգ]՝ ՆԲՀԼ:

րաքանչյուրը լուսանցքում նշվող իր անունով, որ երաժշտական նյութի, կառույցների տարրորոշման և գունեղ ձևակերպման միջնադարյան բացառիկ նմուշ են՝ պատկերների, տրամադրությունների, ձայնային միջավայրների խայտաբղետ շղթայով[24]:

Մաշտոցյան Մատենադարանի բոլոր մանրուսման ձեռագրերի, Բեռլինի պետական գրադարանի մանրուսմունքի (ձեռ. 279) մանրակրկիտ ուսումնասիրությունը[25] (անունների, խազային հյուսվածքի) և Երուսաղեմի հավաքածուի ձեռագրացուցակների համեմատությունը[26] ցույց է տալիս, որ «ուղիցի» եղա-

[24] Ն. Թահմիզյանը մեկ ձայնի մեջ մի քանի տեսակ չափանմուշների գոյության զուգահեռներ է անցկացնում հայ և ռուս միջնադարյան երաժշտական փորձառության միջև՝ «Ուղիցի» հատվածների եղանակները համադրելով ռուսական «Азбука» երաժշտատեսական մատյանների «Фитник» անվանվող հատվածների հետ: Այստեղ նույնպես ամփոփված են մեղեդիական տիպական ծավալուն կառույցներ՝ фита-ներ (**Թահմիզյան Ն.,** ԲՄ 13, 1980, 115), որոնց 127 անվանումների ցանկը բերում է հեղինակը (էջ 115–116): Մենք մեր կողմից ուզում ենք ավելացնել որոշ զուգահեռներ այստեղ ներկայացված եղանակների և մանրուսման մանրեղանակների նույն կամ նույնատիպ անվանումների միջև՝ որպես առհասարակ միջնադարին հատուկ ընդհանուր ընկալումների արտահայտություն. волынка – ծնծղա, баран, кобыла или ослица – ոչխար, греков ключ – հոռոմ, հոռմակ, Давидова – Միքայել, Գաբրիել, девическая (девственная), юница – անմեղուկ, իմաստնակ, իրիցկին, князи – թագավոր, кудрявая – գռուզ, զգած, О како, Око сердца – ովէսայ, плач, скорбная – լալկան, полукулизменная, преложительная, рука десная – խեղեփմատն, роговая-փողն, храпливая – կակզոտ, громкая, громогласная, гром большой – ճիչող, красная – գոյնիկ, хромец – կաղն, полу – սկզբով անվանումները (полукулизменная, полукобылие) կարող ենք համադրել «ձագն», «խեղեփ մատն» եղանակների հետ:

[25] Մանրուսման հնագույն նմուշը՝ նրանից պահպանված մի պատառիկ, զետեղված՝ Երուսաղեմում գաղափարված ՄՄ 9838 ճոխ շարակնոցում (1193 թ.): Այն իրենից ներկայացնում է միայն «ուղիցի» մի փոքր հատված՝ Դձ յոթ եղանակ (248ա–249ա): ՄՄ 53 մանրուսման ձեռագրերից չունեն «ուղիցի»-ներ **ՄՄ 760**-ը (միայն «աղուհացից» մեսեդիների «ուղիցի»-ները, որ ձեռագրերում առանձին են ներկայացվում), ՄՄ **2033**-ը, **2425**-ը, **3663**-ը, **6145**-ը (միայն «աղուհացից» երկու «ուղիցի»), մանրուսմունքների միայն կեսը պահպանած ՄՄ **8466**, **9553**, **720**, **8647**, **767** («ուղիցի»-ների ավարտից երկու եղանակ), **8657**, **754**, **9553**, **768** (միայն «ուղիցի»-ների ավարտը) ձեռագրերը: ՄՄ **769**-ում ներկայացված են միայն Աձ «ուղիցի»-ները և մի քանի ծիսական նշանակություն ունեցող «ուղիցի»-ներ մեսեդիների շարքում, ՄՄ **766**-ում Գկ-ի «խեղեփն մատն» եղանակից ընդհատվում է, **ՄՄ 3474**-ում կա միայն երկու «ուղիցի» (բուն Աձ և «զգածն»), **ՄՄ 7209**-ում՝ միայն Աձ, ծիսական Ակ «եկեղեցու» և Դկ «գալստյան» «ուղիցի»-ներ: **ՄՄ 9337** ձեռագիրն ամբողջությամբ պակասավոր է և սխալ կարված (7 ա-ից՝ Բձ երրորդ «ուղիցի»-ից մինչև վեցերորդը՝ «անձէղն», բոլորն առանց անվանումների, Բկ՝ դարձյալ առանց անունների մինչև «մեղու»-ի կեսը, կան նաև ետևառաջ կարված «աղուհացից» մեսեդիներն իրենց «ուղիցի»-ներով՝ 18ա-բ, 23ա), **ՄՄ 761**-ն ունի մի քանի «ուղիցի» տարբեր բաժիններում՝ համապատասխան մեսեդիներից հետո (88ա-բ):

[26] Երուսաղեմի հավաքածուի նկարագրությունն այս տեսակետից առանձնահատուկ արժեք ունի, քանի որ միակն է, որտեղ ներկայացված է մանրուսման յուրաքանչյուր ձեռագրի *«ուղիցի» բաժինն իր եղանակների անուններով*: Այստեղ նկարագրված 31 մանրուսման ձեռագրերից «ուղիցի» ունեն միայն 19-ը, և այն էլ ոչ ամբողջական՝ տե՛ս **ՑՁԵ Բ**. **Եր. 503** (մինչև Բկ կեսը՝ շար. Թափված.), **ՑՁԵ Դ՝ Եր. 1272** (Աձ, Ակ-ի կեսը), **1635** (միայն Աձ), **ՑՁԵ Ե՝** Եր. **1654**

նակների ընդհանուր քանակը հասնում է 133-ի (միավորելով տարբեր անուններով նույն եղանակներն ու զատելով նույնանուն տարբեր եղանակները)[27]: Այս եղանակների հիմնական մասը (նշում ենք թավ տառատեսակով) հանդիպում է բոլոր «ուղիցի» բաժին ունեցող ձեռագրերում, սրանց անունների հիմնական տարբերակը՝ ձեռագրերի մեծ մասում: Եղանակների հաջորդականությունը ևս, հազվադեպ բացառություններով, չի փոխվում[28]: Յուրաքանչյուր ձայնի վերջում («ուղիցի»-ները, ինչպես նշեցինք, խմբավորված են ըստ ութ հիմնական ձայների) կան հավելյալ եղանակներ, որոնք, ըստ երևույթին, առաջացել են ժամանակի ընթացքում: Սրանք սովորաբար կոչվում են «աւելի» (նաև կրճատ «աւ», «աւէ» և այլն) կամ «չոր» (վերջիններս կատարվում են «պահոց» շրջանում): Մանրուսման պահպանված հնագույն՝ ԺԲ դարին պատկանող պատառիկում սակայն Դձ յոթ եղանակների մեջ կա նաև «աւելի». նման եղանակներ այսպիսով առկա են դեռ մանրուսման արվեստի վաղ փուլում (տե՛ս ՄՄ 9838. 249ա):

(մինչև Ակ-ի կեսը, որից հետո միայն Դկ «զալստյան» եղանակը), **1685, ՑՁԵ Զ՝ Եր. 1703, 1724, 1736, 1737** (մինչև դձ-ի կեսը), **1738** (միայն Աձ-ի կեսը, որից հետո երկու ծիսական կիրառություն ունեցող Ակ «եկեղեցու» և Դկ «զալստյան» եղանակները), **ՑՁԵ Ը՝ Եր. 2430, 2431, 2433** (միայն Աձ), **2434, 2435** (այս ձեռագրում «ուղիցի»-ները, ելնելով նկարագրությունից, սխալ են կարված՝ «պահոց» մեսեդիներից հետո գալիս են Աձ եղանակներն առանց խորագրի, որ ընդհատվում են կեսից և Ակ բոլոր եղանակների հետ միասին շարունակվում «ուղիցի»-ների կարգի մեջ, այնուհետև գիշերային քարոզների մեջ կարված են Դկ բոլոր հիմնական եղանակները, բացի ծիսական «աղաչանք» և «զալստյան» եղանակներից. տե՛ս ՑՁԵ Ը, էջ 214, 249), **2436** (չունի Բձ, Բկ եղանակները), **2438, 2492, ՑՁԵ Ժ՝ 3420**:

[27] Մանրուսման ժողովածուներին առաջին անգամ անդրադարձել է Ղ. Ալիշանը՝ բերելով այս ծիսամատյանների «ուղիցի» բաժնում ներկայացվող երաժշտական մոտ 70 եղանակների անվանումները (Ալիշան Ղ., 1885, 254), այնուհետև՝ Կոմիտասը՝ հավելելով ևս 46 անուն, ըստ իր ձեռքի տակ եղած ձեռագրերի, և դասակարգելով եղանակներն ու փորձելով տալ սրանց մոտավոր քանակը (Կոմիտաս, Հայոց եկեղեցական եղանակները. Մանրուսումն, տե՛ս Կոմիտաս, 2005, 62-75): Մանրուսման առանձին եղանակների վերաբերյալ արժեքավոր դիտարկումներ է կատարել Ն. Թահմիզյանը (**Թահմիզյան Ն.,** ԲՄ, 13, 108–138, նաև **Թահմիզյան Ն.,** 1969, 194–205): Եղանակներից մեկի՝ «յեղմուկ»-ի նշանակությանն անդրադարձել է Ա. Արևշատյանը (Արևշատյան Ա., 2002, 196-197): Անունների նշանակության համար կարևոր է առաջին հերթին «ուղիցի»-ների *ամբողջական-համեմատական* տախտակի վերականգնումը: Ն. Թահմիզյանն այս տեսակետից նշում է. «Հատուկ խնդիր է՝ մանրուսման եղանակների ճիշտ (կամ մոտավորապես ճիշտ) թվաքանակը որոշելը» (**Թահմիզյան,** ԲՄ 13, 1980, 117): Մյուս հոդվածում էլ կարևորում է մանրեղանակների անվանումների, սրանց տարբերակների և ծիսական կիրառության հարցի քննությունը, որ լիարժեք հնարավոր է միայն մանրուսման ձեռագրերի համակողմանի ուսումնասիրության ու համեմատության շնորհիվ «մի բան, որ անցյալում ըստ էության կատարված չի եղել» (**Թահմիզյան Ն.,** 1969, 201): Սրանց պարզաբանմանը, նաև եղանակների փոխառնչություններին, նվիրված է սույն հոդվածի երկրորդ բաժինը:

[28] Քանի որ սույն հոդվածի նպատակն է երաժշտության հետ կապվող բնորոշումների ընդհանրացումը, չենք բերում մանրամասնորեն «ուղիցի»-ների պատկերն ըստ ձեռագրերի:

Ստորև ներկայացնում ենք բոլոր «մանրեղանակներն» իրենց անունների բոլոր տարբերակներով: Առանձին, մյուս 52 ձեռագրերի եղանակներին զուգահեռ ներկայացնում ենք ՄՄ 751 ձեռագրի «ուղիղի»-ները (1379 թ. Բաբերդ, գրիչ՝ Յոհաննէս կր.). այն իր տեսակի մեջ եզակի, հարուստ դպրոց է ներկայացնում թե՛ ընդհանուր կառույցով, թե՛ «ուղիղի» բաժնով, որտեղ եղանակների զգալի մասը բացակայում է մյուս բոլոր ձեռագրերում: Եղծներն էլ հաճախ ունեն տարբերություններ և հիմնականում կրում են այլ անուններ: Այս ձեռագիրը բացառիկ է նաև հավելյալ եղանակների՝ նույն չափանմուշային-ելևէջային ոլորտում նոր տարբերակների առաջացման ընթացքն ավելի ակնհայտ ցուցադրելու տեսակետից: Այստեղ կան սկզբնաձևից կամ վերջավորող զարդոլորվող վանկից ճյուղավորված մասնակի ձևեր, որոնցից հիմնականում միայն մեկը՝ գլխավորապես առանց անվանման, կարող է անցնել մյուս ձեռագրերին. բոլոր այս եղանակները ՄՄ 751-ում մի շարք են կազմում և ունեն իրենց անունները:

Աձ-ում առկա են 16 մանրեղանակներ՝ ներառյալ բուն Աձ եղանակը. «**1. զգած-դալրուկ**[29]**,** երէց, 2. **իմաստնակ-անմեղուկ,** մաստնակ-մաստնա-իրիցկին-երեցկին-երեցկին մաստուն-հաւատվորն, **3. խաւսող, 4. ձագն, 5. մամկոն, 6. ձագն, 7. հիւանդ, 8. գուսնակ-գուսան, 9. հոռոմ-հոռմակ, 10. ջուլահակ-ջուլհակ, 11. փորակն,** 12. աւելի-չոր, 13. աւելի-չոր, 14. աւելի-չոր, 15. վարազեցի»: Սրանցից տասնմեկը կան «ուղիղի» բաժին պարունակող բոլոր ձեռագրերում, չորսը, ինչպես տեսնում ենք, հավելյալ եղանակներ են, որ տեղադրված են վերջում և շատ ձեռագրերում բացակայում են: Սրանց գումարվում են յոթ եղանակներ, որ կան միայն ՄՄ 751-ում՝ «հոռմակ, հոռոմ (առանձին տարբերակներ, որ ածանցվել են մյուս ձեռագրերի համապատասխան եղանակներից), մովսես, բրաւոր, երկաթ, պիծակ, բոռ»: Նշված բոլոր անունները հիմնականում պարզ են ու հասկանալի՝ հինգը նկարագրում են երաժշտության կամ կատարման բնույթը («զգած-դալրուկ», «իմաստնակ-անմեղուկ», «խաւսող», «հիւանդ», սրանց մեջ կարող է մտնել նաև «փորակն»[30]՝ թռչնի անվանումը, «ջուլահակ» [ջուլհակ] եղանակը): «Խաւսող»-ը նաև երգեցիկ թռչնի անուն է, որի գեղգեղանքները պատկերավոր նկարագրվում են «Գովանք թռչնոց»-ում[31]: Երեք եղանակ մատնացույց են անում հեղինակի կամ մշակութային միջավայրի պատկանելություն՝ դրանք են «մամկոն», «հոռոմ» [կարող է ունենալ ինչպես լատի-

---

[29] Գծիկով ներկայացնում ենք նույն եղանակի մյուս՝ այլ ձեռագրերի խմբում հայտնվող տարբերակային անունը՝ նույնքան հաճախ հանդիպող, իսկ փակագծերում և ոչ թավ տառատեսակով՝ ավելի հազվադեպ կամ միայն մեկ ձեռագրում հանդիպող տարբերակները:

[30] «Փոր»՝ κύκνος. պոր, այն է՝ կարապ թռչունն»՝ ՆԲՀԼ:

[31] «Խաւսաւղն ի տունն կու կենայր, գիշերն երթայր ելներ ի թառ, երբ կուկլուէր, ծափուցն տայր, ի հրեշտակաց առնու բարբառ» (**Կիրակոս Եպիսկոպոս,** ԲՄ 13, 1980, 249):

նական, այնպես բյուզանդական երգեցողության նշանակություն[32]], «գուսնակ» կամ գուսան» եղանակները: Նույն գործառույթն ունի «վարազեցին». այս եղանակը հանդիպում է միայն ՄՄ 9257 ձեռագրում (ԺԴ դ., 1647 թ., 207բ-208ա): Առհասարակ հավելյալ եղանակները, բացի անանուն լինելուց, հաճախ կրում են իրենց ծագումը ցույց տվող անհատական դպրոցի կամ անձի անուն՝ մատնանշելով տարատեսակ ավանդույթների հետագա ճյուղավորում: Հետաքրքիր է, որ ՄՄ 591 ձեռագրում «խաւսող» եղանակի լուսանցքում պատկերված է աքաղաղ (222ա), այս ձեռագրում թռչունների պատկերներ կան և սրանց անունները կրող այլ եղանակների կողքին[33]:

Ելնելով անվանումներից՝ որոշակի կապ է ենթադրվում առաջին զույգ եղանակների միջև: Այսպես, ըստ տարբեր ձեռագրերի, «զգած» կամ «դալրուկ» անունները, որ վերաբերում են նույն եղանակին, մատնանշում են խիտ, «փարթամ» երաժշտական հյուսվածք: Հետաքրքիր է, որ այս եղանակում (ինչպես «հիւանդ»-ում) գերակշռում են *խաղերը*[34], որ ցույց են տալիս ձայնի «ճոճում»-տատանում.  (ՄՄ 753. 174բ): Սա համապատասխանում է եղանակի նշված «զգզգած», «դալար» բնորոշմանը (ՄՄ 751 ձեռագրում «գռուզ»-ն անվանվում է «կիրակմտի»՝ շեշտելով սրա ծիսական նշանակությունը): Իսկ սրան հաջորդող եղանակը կոչվում է «իմաստնակ» կամ «անմեղուկ», որ նույն նշանակությունն ունեն (իմաստության հակառակը): Սրանք պետք է որ հակադրվեն ճոխ-խիտ առաջին եղանակին առավել «նոսր», «ճապաղ» բնույթով: Մեկ այլ տարբերակով առաջին եղանակը կոչվում է «երէց», իսկ երկրորդը՝ «երեցկին», «երէցկին մաստուն»: Երկրորդ եղանակի մեկ այլ տարբերակ է «հաւատվոր»-ը, որ մտնում է նույն իմաստային կարգի մեջ («անմեղուկ»-

[32] «Իբր Հռոմ, այսինքն հռովմայեցի. սեպհական կոչումն լատին ազգի իտալացւոց բնակելոց ի Հռովմ քաղաքի և ի սահմանս նորա. այլ ի փոխադրիլ կայսերութեան ի Բիւզանդիոն՝ յոյնք ևս սկսան ի նոյն անուն կոչիլ»՝ ՆԲՀԼ:

[33] Առհասարակ ՄՄ 591 ձեռագիրը հարուստ է լուսանցազարդերով ու մանրանկարներով, որ վերաբերում են սրբին, իրադարձությանը, որին նվիրված է տվյալ երգասացությունը և զետեղված են սրա լուսանցքում: Այստեղ կան սուրբ Ստեփաննոսի՝ 82բ, Աստուածածնի՝ 87բ, Սիմէոն ծերունու՝ 88ա, Յովհաննէս Մկրտչի՝ 102բ, 191ա (հատված գլխով) և այլոց պատկերները: «Ուղիցի»-ներում «խոսող»-ից բացի թռչուններ պատկերված են «աղվնեկ»՝ 226բ, «անձեղ», «չիտն»՝ 229բ, «կաքաւ»՝ 237ա, եղանակների լուսանցքում:

[34] «Խաղեր»-ի ընտանիքի խազերը (*վերնախաղ* , *ներքնախաղ* , այս երկուսի համակցություն *քարքաշ*) միշտ կապվում են որևէ հեռավորության՝ տոն, կիսատոն կամ ավելի փոքր տարածության վրա ձայնի տատանման հետ, որ ցույց է տալիս և սրանց խազային պատկերը (**Թահմիզյան Ն.,** 2003, 234–237, **Wagner P.,**1912, 74): Կոմիտասը *վերնախաղը* բնութագրում է որպես ձայնի բարձրացում «երեք չորս անգամ խաղցնելով. բարձրացող երգի արագ գեղգեղանքի նշանը» (բերում է օրինակ՝ a-b-a-b,c-d-c-d. Կոմիտաս, Խազաբանութիւն, տե՛ս **Կոմիտաս,** 2007, 391–392):

ի, «իմաստնակ»-ի): Հակադիր անվանումների միջոցով արտահայտվող կապի դեպքում (որպես կանոն, սրանք հաջորդում են իրար), եղանակների առնչությունը հավանաբար ավելի շատ բնույթին է վերաբերում, «կառուցվածքային» չէ, համենայն դեպս չի հայտնաբերվում խազային պատկերի մեջ:

Սրան հակառակ, «ձագն» եղանակները, որ հանդիպում են բոլոր ձայներում, ածանցված են այն եղանակներից, որոնց հաջորդում են (Աձ-ում՝ «խաւսող», «մամկոն»): Նույն բնույթը կրում են «աշակերտ»-«աշկերտ» մանրեղանակները (սրանք հաջորդում են անձ մատնանշող անունով եղանակներին): Սա ակնհայտ երևում է խազային պատկերում. իրար կապված եղանակները հիմնականում ներկայացնում են նույն սկզբնաձևը, տարբերակվում են վերջին մելիզմացվող վանկերը:

Մեր օրինակում սկզբնաձևերը նույնն են մինչև առաջին *վերնախաղը*[35].

ՄՄ 591. 222 ա. խաւսող. . ձագն. 

ՄՄ 753. 175բ-176ա. մամկոն. [մ],

ձագն. :

[35] Առհասարակ բոլոր «ուղիցի»-ները կազմված են չորս, երաժշտական առումով կրկնվող նախադասություններից. հիմնականում շատ հարուստ մելիզմացվում է վերջին վանկը՝ առաջին տողի դեպքում «իմ» («ուղիղ եղիցին աղաւթք **իմ**»). մյուս բոլոր տողերում բերվում է միայն սկզբնաձևը [այս օրինակում միայն *ենթամնան* և *խաղը*], մնացած հատվածը կրճատված է). ՄՄ 753. 174բ : Երբեմն հարուստ զարդոլորված են և վերջին վանկին նախորդող վանկերը: Ընդ որում, այս վերջին վանկը, ինչպես հարուստ զարդոլորվող վանկերի մեծ մասը (տե՛ս նաև վերը) հյուսված է միևնույն մոտիվների վրա (մոտիվներն անջատվում են *վերջակետերով*):

«Խաւսող»-«ձագն» եղանակների կապը ձեռագրերում արտահայտված է և այլ զույգ անուններով՝ «խեղեփ»-«խեղեփ մասն»: Այս երկուսը ևս հանդիպում են տարբեր ձայնեղանակներում՝ մատնանշելով նույն ֆունկցիոնալ կապը:

ՄՄ 751-ում, բացի «հոռոմ»-ից, կա նաև սրանից ճյուղավորված «հոռմակ»-ը (ՄՄ 751. 139ա). այն մոտ է մյուս ձեռագրերի բուն «հոռոմ»-ին՝ որոշ տարբերակային առանձնահատկություններով (հարստացված է *խաղերով*).

ՄՄ 751. «հոռմակ» , «հոռոմ». .

հմմտ. ՄՄ 753. «հոռոմ». :

Նույն կերպ ՄՄ 751-ում կա «մովսես» եղանակի այլ տարբերակ, և սրանից ածանցվող «աշակերտ», որ «մովսես»-ի ճոխացված-ճյուղավորված տարբերակն է («մովսես» եղանակի նույն հիմքը հարստացված է ներդրվող *տրոպերով*): Այս եղանակն անցել է մյուս ձեռագրերին՝ առանց անվանման.

Հմմտ. 751. 139բ. «մովսես». . «աշակերտ». , հմմտ. ՄՄ 591. 224բ. :

Հետաքրքիր անվանում է «ծիծեռն[36] հաթեռքեցի[37]»-ն, որ մատնանշում է մի կողմից ամենաբարձր ձայնն ունեցող թռչնին, մյուս կողմից ծագման՝ տեղանվան պատկանելություն: Վերջապես, այն կարող է լինել Հաթերքում

---

[36] «Թռչուն փոքր, սև, արագաթռիչ, բազմաճիչ»՝ ՆԲՀԼ: «Ծիծեռնիկն եկել ու եկել… Ի տաճարին վերայ նստէր, սաղմոս ասէր ինքն անդադար» (**Կիրակոս Եպիսկոպոս,** ԲՄ 13, 1980, 249):

[37] «Հաթերքի իշխանություն՝ փեոդալական իշխանություն միջնադարյան Հայաստանում՝ Մեծ Հայքի Արցախ աշխարհում». ունենք նաև նույնի «Հաթերք բերդ» (բերդավան, ավան, գյուղ, ճանապարհային կայան), «Հ.–դղյակ» (բերդ Մեծ Հայքի Արցախ աշխարհում. այդ ձևով է հիշատակել այն Մխիթար Գոշը. ավելի հաճախ կոչվել է Բերդաքար») ձևերը՝ ՀՏԲ Գ:

գործած, այս եղանակը հեղինակած երաժշտի մականուն (որ որպես լավ երգեցող կամ երաժիշտ, «ծիծեռն» անունն է ստացել): Դարձյալ՝ այս հավելյալ եղանակը մյուս ձեռագրերում պարզապես կոչվում է «աւելի» (եղանակի մեջ կան որոշ տարբերակումներ՝ հմմտ. ՄՄ 751. 141ա-ՄՄ 7157. 192ա):

Ակ ութ հիմնական մանրեղանակներից («1. **գռուզ-**գռզակ, **2. ցինայ, 3. եկեղեցոյ, 4. քնքշակ-քնքուշ, 5. գոճնակ, 6. աղաւնեկ,** վռզատէք-վռզատէ-ռըզտատէք-վռզ-չորուկ-չոր, **7. ծովցին, 8. ջահրիկ,** 9. տարաւնեցի-տարոնցի-աւել տարոնցի-աւելի, 10. չոր-աւելի») երկուսը՝ «եկեղեցի»-ին և «չոր»-ը, մատնանշում են ծիսական կիրառություն[38]: Նկարագրական բնույթ են կրում «գռուզ»-ը (կարող է մատնանշել, ինչպես «գզած»-ը, խիտ, զարդարանքներով հարուստ երաժշտական հյուսվածք)[39] ու «քնքշակ»-ը, «վռզատէք»-ը (անկախ եղանակի բնույթից, կարող է մատնանշել և արագ կատարման որոշակի հնարանք)[40], պատկերավորնկարագրական՝ «ցինայ»-ն[41], «գոճնակ»-ը (կոչնակ), «վռզատէք»-ի այլ՝ «աղաւնեկ» անվանումը (ՄՄ 591 ձեռագրում այս եղանակի լուսանցքում ևս պատկերված է թռչուն. վերը՝ ծան. 31), ծովային կենդանի ենթադրող «ծովցին»[42] ու «ջահրիկ»-ը[43]: «Տարաւնեցի»-ն մատնանշում է եղանակի ծագումը:

ՄՄ 751-ում կա «վռզատող» անունով այլ եղանակ, որ մի շարք է կազմում հաջորդող «ցինա»-«ձագն» եղանակների հետ (սկզբնաձևով. 285 բ).

---

[38] Դեռևս Ն. Թահմիզյանը նկատել է «չոր» եղանակի ծիսական նշանակությունը՝ հիմնվելով Հայկազյան բառարանի վրա («պահոց և աղօթից հետևելով, չոր ճաշակելով», «չորակեաց», «չորաճաշակ»՝ ՆԲՀԼ): «Չոր» եղանակներն այսպիսով կապվում են պահքի շրջանի և, ըստ երևույթին, «ապաշխարության» կամ «աղուհացից» մեղեդիների հետ (տե՛ս **Թահմիզյան Ն.,** 1969, 199–200): Այս առումով նշում է նաև «գալստեան», «խաչի» մանրեղանակների ծիսական բնույթը:

[39] «Գանգուր* ըստ մազոյն գռուզ, ձաղկ, գանգուր և նուրբ կամ ստուար»՝ ՆԲՀԼ:

[40] «**Վռզատէք,** վռզող՝ անխելք, յանդուգն, ըմբոստ, վզիմ-ընդվզիմ»՝ ՆԲՀ: Նաև՝ «վզտ-վզտ»՝ Վն. արագ-արագ * վզտ-վզտ կը մտնէ կ'ելլէ, վզրտալ՝ Արբ. բան մը արագ արագ ընել»՝ ՀԳԲ Ա:

[41] «Ցին՝ հաւ թռչուն, հափշտակիչ գիշատիչ»՝ ՆԲՀԼ:

[42] «Ծովեցի. ծովային, ծովական, նաւական»՝ ՆԲՀԼ (նույնը՝ ՄՀԲ):

[43] Անորոշ տեսակի փոքր թռչուն: «Գովանք թռչնոց» երկում ջահրիկի ձայնը նմանեցվում է ցածր ձայնով ինքն իր հետ երգող (զնզնացող՝ տե՛ս ՄՀԲ) ճախարակ մանողի հետ («մանծրար»՝ ՄՀԲ. սրանից էլ՝ թել մանելու ճախարակից՝ «ջահրայ»-ից, փաստորեն, ստացել է իր անունը). «Ջահրիկն փոքր էր զետ ծրար ու զընզընայր զեղ մանծըրար» (**Կիրակոս Եպիսկոպոս,** ԲՄ 13, 1980, 254):

վռզատող , ցինա , ձագն :

Սրանք էլ իրենց հերթին առնչվում են հաջորդող «գոճնակ» ու «յետքաշ» եղանակների հետ՝ կազմելով մի շարք. ՄՄ 751. 142ա.

գոճնակ , յետքաշ 

Ակնհայտ է հատկապես «վռզատող»-ի ու «յետքաշ»-ի նույնությունը: Ընդ որում, երկու՝ ըստ էության իրար հակադիր բնորոշումներով եղանակների մեջ տարբերությունը ներդրվող *տրոպերի* մեջ է. արագընթաց, թեթև «վռզատող»-ի համեմատությամբ «հետ ձգող», քաշող եղանակի մեջ վերջին մելիզմացվող վանկում ներդրված են *տրոպերի* կրկնվող մոտիվներ (տե՛ս վերը, ծան. 7), որ ավարտվում են ձայնի տատանումով: Այս ձեռագրում այլ՝ «մեռելքաշ» անունով է հանդես գալիս «աղաւնեկ»-ը[44]:

Բձ ութ եղանակներից («**1. կատուն, 2. ջորէքաշ, 3. արծիւ, 4. ձագ, 5. հովիւ, 6. լալկան**, լալուակն-զառզռու, **7. անձէղ-անձիղ-անձէղ**, չիտ, 8. չիտ-աւելի-աւելոր[ղ]-չոր») նկարագրական է «լալկան»-ը, հետաքրքիր է սրա մյուս՝ ձեռագրերից միայն մեկում հանդիպող «զառզռու» տարբերակը (հավանաբար «զռալ» բառից): Դարձյալ եղանակներից երեքը՝ «արծիւ», «անձեղ»[45], «չիտ»[46],

---

[44] Մի փոքր անհավանական է թվում Ն. Թահմիզյանի ենթադրությունը, որ այս եղանակի անունը կապում է պաշտոնական հուղարկավորության ժամանակ այն կատարելու հետ (Թահմիզյան Ն., 1969, 200-201, ծան. 84): Մեր կարծիքով սա նույն բնութագրող գործառույթն է կրում, ինչ, օրինակ, «ջորեքաշ»-ը:

[45] «Թռչուն նման կկուի կամ կաչաղակի, ի չափ աղաւնոյ, սպիտակափետուր սևախառն, երկայն տտամբ»՝ ՆԲՀԼ: «Երբ որ բարի խապար լսէր, նայ գայր յերդիքըն կարկըչայր» (**Կիրակոս Եպիսկոպոս,** ԲՄ 13, 1980, 246):

թռչունների անուններ են, մեկը՝ պարզապես կենդանու («կատու»), միջավայրը բնութագրող են «հովիւ»-ը, որոշ չափով՝ «ջորեքաշ»-ը (թեև սա ավելի շուտ պատկերավոր-նկարագրական շարքից է): Ինչպես նշել ենք, իրարից անանջատված են ոչ միայն «արծիվ» և «ճազն» եղանակները, որ պարզ երևում է *վանկ* խազերի վրա կառուցված սկզբնաձևում.

ՄՄ 753. 181 ա. արծիւ. . ճազն. , այլև նույն սկսվածքն ունեցող (*վանկ* խազերով կառուցված), սրանց հաջորդող «հովիւ»-ը: Ըստ սրա ձեռագրերում «ճազն»-ը երբեմն հաջորդում է «հովիւ»-ին՝ որպես նրանից ճյուղավորված եղանակ.

ՄՄ 753. 181ա: Սրանց հետ սկզբնաձևով աղերսվում է նաև վերջին հավելյալ «չիտ» եղանակը. ՄՄ 591. 229 բ. :

ՄՄ 751-ում «անձեղ»-ն ունի այլ թռչունի՝ «բազե»-ի անուն: Բացի այդ, այստեղ դարձյալ կան հավելյալ ևս երկու եղանակ՝ «ջաղացք» և «շահեան», վերջինս ևս թռչնի անուն է[47] (առհասարակ 751-ում Բճ-ն ամբողջությամբ կենդանիների, գյուղական միջավայրի պատկերների անունների վրա է կառուցված՝ «կատու, արծիւ, ճազ, բազէ, շահեան, հովիւ, ջորէքաշ, ջաղացք»):

Հետաքրքիր է, որ «լալկան» եղանակում (ՄՄ 751-ում այն համապատասխանում է բուն Բճ եղանակին) գերակշռում են ամենահարուստ զարդոլորվող վանկերին՝ այդ թվում «կեղծ» վանկերով հարուստ դարձվածքներին բնորոշ մոտիվներ (*փաթոյթ*-երեք *տրտոպ-վանկ* հաջորդականություններ. Վերը, ծան. 7).

ՄՄ 753. 181բ. :

Բկ ձայնի մանրեղանակները կրում են կենդանիների ու թռչունների անուններ, որոշակի վանական դպրոցի ավանդույթ մատնանշող անձանց մականուններ. դրանք են՝ «**1. շնորհազարդ**, տաճուտրակ, **2. հաւրնձին**-ուր է հաւրնձին-խաբուսիկ, **3. մեղուն, 4. սբ. նշանեցին, 5. կարմիր վանեցին**, **6. ուղտն**, 7. կոզեռն- կոզեռն աւ.-կոզռակն-չորուկ-չոր-աւելի-ճազ»: Առաջին եղանակի երկու

[46] «Ճնճղուկ փոքր, ճնճղիկ, որ ձայնէ ստէպ ջի՛տ ջի՛տ»՝ ՆԲՀԼ:

[47] «Շահէն (պրսկ. šahin), շահենի. բազեազգիների ընտանիքին պատկանող գիշակեր թռչուն, բազե»՝ ՄՀԲ:

անուններն էլ՝ «շնորհազարդ»[48] և «տանուտրակ» (տանուտեր բառից[49]), մատնանշում են սրա «ազնվական, իշխող» բնույթը: Այս եղանակի հետ իր սկզբնաձևով առնչվում է հաջորդող «հաւրնձին» մանրեղանակը. այս կապը, կարծես թե, մատնանշում են նաև անունները («հաւր[ն]ձին» «տանուտրակ»-ին պատկանող երևույթ է. հատկանշական է, որ «տանուտրակ» անվանը հանդիպում ենք և Գկ-ում. և այստեղ սրան համապատասխանող եղանակը հանդես է գալիս նաև «ձիաւոր» անունով): Բկ-ում «հաւրնձին» ունի նաև «խաբուսիկ» անունը, որ կարող է ստացած լինել իրեն նախորդող եղանակի համեմատությամբ՝ սրա տարբերակը, խոտորումը լինելու պատճառով. ՄՄ 753. 182բ.

շնորհազարդ. . հաւրնձին. :

Իմաստային նույն առնչությունն ունեն վերջին «ուղտն» ու «կոզեռն»-ը («ձագ ըղտու»՝ ՆԲՀԼ), ինչն արտահայտված է նաև եղանակների մեջ՝ ոչ միայն սկզբնաձևում, այլև մելիզմացվող վանկերում (ՄՄ 591. 231բ-232ա. «կոզեռն»-ում վերջին «**իմ**» վանկում առաջինի համեմատ բացակայում են որոշ խազեր, «[ա]**ղաւթք**» վանկում՝ հակառակը, հավելված են *խաղեր*).

ուղտն. . կոզեռն. : Հետաքրքիր է, որ ուղտի կոզեռնի հետ համեմատվում է և երգեցիկ թռչունը (հնարավոր է, որ այստեղ այն օգտագործված է տվյալ թռչնի իմաստով)[50]:

ՄՄ 751-ում «կոզեռն»-ը կոչվում է «հաս» և անմիջապես հաջորդում է «շնորհազարդ»-ին (այստեղ՝ բուն Բկ եղանակին). այն կարող է մատնանշել ե-

[48] «Շնորհօք զարդարեալ, վայելչազարդ, բարեշուք»՝ ՆԲՀԼ:

[49] Միայն մեկ ձեռագրում հանդիպող այս անվանումը կարող է լինել և «տանուտէրական» բառի կրճատ ձևը՝ որպես «սեպհական տանուտեառն և տանուտէրութեան, ցեղապետական, ընդհանրական և հայրենի»՝ ՆԲՀԼ: ՄՀԲ-ում բերվում է և «տանուտրութիւն» ձևը՝ որպես «տանտեր լինելը, տանտիրություն»:

[50] «Ծալամ, ասեն, հաւուկ մի կայր, որ յըղտու կոզեռն նմանէր, զեղ ըզխաւսաւղ ինք ձայն ածէր, երբ ծափ զարկնէր՝ ինքըն խաղայր» (Կիրակոս Եպիսկոպոս, ԲՄ 13, 1980, 253):

րաժշտական հյուսվածքի հարուստ բնույթը կամ, միգուցե, երաժշտական կառույցի որոշակի վերադարձող պտույտներ[51]: ՄՄ 751-ում հավելյալ եղանակ է «մեծգլուխ»-ը, որ անվանումով ինչ-որ առումով աղերսվում է «շնորհազարդտանուտեր» բնորոշումներին (ՄՄ 751. 144ա):

Գձ-ի («**1.զոճտող**-զոզատող, **2. գայլն, 3. ձագն, 4. տաւպտաւպայն, 5. սայլն, 6. առեղն, 7. արջն**-քարարջ, 8. մշեցի-ձագն-աւելի-չոր-չոր մշեցի») «զոճտող»-«զոզատող» անունն իր այս գրությամբ չի բացատրվում բառարաններում (ՄՄ 751-ում նման անվանումով եղանակ կար Ակ-ում) [52]. Փոխարենն ունենք «ժօճտալ» ձևը (ճոճվել, երերալ՝ ՄՀԲ)՝ որպես համապատասխան բնույթի եղանակ: Հաջորդող երկու զույգ՝ «գայլ-ձագն», այնուհետև «սայլն-առեղն[53]» եղանակները, ելնելով անուններից, ունեն առնչություններ («առեղ»-ը [սայլի ղեկ՝ ՆԲՀԼ], ըստ երևույթին, ներկայացնում է «սայլ» եղանակի որոշակի խոտորում): Առաջին զույգի՝ ինչպես բոլոր «ձագն» եղանակների դեպքում, ի տարբերություն երկրորդի, կապն ակնհայտ է. ՄՄ 753. 184բ-185ա.

գայլն. . ձագն. :

«Առեղ»-ը (ՄՄ 751-ում՝ «առոյծ») ըստ խազային պատկերի առնչվում է «տաւպտաւպայ»՝ թմբկահարության նմանեցվող[54] եղանակի հետ և հաճախ ձեռագրերում հաջորդում է սրան. օրինակ ՄՄ 591. 233բ–234ա.

առեղն. . տաւպտաւպայն. :

[51] «Արմատ հասանելոյ, որպէս հասանելն, հասունանալն» նաև «որպէս ժամանելն, **դարձ առ իրեարս, ի վերայ գալն**»՝ ՆԲՀԼ:

[52] Այս անունը հանդիպում է Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» բառարանում՝ որպես «Ակ [պետք է լինի Գձ՝ Ա. Թ.] ձայնին պատկանող մի եղանակի անուն», նրան հղում է Հ. Աճառյանը՝ «զոճտել»՝ «բառ անստոյգ, որ առանձին չէ՛ գործածուած. սրանից է կազմուած զոճտող կամ զօճտող»՝ ՀԱԲ Բ:

[53] «Առեղ. կառաց և սայլից քեղին, ղեկն կամ աւարտք ղեկաց»՝ ՆԲՀԼ:

[54] «**Տոպտոպայ (պրսկ. dabdāba)** _ թմբուկ *«Հաւն ի տոպտոպային ձայնէն ոչ լսեց, թէ զինչ արարին» (Ժողովածոյք առակաց Վարդանայ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 297. տե՛ս ՄՀԲ):

Այս կապն ավելի ակնհայտ է ՄՄ 751 ձեռագրում, որտեղ կան սրանց հետ մի խումբ կազմող այլ մանրեղանակներ: Այսպես՝ Գձ վերջին եղանակը երգեցնղի՝ այն ստեղծած երաժշտի մականունով է («մշեցի»), ՄՄ 751-ում եղանակը կոչվում է «ձագ տիրոցի»: Հնարավոր է, որ այս «ձագ տիրոցի»-ն՝ այլ ձեռագրական ավանդույթով ոմն «մշեցու» վերագրվող, ինչ-որ «տիրոց»-ի[55] (հավանաբար նույնպես եղանակի հեղինակի անունը), «ձագն» տարբերակն է: Ամեն դեպքում, ՄՄ 751-ում այն հաջորդում է «շաւառն»-ին (եղեգ, նաև՝ «շաւեռ»՝ քյամանչա)[56]՝ որպես նրա «ձագ», ինչը ցույց է տալիս և այս երկուսի սկզբնաձևերի նույնությունը.

ՄՄ 751. 145ա. «շաւ.» , 145բ. «ձագ տիրոցի».  (բացի այդ՝ երկրորդ եղանակի զարդոլորված վանկերը առաջինի կրճատված ձևն են՝ նույն վերջավորություններով և կրկնվող մոտիվների բացակայությամբ):

Այս երկու և իրար հաջորդող մյուս երեք եղանակն էլ՝ «սրինկ», «առոյծ», «չոր», ածանցված են միմյանցից (հերթականությամբ՝ «շաւառն, ձագ տիրոցի, տաւպտաւպայ, սրինկ, առոյծ [այլուր՝ առեղ], չոր»).

սրինկ. ՄՄ 751. 145բ. , չոր. : Այնուհետև՝ իրար բավական մոտ են միմյանց հաջորդող, երկու գործիքներ ներկայացնող «տաւպտաւպայ»-ն (վերը) ու

[55] «Տիրոցի ձագ. ութն ձայնին պատկանող մի անստոյգ եղանակի անուն» («Հայոց բառ ու բան»): Հ. Աճառյանի անձնանունների բառարանում գտնում ենք «Տիրոց» անունը («անշուշտ տէր բառից»՝ ԱԲ Ե):

[56] «Բոյս ինչ, որ կոչի և շաւառ եղէգ»՝ ՆԲՀԼ, «շաւառ եղէգն. նվիկազգիների ընտանիքին պատկանող բույս, խնկեղէգ»՝ ՄՀԲ, «տեսակ մը անուշահոտ եղէգ»՝ ՆԲՀ: Հավանաբար այստեղ օգտագործված է ձայն արձակող եղեգ իմաստով: Մյուս կողմից կա այս բառին մոտ «շաւեռ-մաւեռ» ձևը՝ «նուագարանի թելերուն ձայնը», նաև՝ «շաւեղ»՝ թելաւոր նուագարան մը. քէմէնչէ», և «շաւերք քաշել»՝ «քէմէնչէ չալել»՝ ՀԳԲ Ա: Արմատական բառարանը տալիս է այս բառի ամբողջական բացատրությունը. բացի նշված օրինակներից բերում է փոխաբերական իմաստը՝ որպես «երաժշտական փող կամ աղևոր մի նուագարան» (որպես աղբյուր օգտագործված է Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն»-ը, 1895. տե՛ս ՀԱԲ Գ):

«արինկ»-ը[57] : Նույն «արինկ»-ը զարդոլորված վանկերով, այլ ոչ, ինչպես սովորաբար՝ սկզբնաձևով, նմանություն ունի իրեն հաջորդող «առոյծ-առեղ»-ի հետ («արինկ»-ն ավելի հարուստ է խազավորումով):

Այսպիսով, ՄՄ 751-ում իրարից ածանցված եղանակները մի ամբողջ շարք են կազմում (այստեղ մյուս ձեռագրերի համեմատ ավել են «արինկ», «շաւառն», «չոր» եղանակները): Ընդհանուր ելևէջային ոլորտներում ծավալվող կառույցները տեղադրված են միմյանց մոտ, սրանց միջև էլ՝ այլ բազմակերպ տարբերակներ:

Գկ ձայնը հարուստ է մանրեղանակների բազմազան, գունեղ անվանումներով՝ «**1. տարածումն,** մծ [աւ] եշ, **2. խեղեփ, 3. մատն, 4. առաւաւտերգ, 5. հաւատուր,** տանուտրակ-հաւատուր է-յեղմուկ-ձիաւոր, **6. յաւնեղն,** յունեղ, **7. յետքաշ,** յետքաշ է-լալկան-ծանրուկ, **8.գոյնիկ, 9.** ձագն-մակեղոնացի, աւելի, **10. զաբրիէլ,** ճմռիկ-ճմուռն, 11. մառեղ-կաքաւ-միքայէլ-չոր-աւելի-ճմուռն, 12. **միքայէլ**, [մառեղի] ձագն-աւելի-մառեղն-աւելի-զաբրիէլ-չոր-չոր միքայէլ, 13. աւելի-չոր»: Առաջին՝ «տարածումն» մանրեղանակն ունի ծիսական նշանակություն, անունը պայմանավորված է սաղմոսատողի փոփոխությամբ[58]: «Խեղեփ»[59] և «մատն» կամ «խեղեփ մատն»[60] անունները, որ տարբեր ձայներում հանդես են գալիս միասին, առնչվում են միմյանց հետ (որպես «կես» և «կիսամատ»). սա ցույց է տալիս և սկզբնամասի խազային պատկերը (ՄՄ 753. 187ա-բ)[61].

խեղեփ. . մատն. :

Հետաքրքիր է «առավոտերգ» անունը. առավոտերգերն առհասարակ առավոտյան ժամի երգասացություն են, մինչդեռ «ուղիցի»-ն՝ երեկոյան: Այս ե-

[57] Միայն երաժշտական նյութն այստեղ վանկերի վրա այլ կերպ է բաշխված (առաջինի «[ա]ղաւթք» վանկի կեսը երկրորդում ընկնում է հաջորդող «իմ» վանկի վրա), և երկրորդի զարդոլորվող վանկում երկու անգամ է կրկնվում նույն մոտիվը մինչև վերջավորող խաղերը:

[58] «Տարածումն» եղանակը կատարվում է «պահոց» Աւագ երեքշաբթիի մեսեդիից հետո և ձեռագրերում հաճախ տեղադրված է այս մեսեդիից անմիջապես հետո՝ «ուղիցի»-ների բաժնից դուրս: Երգվում է փոփոխված սաղմոսատողով՝ «Զերեկոյի աղաւթս մեր ընկալ տէր և *զտարածումն* ձեռաց մերոց», նմանատիպ եղանակ է Ավագ ուրբաթի «ուղիցի»-ն՝ «աղաչանք»-ը (Դկ), որի անունը դարձյալ արտահայտում է սաղմոսատողի փոփոխությունը՝ «Ուղիղ եղիցին *աղաչանք* մեր»: Դեռևս Ն. Թահմիզյանը նկատել է այս եղանակների գործառույթն ու անունների ծագումը (Թահմիզյան Ն., 1969, 199)

[59] «ἡμιτόνιον. մասն և մասն իրի բաժանելոյ. համամասն, կէսն կամ կիսաբաժին»՝ ՆԲՀԼ:

[60] Այս բառը կարող է ունենալ և «մատնաչափ» նշանակությունը («չափ լայնութեան մատին… իբրու չորս զարեհատ»՝ ՆԲՀԼ):

[61] Այս անուններով, ինչպես տեսանք, փոխարինված էին ՄՄ 751-ում մյուս ձեռագրերի «խաւսող-ձագն»-ը:

ղանակի խազային հյուսվածքը, սակայն, խիստ համապատասխանում է մանրուսմունքների այլ բաժնում ամփոփված Ավագ շաբաթի առավոտերգերին[62]. ստորև համեմատության համար բերում ենք մանրեղանակը՝ առավոտերգի հետ համեմատության մեջ. ՄՄ 753. 187բ. , հմմտ. Ավագ բշ, գշ առավոտերգեր. 47ա. , :

Հաջորդող «հաւատուր»-ին, «ձիաւոր»-ին, սրանց հետ առնչվող իմաստային կարգերին անդրադարձել ենք վերը: Նույն՝ «հաւատուր» եղանակի մյուս՝ «յեղմուկ» անվանն անդրադարձել է Ա. Արևշատյանը[63]: Ընդհանուր առմամբ այն կարծես թե ներկայացնում է իրեն նախորդող «առաւաւտերգ»-ի ընդլայնումը («[ա]ղաւթք իմ» վանկերի վրա. կառուցված է նույն *ձակորճներից*). ՄՄ 753. 188ա. :

«Յաւնեղ» անվանմամբ («թաւ կամ առատ յօնիւք»՝ ՆԲՀԼ) դարձյալ, ըստ երևույթին, բնութագրվում է երաժշտական հյուսվածքի խտությունը (այս եղանակը ևս ամբողջությամբ կառուցված է բարդ խազերով կրկնվող մոտիվներից [*թուր-ծնկներ* հաջորդականությունից], որ առավել հատուկ է «ուղիղի» հարուստ եղանակներին. , ): Հաջորդող եղանակի բոլոր երեք անուններն արտահայտում են միևնույն՝ ձգող, ծանրացնող բնույթը՝ «յետքաշ-լալկան-

[62] Ավագ շաբաթի բոլոր հինգ առավոտերգերն ունեն նույն եղանակը. սկզբի վանկերը՝ *խոսրովպյինով*, վերջին զարդոլորվող վանկը, որի վրա ընկնում է երաժշտության «ծանրության կենտրոնը»՝ *ձակորճից* կազմված բարդ խազախմբերով (բշ-ից հետո հաջորդող օրերի առավոտերգերում այս զարդոլորվող վանկից կրճատ բերվում են միայն առաջին խազերը):

[63] Վերջինս «յեղմուկ», «յեղմն» ցուցումը բնութագրում է որպես ձայնեղանակի փոփոխում, այլայլություն, «այսինքն՝ ձայնեղանակից ձայնեղանակ մոդուլացիոն շեղումը կամ անցումը»: Այս եզրը համեմատում է նաև բյուզանդական φθορά-ի հետ [նևմային նշան]. (**Արևշատյան Ա.,** 2002, 196–197):

ծանրուկ»: «Գոյնիկ»-«ձագն» եղանակներն ունեն նույն առնչությունը, ինչ մյուս բոլոր հիմնական ու «ձագն» մանրեղանակները.

ՄՄ 591. 236ա-բ. գոյնիկ. , ձագն  «Ձագն»-ը, ինչպես հաճախ հավելյալ եղանակները («մշեցի», «վարազեցի»), ունի նաև հեղինակ մատնանշող «մակեդոնացի» անունը: Սրանց հաջորդում են երկու հրեշտակապետերի անունով «գաբրիէլ», «միքայէլ» մանրեղանակները[64]՝ խազավորված շատ ճոխ, ամբողջությամբ կրկնվող մոտիվներով (սա հատուկ է, ինչպես նշեցինք, առավել հարուստ երգասացություններին).

գաբրիէլ . միքայէլ . ՄՄ 753. 189ա): Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ այս երկու եղանակների միջև առաջացել են համեմատաբար շատ միջանկյալ եղանակներ՝ բնույթով միմյանց և այս երկուսին մոտ (հազվադեպ երևույթ է նաև այն, որ հավելյալ եղանակ կա այս հիմնական եղանակներից առաջ): Սրանից անվանումների, հաջորդականության մեջ երբեմն խառնաշփոթ է առաջացել: Նախ երբեմն խառնված են «գաբրիէլ»-ն ու «միքայէլ»-ը, այնուհետև՝ սրանց միջև ընկած եղանակները. «ճմուռն»-ը հանդես է գալիս թե՛ որպես «գաբրիէլ»-ի, թե՛ «մառեղ-կաքաւ»-ի երկրորդ անուն[65] (այս երկու եղանակներն իրար մոտ են՝ երկուսն էլ կառուցված են *ծնկների* վրա): Առհասարակ Գկ վերջին եղանակների տեղադրումը, տարբեր ձեռագրերում ներկայաց-

---

[64] Գաբրիելյան փողի ձայնը Կիրակոս Եպիսկոպոսը համեմատում է «ջարռու» և սարյակ («ժըռպուղ») թռչունների ձայների հետ. «Ջարռուն ասէր արուեստաբար զեղ զեհենի պես կու ցոլայր, Ձեղ Գաբրիէլ զփողըն գոչէ, յառնեն մեռեալքըն հաւասար» (Կիրակոս Եպիսկոպոս, ԲՄ 13, 1980, 254), «ժըռպղուն ձայնիկն զայր զեղ զերգեհոն, որ կու ցընծայր, Գաբրիէլի փողոյն նըման, որ մեռելոցն ձայն կու տայր» (նույն տեղում, 248):

[65] ՄՄ 6137 ձեռագրում հայտնվող «ճմռիկ»-ը «գաբրիէլ»-ի եղանակով է, իսկ «գաբրիէլ» անունը սխալմամբ դրված է «միքայէլ»-ին: Այս անվանը հանդիպում ենք և Եր. 1737 ձեռագրի նկարագրության մեջ (իրար հաջորդում են «գոյնիկ», «ճմուռ», «չոր» անունները). այս դեպքում ևս հնարավոր չէ ենթադրել՝ որ եղանակի հետ է նույնանում «ճմուռ»-ը. Եր. 2436 ձեռագրում կան թե՛ «գաբրիէլ», թե՛ «ճմուռն» եղանակները, ըստ որի կարող ենք ենթադրել, որ «ճմուռն»-ը համապատասխանում է հաջորդող «մառեղ»-ին: Եվ վերջապես, Բեռլինի պետական գրադարանի մանրուսման ձեռագրում (հմր. 279) «ճմուռ»-ը «գաբրիէլ» եղանակն է (131բ):

վածությունը ցույց է տալիս, որ սրանք սերտ կապված են միմյանց և ածանցված միմյանցից: «Ճմուռն»-ը ինչ-որ կերպ նմանեցվում է ճմռթված-կիտված երաժշտական հյուսվածքի[66]: «Մառեղ[67]-կաքաւ» եղանակում, ինչպես «ջահրիկ»-ում, շատ են փոքր տարածության վրա կրկնվող խազերը (*ծնկներ, խաղեր*). ՄՄ 591. 237ա.. «միքայէլ»-ը, ըստ ՄՄ 7157-ի, սրա «ձագն» է. ՄՄ 753. 189ա. : ՄՄ 751-ում «գոյնիկ»-ին որոշ չափով համապատասխանում է բզեզի տեսակ «եզնակ»-ը[68] (հմմտ. ՄՄ 753. 188բ-ՄՄ 751. 147ա), «յետքաշ-լալկանին»-ին՝ հավանաբար պար գալու հետ կապ ունեցող «պարընկուլը»[69]. առհասարակ հետ ձգելու և պար գալու բնորոշումները կարող են ունենալ որոշակի ընդհանրություն: Կան թռչունների անունով «վարուժնակ»[70], «անձէթ» («անձէղ») եղանակներ, ինչպես նաև «փող»-ն ու «չոր»-ը: Վերջին երկուսը, որ հայտնի են միայն այս ձեռագրից, դարձյալ առնչվում են միմյանց հետ.

ՄՄ 751. 147բ–148ա. չոր

փողն

:

[66] «Ճմռել. ճմլել, տրորել»՝ ՄՀԲ: «Ճմռռել. տրորել, ճմռել, ճխլել»՝ ՀԲԲ Գ. միաժամանակ այստեղ տրվում են «ճմուռ» բառի երեք իմաստները՝ ա. կերակրատեսակ, բ. «կերպասի վրա առաջացած ծալերը, փոթերը», գ. «հինգ մատները իրար մոտեցնելիս ստացված ձևը» (նույն տեղում):

[67] Պարսկերեն Հրատ մոլորակը՝ ՆԲՀԼ: Նաև երկաթի գաղտնանուններից մեկը՝ ՄՀԲ:

[68] «*Աստուծոյ եզնակ, ոսկի եզնակ*՝ ճճի թևաւոր, որպէս բզեզ փայլուն գունով և ոսկեգոյն». Κάνθαρος՝ ՆԲՀԼ:

[69] Մեզ չհաջողվեց գտնել այս ձևը բառարաններում: Բարբառային լեզվում գոյություն ունեն «պարընմէջ. պարանմէջ» բառերը՝ «վազերի շարքերի միջի տարածությունը՝ արանքը»՝ ՄՀԲ: Ավելի հավանական է կապը բարբառային «***պար գուլ***» ձևի հետ (Մարաղայի շրջան)՝ որպես «պար գալ» (ՀԲԲ Գ. «պար»-ը նաև շուրջպարի տեսակի իմաստ ունի՝ նույն տեղում): Հ. Աճառյանը «պար»՝ նախնական նշանակությամբ «շուրջ, շրջան» բառահոդվածի տակ տալիս է նաև «պարանուլի» «*պարանց ընկնել*» (երկրորդը՝ «ընկողմանել») ձևերը՝ ՀԱԲ Դ:

[70] «Վարուժան, վարուժանակ, վարուժնակ՝ արուն ի զոյգս հաւուց և թռչնոց, որ առաւել լինի հզօր և գիշատիչ, որպէս և էգն կոչի մարի, զի լինի մայր»՝ ՆԲՀԼ:

Դձ մանրեղանակներն են՝ **1.ռամվար-ռընվար-ռըմվարն,** ռավարն-ռահվար-ռմբվար-անցէ, **2. փողն,** փողն է, **3. դարբին,** խեղեփն, **4. աշկերտն,** ձագնաշկերտ ձագն-խեղեփն մատն, **5. տուկատ-տաւկատ,** տաւտակ, **6. այսաւրմտանէ, 7.ովէսայն,** չոր-չոր ովէսայն-*շնորհազարդ[71] 8. աւելի-ձագն-ակնջատնչոր, 9. աւելի-չոր-*սոսկացան-*մերոն աւ[72], 10. աւելի-չոր-հեղինատն, 11. չոր-աւելի): «Դարբին-աշկերտն (կամ «ձագն, ձագ-աշկերտն»)» եղանակներում դարձյալ նույնն է սկզբնաձևը.

ՄՄ 753. 190բ. , 

(ՄՄ 9838-ում սրանք կոչվում են «խեղեփն»-«խեղեփ մատն». 248բ):

«Ռամվար-ռավար-ռընվար» (ՄՄ 9838-ում՝ «անցէ»[73]) անունները ցույց են տալիս ռնգային՝ «ռունգներով վարվող» երգեցողություն: Հաջորդող՝ «այսաւրմտանէ» եղանակի անունը Ն. Թահմիզյանը կապում է համապատասխան առավոտերգի սկզբնաբառերի հետ, որի եղանակով էլ, ըստ սրա, կատարվել է «ուղիցի»-ն[74]. նման դիտարկումը սակայն չի արդարացվում խազային հյուսվածքի համեմատությամբ (հմմտ. օրինակ ՄՄ 753. 46բ–191ա-բ): ՄՄ 751-ում «այսաւրմտանէ»-ն կոչվում է «բդեշխ»[75]՝ ըստ երևույթին, ինչպես տանուտրակը, մատնանշելով եղանակի հանդիսավոր-թագավորական բնույթը: «Տուկատ»-ը[76] ցույց է տալիս երգեցողության և երաժշտական հյուսվածքի «թույլ, նվաղ» ձև, միաժամանակ, ըստ ՄՄ 751-ի, նմանեցվում է ծնծղաների (որոշ տարբերակումներով. ՄՄ 751. 148բ): Մանրուսման ձեռագրերում «այսաւրմտանէ» և «ովէսայ» եղանակների միջև տեղադրված են պահքի շրջանում կա-

[71] Այս անվանումը կա միայն Եր. 2430 ձեռագրում, ըստ որի այն կարող է վերաբերել և ցանկացած հաջորդող եղանակի: Նույնը վերաբերում է հաջորդող «ձագն» եղանակին, ըստ ձեռագրի նկարագրության «սոսկացան» անունը նույնպես հանդիպում է միայն Եր. 2430-ում:

[72] Եր. 2431. այս ձեռագիրը ևս չունի «ովէսայ», ըստ որի հաջորդող եղանակների համապատասխանեցումը բարդություններ է առաջ բերում: Մեր ենթադրությամբ, «ովէսայ»-ն չի, որ «աւելի» է անվանվում՝ լինելով քիչ թե շատ հաստատված եղանակ, ուստի «աւելի» և «մերոն աւ» բաշխվում են հաջորդող երկուսի վրա:

[73] Այս ձեռագրում պահպանված մանրուսման միակ պատառիկը Դձ յոթ եղանակներն են՝ բուն Դձ, «անցէ», «փողն», «խեղեփն», «խեղեփն մատն», «աւ», «տուկատն» (248ա-բ):

[74] **Թահմիզյան Ն.,** 1969, 200–201:

[75] «Հիւպատոս, դուքս, սահմանակալ, կողմնակալ, կուսակալ, զօրավար, մագիստրոս»՝ ՆԲՀԼ:

[76] «Տուկատ. տուգատ. հատեալ ի տոկոյ, պակասեալ յուժոյ, տկար ներգևեալ, փուտ»՝ ՆԲՀԼ:

տարվող հավելյալ «չոր» եղանակներ. այս անանուն եղանակներից երկուսը ՄՄ 7157-ում ունեն հետաքրքիր «հեղինատն» և «ակնջատն» անվանումներ: Երկրորդը (հատած ականջ), բացի «ականջ ծակող» բնորոշումից կարող է պատկերավոր կերպով մատնանշել առանց «արտաքին» միջավայրի ձայներից շեղվելու, *ներքին* նրբերանգներով հարուստ երգեցողություն[77]: Հետաքրքիր է «հեղինատն» անունը. այն կարող է կապված լինել «*Հեղին*ե» անվան, իսկ ավելի շուտ՝ «*հեղին*ակ», «*հեղին*ական»[78] բառերի հետ (քանի որ նախորդ եղանակում «ատն»-ը հենց «կտրած» իմաստով է օգտագործվում, այստեղ էլ «հեղինատն», ըստ երևույթին, նշանակում է «առանց առաջնորդի-առաջնորդության»): ՄՄ 751-ում այն կոչվում է «ոչխար», իսկ «ակնջատն»-ը՝ «բերդ» (մենք չենք կարող ենթադրել՝ այստեղ որևէ կապ գոյություն ունի հատած ականջի և բերդի կամ առաջնորդության բացակայության և հնազանդ կենդանու միջև).

հմմտ. ՄՄ 751. 149ա–ՄՄ 591.239բ–240ա. բերդ , (ՄՄ 7157-ում՝ ակնջատն)  ՄՄ 751. 149ա , (հեղինատն). : Հետաքրքիր է, որ մանրուսման հնագույն ձեռագիր ՄՄ 9838-ում այս երկրորդ եղանակը տեղադրված է «տուկատ»-ից առաջ՝ «դարբին»-ի «աշկերտն» եղանակից (այս ձեռագրում՝ «խեղեփ մատն»-ից) հետո (248բ). այն իր սկզբնաձևով՝ *երկար* խազերով, իրոք նման է վերջինիս (հմմտ. վերը):

[77] Նման կերպ, ինչպես հայտնի է, միջնադարում օգտագործվում է «խուլ» մականունը (ԺԳ դարի հայտնի գործիչ, երաժիշտ Գրիգոր Խուլը, ում անունով [«Խլկցի»] կոչվում է Շարակնոցի իր խմբագրած տարբերակը, ըստ ավանդույթի իր անունը ստացել է աշխարհիկ երաժշտություն չլսելու համար ականջները մոմով խցելու պատճառով): «Ականջ» նշանակում է և երաժշտական գործիքի լարակոթ, ասեղի անցք, սայլի կամ արորի առեղի ծայրը, որից կապում են լուծը, հիլկի ծայրին ամրացվող կաշվի կտոր, որ հիլկը պահում է իր տեղում և այլն: Այս բոլորի բացակայությունը կարող է ցույց տալ շարժման դադարեցում-խցանում, դանդաղեցում: «Ականջատ»՝ որպես «ականջը կտրած», ձևը տալիս է միայն Հ. Աճառյանը՝ ՀԱԲ Ա (տե՛ս Ղևտ. իա. 18. իբ 23):

[78] «Հեղինակ՝ ἡγεμών. առաջնորդ, առաջնորդող, վարիչ, գլուխ, սկզբնահայր», «հեղինական՝ առաջնորդական, առաջնորդ»: Ավելի քիչ հավանական է, որ այս անունը կապված լինի «հեղ», «հեղբ» (բերք, բույս [ՆԲՀԼ, ՄՀԲ և այլն]) ձևերի հետ:

ՄՄ 751-ն ունի նաև «գետ», «նավ», «գետճոխ» (մյուս ձեռագրերում՝ «փող»), «կակզոտ» (կակազող), «չոր», «յովանիսուկ» (Յովհաննեսի փաղաքշական տարբերակը կամ «յովանահաւ» երգեցիկ թռչունը[79]) և բուն Դձ եղանակները (ձեռագրում այս ձայնում առհասարակ բոլոր եղանակների անունները, բացի «դարբին»-ից, տարբերվում են)։ Որոշակի կապ է ենթադրվում «գետ» և «գետճոխ» եղանակների միջև (երկրորդը՝ որպես առաջինի առավել զարդոլորուն-հարուստ տարբերակ)։

«Նաւ», «յովանիսուկ» եղանակներն իրենց զարդոլորվող «իմ» վանկի միջին հատվածով՝ *տրոպերի* մոտիվներով նման են ՄՄ 591-ի երրորդ և չորրորդ «չոր»-երին. դարձյալ այսպիսով՝ մյուս ձեռագրերում հավելյալ եղանակները ՄՄ 751-ում ունեն անվանումներ և իրենց շուրջը ձևավորվող այլ եղանակներ.

ՄՄ 591. 240բ  ՄՄ 751. 149բ. .

ՄՄ 751.148ա-բ. նաւ.  .

ՄՄ 591.240բ. :

Դկ եղանակի անունները (**1. աղաչանք**, մեծ ուրբ, աւ ուրբ, **2. կաղն,** դպիր-վարսեղն, **3. կիրակոսերէց,** կիրակոս, **4. սարկաւագ 5. ճիչող-ճչող,** ճիճող-խեղեփ-մատն, **6. ձագն,** խաբուսիկ-ձագն-խեղեփ մատն-խեղեփ, **7. փողն, 8. թագւոր, 9. գալստեան,** 10. չոր-աւելի, 11. չոր-աւելի, 12. չոր-աւելի, **13. խաչ,** 15. բութն), ընդհանուր առմամբ, պարզ են։ Դրանք ունեն ծիսական նշանակություն, ինչպես «գալստեան», «խաչի» (ՄՄ 751-ն ունի սրանից տարբեր «սուրբ խաչի»), երեք «չոր» և «աղաչանք» եղանակները։ Փոխադարձ կապ են մատնանշում «ճիչող» (ճչացող)_ «ձագն» (կամ «խաբուսիկ ձագն». ՄՄ 751-ում՝ «խեղեփ»-«մատն»՝ հիմնականն ու ածանցվածը՝ տեղերով փոխված) և

[79] «Յովանահաւն փըչէր սափար, Զեղ զեղեզան իր ձայնըն զար» (Կիրակոս Եպիսկոպոս, ԲՄ 13, 1980, 252. սափար՝ սրինգ՝ ՄՀԲ)։

«կիրակոսերէց»(կամ «երէց». ՄՄ 751՝ «կիրակոս»)-«սարկաւագ» զույգերը: Ընդ որում, ՄՄ 9257-ում «սարկաւագ»-ից հետո էլ դրված է «կաղն» եղանակը, որ այստեղ կոչվում է «դպիրն»՝ իր հերթին փաստորեն կապվելով «սարկավագ»-ի հետ (224ա): «Բութն» եղանակը, բավական աղքատիկ խազավորումով, հանդիպում է միայն ՄՄ 6138 ձեռագրում (213 բ): Հետաքրքիր է «կաղն», նույն եղանակի «վարսեղն» անունը. առաջինը դարձյալ ավելի շուտ կարող է բնորոշել կատարման կերպ (այսինքն, նաև կատարման կերպից ծնունդ առնող երաժշտական հյուսվածք), քան եղանակի բնույթ: ՄՄ 751-ում կա այս «կաղն»-ից ածանցված՝ նույն սկզբնաձևով, վերջին մելիզմացվող վանկերով շատ ավելի հարստացված (գլխավորապես կրկնվող մոտիվների հաշվին)՝ բուն Դկ-ն[80].

ՄՄ 751. 149 բ. 

հմմտ. ՄՄ 753. 192 բ. 

Նույն կերպ, ՄՄ 751-ի «կրետ» եղանակը որոշ տարբերակումներով, նման է «սարկաւագ»-ին (նույնն է սկզբնաձևը [որոշ առումով՝ վերջնահանգաձևը], տարբերվում է վերջին, հարուստ մելիզմացվող «իմ» վանկը, ինչը սովորաբար լինում է ածանցվող եղանակների դեպքում).

հմմտ. ՄՄ 753. 193ա. 

ՄՄ 751. 150բ. 

Այսպիսով ՄՄ 751-ում ավել են բուն ԴԿ-ն (ճյուղավորված), «կրետ»-ը (ճյուղավորված «սարկաւագ»), «սբ. խաչ»-ն ու «կցխակ»-ը: Վերջինը, ըստ երևույթին, մատնացույց է անում, կցված, «իրար կպած», կից-կից (միգուցե գլխանդոյա-

[80] ՄՄ 751-ում «[ա]**ղաթք իմ**» վերջին երկու վանկը միևնույն երաժշտական նյութն են ներկայացնում, իր հերթին նույն՝ սկզբում *խաղերի* ու *բեննորճների*, այնուհետև՝ *տրոպերի* մոտիվների վրա հյուսվող:

տիպ) երգեցողության հատուկ հնարանք[81]: Բնորոշ է, որ այն ևս, ինչպես «պալկան»-ը, ուղեկցվում է *տրոպերից* կազմվող կրկնվող մոտիվներով (այստեղ՝ *վանկտրոպեր*). այս մոտիվները ամենահարուստ մելիզմացվող վանկերի ցուցիչն են, ամենաշատն են կապվում «կեղծ» վանկերի կիրառության հետ (վերը. ծան. 7).

ՄՄ 751. 150ա. :

Այսպես բոլոր ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս՝ ինչպես էին հիմնական չափանմուշ եղանակների մեջ առաջանում և ինքնուրույնություն ձեռք բերում միջանկյալ եղանակները[82]: Սա ամենից ավելի երևում է ՄՄ 751 ձեռագրի ուսումնասիրությունից. նախ՝ քանի որ այստեղ շատ են հիմնականների միջև առաջացող «միջանկյալ» ձևերը, այնուհետև՝ մյուս ձեռագրերում հավելյալ, վերջում տեղադրված անանուն եղանակները այստեղ ունեն անուն և իրենցից էլ ածանցվող եղանակներ, ընդհանուր եղանակների մեջ են, բացի այդ՝ ձեռագրում կան բազմաթիվ եղանակներ, որոնք մյուս ձեռագրերի եղանակների ճյուղավորված՝ հաճախ ճոխացված տարբերակն են (կրկնվող մոտիվների հաշվին): Այստեղ կան և մի շարք ինքնուրույն եղանակներ կամ անուններ, ինչպես նաև մյուս ձեռագրերի որոշ եղանակների տարբերակը (հաճախ ճոխացված) ներկայացնող եղանակներ:

Եվ վերջապես, «ուղիցի» եղանակներին կարող ենք հավելել ևս երկու շատ հետաքրքրական՝ «երկաթ» և «արճիճ» անվանումները: Սրանք «ուղիցի»-ների շարքում չեն, հանդիպում են մանրուսման միայն մի քանի ձեռագրում՝ Բձ «ճաշու» երկրորդ ալելուի լուսանցքում (տե՛ս ՄՄ 763՝ 57ա, 58բ, 767՝ 36ա, 3663՝ 59ա, 3474՝ 43բ) [83]. բացի այդ, ՄՄ 763 ձեռագրում Գկ վերջին կանոնագլխի լուսանցքում նշված է եղանակի արևելյան ծագումը՝ «մուղալ» (21բ)[84]:

Այսպես մանրուսման եղանակները երաժշտության մեջ ամփոփված, բոլոր պատկերացվող ձայների արտացոլման ու «վերամշակման», սրանց գույների ու բնութագրումների տարբեր մշակութային միջավայրերի, կամ ուղղակի երաժշ-

[81] Այս բառին համարժեք «կցխաբ» ձևը՝ որպես «շարոց», մեզ հաջողվեց գտնել միայն Գաբամաճյանի բառարանում «շարոց. իրարու անմիջապէս կապած, միակտուր, միակերպ, բովանդակող, պինդ բռնող»՝ ՆԲՀ:

[82] Երբեմն այս տարբերակները միայն տողատակում են բերվում՝ ՄՄ 763-ում «հոռոմ» եղանակի տողատակում նշված է նրա տարբերակը (277բ–278ա) «հոռոմն ազգէ», որ համապատասխանում է ՄՄ 753-ի բուն եղանակին (176բ–177ա). այդպիսի ճշգրտում կա և արծիվի «ձագն» եղանակի տակ (284բ):

[83] «Երկաթ» «ուղիցի» մանրեղանակ ունի և ՄՄ 751-ը, որ սակայն չի համապատասխանում այս ալելուին:

[84] Մուղալ (պրսկ. moğol, moğul) մոնղոլ. «Զիւր սեպհական ազգն, զոր մուղալ թաթարն անուանեն (**Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 233. տե՛ս՝ ՄՀԲ):

տության ընկալման շտեմարան են: Բազմաճյուղ մեղեդային հոսքերում ու սրանց արտաբերման ձևերում արտացոլվում են բոլոր «արտաքին» ոլորտները՝ ձևերի ու պատկերների, «հնչույթային» շերտերի ողջ տիեզերքը: Այստեղ միջնադարյան անտարանջատ ընկալման արդյունքում անվանման մեթոդի մեջ միախառնված են զուտ կիրառական-ծիսական, բնույթային, ասոցիատիվ, արտաբերման նրբերանգի կողմերը, և հաճախ դժվար է զատել՝ անունը երաժշտությունը, նրանից առաջացած տպավորությունը, թե կատարման կերպն է բնութագրում, մատնանշում է տարատեսակ ձայների (ասենք թռչունների) զուտ պատճենում-կրկնօրինակում, թե գեղարվեստական համադրման ավելի բարձր մակարդակ է ներկայացնում. այս բոլորը միանգամայն սերտաճած են միմյանց և միջնադարյան «շնչող», բազմերանգ ու բազմապլանային համակարգի հիմքն են: Մանրեղանակների անուններում ստեղծագործաբար վերաիմաստավորված է ողջ հնչող շրջակա միջավայրը՝ բնության ձայներից և տարրերից (երկաթ, արճիճ, գետ, ծովցին, մառեղ), երգեցիկ թռչուններից ու միջատներից («ծիծեռն», «փորակն», «ցինայ», «աղավնեկ», «արծիւ», «անձէղ», «չիտ», «վարուժնակ», «կաքաւ», «կրէտ», «ջահրիկ»), կենդանական աշխարհից սկսած, վերջացրած մարդկային աշխարհով՝ արհեստներով, հարվածային («տաւպտաւպայ, ծնծղա, զոճնակ»), փողային («սրինկ, շաւառն, փող») երաժշտական գործիքներով, մանրուսման արվեստի մեջ զարգացող առանձին ավանդույթների հարստությունը մատնանշող դպրոցներով և անձերով (Կարմիր վանք՝ մանրուսման հայտնի դպրոցներից մեկը, Հաթերք, Սուրբ Նշան[85], Մշեցի, Վարագեցի, Տարաւնեցի, Մակեդոնացի): Մանրեղանակների անունները մատնացույց են անում կատարման բազում հնարանքներ («կակզոտ, կցիակ, յետքաշ, ճմուռ, լալկան-ծանրուկ, կաղն, ճիչող, ռնվար, յետքաշ-լալկան, լալկան-զառզռու, խոսող»): Այս եղանակները հաճախ հյուսված են կրկնվող մոտիվներից, որ կենտրոնացնում է երաժշտությունը նույն հնչյունային-կատարողական ոլորտում[86]:

Ողջ միջնադարում չափանմուշը մնում է բարձրագույն գեղագիտական արժեք, որի խորքային յուրացումը ծնում է սրանից զատվող ու վերստին միաձուլվող, «վերադարձող» հոսքերի առավել նուրբ բաժանումները: Իրար հաջորդող եղանակների միջև կապն արտահայտված է ամենաբազմազան ձևերով՝ նույնությամբ («զաբրիէլ-միքայէլ») և հակադրությամբ («երէց-անմեղուկ» կամ «երէցկին»), մեծ-փոքր (բոլոր «ձագն», «աշակերտ» եղանակները, «ուղտ-կո-

[85] Սա ևս մանրուսման հայտնի կենտրոն է, ինչի մասին վկայում են և հիշատակարանները՝ ՄՄ 8623. 228ա. «Փառք… Գրեցաւ տետրակս այս ձեռամբ Գրիգոր քահանայի ի մայրաքաղաքս ի **Միս** ընդ հովանեաւ **Սուրբ Նշանիս** ի **լաւ և յընտիր աւրինակէ Կոստանդէ** ի վայելումն դեռաբոյս սարկաւագի Սիմէոնի…»:

[86] Առհասարակ «ուղիցի»-ների հիմնական նյութն ամփոփող վերջին, զարդոլորվող վանկը հիմնականում նույնպես ամբողջությամբ հյուսված է կրկնվող մոտիվներից:

զեռն», «սարկաւագ-դպիր»), իրական-խաբուսիկ («երէց-իմաստնակ», «ճիչող-խաբուսիկ ձագն»), ամբողջ-մաս («խեղեփ-մատն») կամ ուղղություն-խոտոռում («սայլ-առեղ») հարաբերությամբ և այլն[87]: Սրանք բացում են ձայնի օգտագործման անսպառ թվացող հնարավորությունները, երաժշտական կառուցների յուրացման և տեսականացման, փոխադարձ առնչակցումների բարձր, բազմաշերտ արվեստը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. ՀԱԲ Ա – Հ. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան Ա, Երևան, ԵՀ հրատ., 1971:
2. ՀԱԲ Բ – Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան Բ, Երևան, ԵՀ հրատ., 1973:
3. ՀԱԲ Գ – Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան Գ, Երևան, ԵՀ հրատ., 1977:
4. ՀԱԲ Դ – Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան Դ, Երևան, ԵՀ հրատ., 1979:
5. ԱԲ Ե _ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան Ե, Երևան, ԵՊ հրատ., 1962:
6. ՀԳԲ Ա – Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան Ա, Թբիլիսի, Աղանյանի տպ., 1913:
7. Հայոց բառ ու բան – Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. էջմիածնի, 1912:
8. ՆԲՀ – Գաբամաճեան Ս., Նոր բառագիրք հայերէն լեզուի պատկերազարդ, Կ. պոլիս, տպ. Լ. Սագաեան, 1910:
9. ՀՏԲ Գ – Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Երևան, ԵՀ հրատ., 1991:
10. ՀԲԲ Գ – Հայոց լեզվի բարբառային բառարան Գ (ՀՀ գիտությունների Ազգային Ակադեմիա Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտ. Գասպարյան Գ., Գրիգորյան Ա., Հակոբյան Ա. և ուրշ.), Երևան, «Գիտություն» հրատ., 2004:
12. ՀԲԲ Ե – Հայոց լեզվի բարբառային բառարան Ե, Երևան, «Գիտություն» հրատ., 2008:
13. ՑՁԵ Բ – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Բ, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1967:
14. ՑՁԵ Ե – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Ե, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1971:
15. ՑՁԵ Ջ – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Ջ, Երուսաղէմ, 1972:
16. ՑՁԵ Ը – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Ը, Երուսաղէմ, 1977:

[87] «Կոզեռն-չորուկ», «դալրուկ-զգած», «անմեղուկ-իմաստնակ», «վզոտատեբ-աղաւնեկ» եղանակների նույնությունը, ըստ երկու՝ ՄՄ 2388 և ՄՄ 758 ձեռագրերի համեմատության, նկատել է դեռ Ն. Թահմիզյանը (**Թահմիզյան Ն.,** 1969, 202–204): «Անձեղ» և «չիտ» եղանակների նույնությունը նկատել է Ղ. Ալիշանը, որ հերքում է Ն. Թահմիզյանը (նույն տեղում, էջ 204): Սակայն ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ իրար բավական մոտ այս երկու և սրանք շրջապատող մյուս եղանակները ձեռագրերում փոխադարձաբար վերցրել են միմյանց անունները. սրանց հանգամանալից ցուցադրությունը դուրս է հոդվածի բուն խնդրի շրջանակներից:

17. ՑՁԵ Թ – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Թ, Երուսաղէմ, 1979:

18. ՑՁԵ Ժ – Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Ժ, Երուսաղէմ, 1990:

19. ՄՀԲ – Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Երևան, ԵՊՀ հրատ., 2009:

20. ՆԲՀԼ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ա, Ավետիքյան Գ., Սյուրմելյան Խ., Ավգերյան Մ., Վենետիկ, ի տպ. Ս. Ղազարու, 1836:

21. ՆԲՀԼ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ, Ավետիքյան Գ., Սյուրմելյան Խ., Ավգերյան Մ., Վենետիկ, ի տպ. Ս. Ղազարու, 1837:

Աթանաս, 1899[Յառաջաբան] – Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի Ճառք, Թուղթք եւ Ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899:

Ալիշան Ղ., 1885 – Ալիշան Ղ., *Սիսուան և Լևոն մեծագործ*, Վենետիկ, 1885:

Անասյան Հ., 1959 – Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., Ա*, Երևան, 1959:

Աստուածաշունչ, 1895 – Աստուածաշունչ մատեան, Հին եւ Նոր Կտակարանների եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Կ. Պոլիս, 1895:

Աստուածաշունչ, 1994 – Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Էջմիածին, 1994:

Արևշատյան Ա., 2002 – Արևշատյան Ա., Մանրուսման եղանակների անվանումների նշանակության մասին, «Մանրուսում» միջազգային երաժշտական տարեգիրք, Ա, Երևան, 2002:

Թահմիզյան Ն., 1969 – Թահմիզյան Ն., Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, «Կոմիտասական» 1, 1969:

Թահմիզյան Ն., ԲՄ, 13, 1980 – Նյութեր հայկական և ռուսական հոգևոր միջնադարյան երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Բանբեր Մատենադարանի», 13, 1980:

Թահմիզյան Ն., 2003 – Թահմիզյան Ն., Արդի խազաբանութիւն, Փասադենա, 2003:

Կիրակոս եպիսկոպոս, ԲՄ 13, 1980 – Մնացականյան Ա., «Գովանք թռչնոց» տաղաշարքը, նրա հեղինակը և ժամանակը», ԲՄ 13, 11980, 233 – 243, հաջորդող բնագիրը՝ 244 – 256:

Կոմիտաս, 2005 – Կոմիտաս Վարդապետ, Հայոց եկեղեցական եղանակները, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ, Գիրք Ա*, աշխ. Գ. Գասպարյանի և Մ. Մուշեղյանի, Երևան, 2005:

Կոմիտաս, 2007 – Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, Գիրք Բ, աշխ. Գ. Գասպարյանի, Մ. Մուշեղյանի, Երևան, 2007:

Ներսես Շնորհալի, 1865 – Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865:

Տնտեսեան Ե., 1933 – *Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յաւելուած բովանդակութիւն երգոց բստ ութն ձայնից*, Իսթանպոլ, 1933:

Փիլոն, 1892 – Փիլոնի Հեբրայեցւոյ Ճառք թարգմանեալք ի նախնեաց մերոց, յորոց հելլէն բնագիրք հասին առ մեզ, աշխատասիրությամբ Գ. Զարբհանալյանի, Վենետիկ, 1892:

Вардазарян О., 2006 – Вардазарян О., Филон Александрийский в восприятии армянского средневековья, Ереван, 2006.

Герцман Е., 1988 – Герцман Е., Византийское музыкознание, Л., 1988.

Athanasius. Epistula – Athanasius, Epistula ad Marcellinum de anterpretatione Psalmorum. Series Graeca, ed. J. Migne, Brepols-Turnhout (*MPG*) 27.

Philo, Legum allegoriae – Philonis Alexandrini opera guae supersunt, vol. 1, ed. L. Cohn, Berlin, Reimer, 1896.

Wagner P., Neumenkunde [Paläographie des Liturgischen gesanges]. Leipzig, 1912.

ARUSYAK TAMRAZYAN
PHD in Philology
Mesrop Mashtots Matenadaran
arusiak_t@mail.ru

L'ART DES «MANROUSOUMN» DANS LA TRADITION MEDIEVALE ARMENIENNE

1. La perception de l'art du «menu», du «fin» dans l'expérience esthétique de l'Arménie médiévale. Le terme «menu» dans la tradition manuscrite arménienne.

2. Les appellations des mélodies typiques («*ouguitsi*»), leurs liens internes, leur caractéristique d'après leur nom et leur image neumatique

Dans la tradition spirituelle de l'Arménie médiévale, surtout en Cilicie médiévale, on relève l'usage des recueils des chants rituels connus sous le nom de «*manrousmounk*» (l'art «fin», littéralement «menu»). Les manuscrits «manrousmounk», réunissant les chants de l'office religieux et de la messe, se caractérisent par leur maîtrise singulière d'une riche tradition neumatique dotée de nombreux signes complémentaires, susceptibles de désigner différentes nuances d'interprétation. Les mélodies de «Manrousmounk» sont riches en chants mélismatiques; on y relève également plus de 100 mélodies typiques aux noms spécifiques, formées à l'intérieur du système à huit modes.

Le présent article se penche sur le champ des notions qui sont en lien avec le terme «menu» et l'art du «menu», catégorie esthétique incontournable dans la tradition exégétique de l'Arménie médiévale. Il est à noter qu'outre son sens premier - «petit», «insignifiant» - le terme «menu» (մանր) contient en arménien les acceptions de «fin», de «minutieusement travaillé». L'identité des termes «menu» et «fin» est caractéristique. Ce dernier renvoie à la notion d'une contemplation profonde, «fine», on songe ainsi à l'interprétation allégorique des textes sources qui cherchait à relever le sens immatériel, caché dans les couches les plus intimes de l'écrit. Par ailleurs, on retient également la symbolique du morcellement et du mâchement de la nourriture qui désignait l'appropriation et la dégustation du savoir dans la tradition médiévale arménienne.

Or, toute cette palette de significations correspond également aux critères de la science «menue» appliquée dans la monodie, marquée par d'infimes réfractions internes, par la création des mélodies à huit modes, considérée comme l'art «fin» d'un travail minutieux, exigeant, conduisant à la manifestation des strates toujours nouvelles dans les modèles déjà établis, mais c'est aussi l'art de différentes nuances,

d'astuces de leur interprétation et de leur inscription neumatique. Les tournures mélismatiques ainsi que l'usage courant des «fausses» voyelles, introduites dans les chants, enrichissent, élargissent et affinent la texture musicale et poétique.

En se fondant sur l'étude minutieuse de toutes les sources disponibles (notamment les 53 manuscrits «manrousmounk» du Maténadaran (l'Institut des manuscrits anciens), ainsi que les descriptions des «manrousmounk» de la collection des manuscrits conservés à Jérusalem, au couvent de Saint-Jacob) l'article présente la liste exhaustive des 136 mélodies typiques (en identifiant parfois la même mélodie apparaissant sous différents noms et en différenciant les diverses mélodies portant le même nom). Nous proposons par la suite un travail d'analyse et de déchiffrement de tous les noms des «Manrousmounk», souvent incompréhensibles. L'article interroge également leurs liens internes (se fondant sur la comparaison de l'image neumatique). Ces mélodies typiques sont accompagnées des paroles du second verset du psaume 141. D'où leur nom: «*ouguitsi*». On chantait les «*ouguitsi*» pendant la messe du soir, elles avaient une signification avant tout rituelle.

Les mélodies «*ouguitsi*», avec leur noms spécifiques, sont un modèle exceptionnel de l'extrême sensibilité, de la perception très vive, de la réception et de la formulation du matériau musical. Elles témoignent de la différenciation des structures musicales, de leur transfiguration, de la ramification incessante de mélodies toujours nouvelles, formant ainsi une chaîne extrêmement riche et multiforme de ressentis, d'images, de dispositions et d'associations. L'article tente de présenter ce travail qui donne lieu à une série de nouvelles variations, générant souvent tout un groupement de mélodies. Les noms des «*ouguitsi*» reflètent et repensent sur le plan musical et artistique tout l'environnement extérieur avec sa richesse sonore extraordinaire, ils expriment à merveille les différentes strates de l'espace sonore, à commencer par les voix de la nature et des phénomènes naturels («fer», «ruisseau», etc.) ou encore par celles des oiseaux ou des instruments de musique (tambour, cymbale, flûte, cor, etc.). Ils se réfèrent aussi aux différentes écoles et traditions («Haterkétsi, Mchétsi, Tarонétsi, etc). On retient également les appellations indiquant un style, une nuance particulière d'interprétation. Elles témoignent de l'incroyable essor de l'art de la monodie en Arménie médiévale, révélant une riche expérience de la maîtrise de la voix ainsi qu'une pratique ingénieuse de différentes astuces et nuances relatives à l'émission de la voix et à l'interprétation («en bégayant», «plaintif et lourd», «boiteux», «criant», «parlant», «opéré par le palais», «balancé», «fixé, en saisissant avec force /*ktskhak*/», «tirant vers l'arrière», etc.; les mélodies typiques sont souvent fondées sur une seule astuce interprétative, ce qui trahit l'application d'un seul aspect particulier, comme par exemple la répétition du même signe neumatique.) La maîtrise de cet art, la connaissance du système des mélodies typiques, avec leurs diverses manières d'interprétation, représente le style noble de la science «fine».

АРУСЯК ТАМРАЗЯН
Кандидат филологических наук
Имени Месропа Маштца
arusiak_t@mail.ru

ИСКУССТВО «МАНРУСУМН» В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

1. Восприятие «мелкого», «тонкого» искусства в средневековом армянском эстетическом опыте. Термин «мелкий» в армянской письменной традиции

2. Наименования моделей-попевок «угици», их взаимосвязи, характеристика по названиям, невменному письму

В средневековой армянской, в особенности, в киликийской духовной среде бытовали певческие-ритуальные сборники «манрусмунк» (тонкая, буквально – «мелкая» наука). Рукописи «манрусмунк», в которых представлены песнопения из богослужения и мессы, выделяются особым, тончайшим мастерством богатейшего невменного письма, с многочисленными побочными знаками, указывающими на различные аспекты исполнения, звукоизвлечения. Песнопения «манрусмунк» особо обогащены мелизматическим пением, здесь также представлены, как известно, внутри восьмигласовой системы, свыше 100 типичных попевок-мелодий, каждая из которых имеет свое название.

В статье представлена «среда» понятий, связанных с термином «мелкий», с эстетическим критерием «мелкого» искусства в армянской средневековой экзегетической традиции. Слово «мелкий», кроме «маленькой», «незначительной», имеет такие смысловые оттенки, как «тонкий», «филигранный», «досконально отделанный». Характерно также тождество терминов «мелкий» и «тонкий». Последее связано с понятием «тонкого» созерцания – с аллегорическим толкованием текстов, для выявления сокровенного, бестелесного его смысла во внутренних, «тонких» слоях. В средневековой традиции бытует также образ поглощения и размельчения, «мелкого» разжевывания пищи, как символ освоения, «вкушения» знания. Вся эта смысловая палитра соответствует также критериям «мелкой» науки в монодии, с ее все более «размельчающимися» внутренними раздроблениями, разработкой внутригласовых попевок, как возможно более филигранной отделки, выявления все новых и новых слоев в уже зафиксированных моделях, а также всевозможными оттенками и манерами, приемами их исполнения, тонким искусством их невменной фиксации. Ме-

лизматические обороты, широкое применение «ложных» гласных, внедренных в песнопения, обогащают и одновременно разряжают-расширяют, «утончают» музыкально-поэтическую ткань.

В статье на основе тщательного изучения всех доступных первоисточников (53 рукописей «манрусмунк» Матенадарана, Института древнеармянских рукописей, также описания рукописей «манрусмунк» Иерусалимского рукописного собрания, хранящегося в монастыре Св. Якова) приводится полный список 136-и внутригласовых попевок «манрусмунк» (причем сопоставляются разные наименования одной и той же мелодии и разных одноименных мелодий), с анализом-расшифровкой их часто непонятных названий, выявлением их взаимосвязей (на основе сравнения невменного письма). Эти типичные модели-мелодии сопровождаются словами второй строфы 141 псалма, от которого получили свое название «угици». «Угици» исполнялись во время вечернего богослужения и имели в первую очередь ритуальное значение.

Мелодии «угици» с их названиями являются редкими примерами красочного, чуткого восприятия и осмысления-формулировки музыкального материала, обособления музыкальных образований, их перерождения, разветвления в новые варианты попевок, со связанным с ними богатейшей, разноплановой цепью переживаний, образов, настроений, ассоциаций. В статье представлена эта работа, в результате которой возникают новые вариации, часто образующие целую группу родственных мелодий. В названиях «угици» отражена, творчески-музыкально переработана вся внешняя пестро звучащая среда, разные пласты звукового пространства, начиная со звуков природы и стихий («железо», «речка» и т.д.), птиц, особо отличающихся выразительным голосом, музыкальных инструментов («барабан», «тарелки», «свирель», «рог» и т.д.), отдельных школ и традиций («Атеркеци», «Мшеци», «Таронеци» и т.д.). Интересны наименования, указывающие на особую манеру, способ исполнения. Они раскрывают высокоразвитое искусство монодии в средневековой Армении; богатейшую практику, мастерство владения звуком, всевозможными приемами, оттенками звукоизвлечения, исполнения («заикаясь», «плачевно-тяжело», «хромой», «кричащий», «говорящий», «управляемая ноздрями», «качающийся», «прикрепленный, крепко хватающий [кцхак]», «потягивающий назад» и т.д.: модели-попевки часто образуются из одного приема исполнения, на которое указывает применение одного аспекта, например, постоянно повторяющегося невменного знака). Владение этим искусством, системой типичных моделей-мелодий с самыми различными способами их исполнения, представляет мастерство высокого стилья «тонкой» науки.

REPORTS
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

GABRIELLA ULUHOJYAN

A NEW DEVELOPMENT FOR ARMENIAN STUDIES IN ITALY: THE AMBROSIAN ACADEMY IN MILAN

Foreword

Cardinal and Archbishop of Milan, Federico Borromeo (1564–1631), hailed from a noble Lombardy family and was the cousin of Saint Carlo Borromeo, patron of Milan. Having gained a solid classical education at Pavia and Bologna, he went on to study theology, archaeology and Hebrew in Rome. As archbishop of Milan, he devotedly served the people of his parish during the plague of 1630, as mentioned in the novel *I Promessi Sposi* by Alessandro Manzoni. Nevertheless, Federico was, above all, a scholar and advocate of academic study, founding the Biblioteca Ambrosiana, or Ambrosian Library, in 1609 in Milan. He wanted the Library to do more than protect and preserve the enormous collection of handwritten codices and precious printed books gathered over the long years of preparation. He wanted it to become a dynamic centre of research into the tremendous legacy of Hebraism and Eastern Christianity. In addition to collating material, it was therefore necessary to engage experts in the languages of the texts in order to educate and prepare future scholars. In the case of Armenian, this role was first filled by Bartolomeo Abgaro from 1611–1612. Early fruits of Armenian studies in Milan were two books edited by Francesco Rivola and printed in the Ambrosian font: the Armenian grammar book, *Grammatica Armena,* in 1624 and the Latin-Armenian dictionary, the *Dizionario armeno-latino,* in 1621[1].

[1] *Baṙagirk‘ Hayoc‘. Dictionarium Armenolatinum auspiciis Federici card. Borromaei archiepsc. Mediolani confectum, et editum, auctore Francisco Rivola ciue Mediolanensi*. Mediolani, ex Typographia Collegij Ambrosiani, Anno M.DC.XXI. *Grammaticae Armenae libri quattuor, auctore Francisco Rivola Canonico in Ecclesia Sancti Thomae Mediolani.* Mediolani, ex Typographia Collegij Ambrosiani, Anno M.DC.XXI.

2009, therefore, marked 400 years since the inauguration of the Ambrosian Library, among the most illustrious of its kind in Italy. Anniversaries should always be celebrated, and indeed sometimes they are; no matter how rich or elegant, however, they remain transitory occasions. In Milan, they chose to celebrate in a way that would endure, establishing an Academy within the Library devoted to Oriental Studies, among other areas, thus fulfilling Federico Borromeo's original dream.

The first articles of the Statute, promulgated in honour of the anniversary on March 20th 2008 and signed by the then Archbishop of Milan, Dionigi Carlo Tettamanzi, provide a clearer explanation on how the Academy is structured:

Art.1 – The Ambrosian Academy, instituted by Archbishop of Milan Dionigi Tettamanzi, has legal seat in the Venerable Ambrosian Library. It is a scientific organisation, operating within the manifold activities of the Venerable Ambrosian Library, governed by the regulations approved by Cardinal Carlo Maria Martini on 26th September 1998, working with the autonomy guaranteed by this very statute.

Art. 2 – The Ambrosian Academy is organised in Classes, i.e. autonomous fields of research, that can be subdivided in Sections, to be considered autonomous and with the same rights as the Classes. The Academy includes currently seven Classes: 1. Studies of the age of St. Charles Borromeo; 2. Ambrosian Studies; 3. Classical Studies; 4. Italianistics; 5. Slavistics; 6. Near Eastern Studies; 7. Far Eastern Studies… *omissis*

Art. 3 – The Ambrosian Academy promotes and coordinates research and publications in different cultural fields, helping to arouse broader interest in the scientific arena and to make the Venerable Ambrosian Library a place of mutual meeting and exchange for scholars of other academic institutions.

The 6th class, Near Eastern Studies, is composed of four sections: Arabic, Armenian, Hebrew and Siriac. Its scope is clearly articulated in Article 3 of the statute: to create a platform for discussion, including cross-discipline, between academics working in fields related to the history and culture of Near Eastern peoples from Late Antiquity to the present day. For now, at least, the Ancient Near East (the civilizations of Babylon, Egypt etc.) is not included in this section.

Organisation and activity

Prefect of the Library as well as President of the Academy is Monsignor Franco Buzzi. During the planning phase, the first directive boards were formed of a number of scholars closely associated with the Ambrosian Library and subsequently given the title of «academic». The directive boards are charged with selecting the areas of study year on year, as well as organising nomination proposals for new academics, chosen among Italian and foreign specialists. Every year for three days in the second week of November, the Academy celebrates the *Dies academicus*, inviting speakers who share their expert knowledge and skills and the results of their researchon a theme decided in advance. One particularly interesting aspect of the triennial event is the common choice of theme for all four sections, promoting reciprocal exchange.

The *Dies* is open to the public and takes place in the conference room of the Ambrosian Library in the heart of Milan (10 Via Cantù). The event is participatory, and attendees may ask the speakers questions and request further elaboration.

Thus, over the last 6–7 years the Academy has developed a tradition of publicising the latest research on the cultural traditions of peoples who have shared a part of their history. If the Hebrew Section appears unusual in extending its focus of research to include the ancient biblical tradition, it is important to recognise that the Christian Armenian, Siriac and Arab cultures (inclusive of the Islamic period) are nonetheless linked in various ways to the cultural legacy of the Jewish world.

On an organisational level, the 6th class (Near Eastern Studies) is run by a directive board with representatives from each section, each elected for 5 years, along with the secretary and the director. At the time of its establishment, the director of the section was Professor Monsignor Gianantonio Borgonovo, succeeded in 2013 by Professor Monsignor Pier Francesco Fumagalli. The board, as already noted, is charged with formulating proposals for the nomination of new academics and for the themes of the following year's academic papers. These proposals are put forward for ratification at the general assembly, held yearly on the occasion of the *Dies.* After the approval of an academic board, the papers are collated and published in the series *Orientalia Ambrosiana.*

Whilst this paperaims to describe the activity of the Armenian section, in doing so we also reveal how the other sections are organised, thereby illustrating the mechanisms behind the Ambrosian Library - Academy's meritorious, new academic initiative.

From its beginnings to the present day (December 2015), the Armenian Studies section has welcomed the following academics, listed alphabetically:

Calzolari Valentina (Switzerland), Chookaszyan Levon (Armenia), Cowe Peter (USA), de Lamberterie Charles (France), Finazzi Rosa Bianca (Italy), Gugerotti Claudio (Italy), Hovannisian Richard (USA), Kouymjian Dickran (USA/France), Sirinian Anna (Italy), Tamrazyan Hrachia (Armenia), Uluhogian Gabriella (Italy), van Lint Theo (England), Weitenberg Josef Johannes *in memoriam* (Holland), Zekiyan Boghos Levon (Italy).

The *Dies Academicus* was held every year in the second week of November, featuring the following programmes and papers:

First *Dies* 8–10 November 2010. General theme: *Gli studi di Orientalistica in Ambrosiana in occasione del IV Centenario [Near Eastern Studies at the Ambrosian Academy on the occasion of its 4th centenary].* Papers in chronological order: Gabriella Uluhogian, *Il manoscritto armeno nelle biblioteche italiane*; Levon Boghos Zekiyan, *La formazione del concetto di nazione/azg nella tradizione armena cristiana*; Rosa Bianca Finazzi, *Cinquant'anni di ricerche sulle traduzioni armene.*

Second *Dies* 7–9 November 2011. Theme: *La prima stampa armena [The first Armenian printed documents]*. Prolusion: Theo Maarten van Lint, *The Armenian Culture in the World Vision of Grigor Magistros Pahlawuni*. Papers: Anna Sirinian,

Il primo periodico armeno «Azdarar» (Madras 1794); Aldo Ferrari, *Il libro armeno da Bitlis a San Pietroburgo*; Benedetta Contin, *L'editio princeps delle Definizioni e divisioni della filosofia di Davide l'Invincibile (Costantinopoli 1731)*.

Third *Dies* 12–14 November 2012. Theme: *L'età bagratide [The Bagratuni era]*. Papers: Riccardo Pane, *Dimensione solidale del peccato e sacrificio della parola in Gregorio di Narek*; Marco Bais, *Le relazioni tra Chiesa armena e Chiesa albana tra IX e XI secolo*.

Fourth *Dies* 11–13 November 2013. Theme: *Le sacre Scritture e loro interpretazioni [The sacred scriptures and their interpretation]*. Dickran Kouymjian, *Sources for the Iconography of the Life of Christ Cycle in Armenian Gospel Manuscripts and Early Printed Book*; Peter Cowe, *Rhetoric, Theology and Antiochene Exegesis in the Armenian Version of Lamentations*; Paolo Lucca, *Il testo armeno dell'antico testamento: problemi e tecniche editoriali*.

Fifth *Dies* 10–12 November 2014. General theme: *Bibbia e Corano: edizioni e ricezioni [Bible and Qu'ran: editions and reception]*. Papers: Paolo Lucca, *Le edizioni a stampa e le traduzioni della Bibbia armena*; Riccardo Pane, *Bibbia e liturgia nella Chiesa armena*; Peter Cowe, *The Textual Significance of the Armenian Palimpsest from Sinai and its Role in the Edition of the Armenian Bible*.

Sixth *Dies* 9–11 November 2015. Theme: *Temi e tendenze della storiografia armena antica e moderna [Themes and trends of ancient and modern Armenian historiography]*. Papers: Marco Bais, *L'immaginario del tempo nella storiografia armena antica*; Aldo Ferrari*: Modern Armenian historiography. Origine e sviluppi*; Richard Hovannisian, *Historiography of the Armenian Genocide: Advances and Challenges*; Raymond Kévorkian*: Historiographie du genocide des Arméniens: représentations politiques et études historiques.*

Already scheduled for 7–9 November 2016, the seventh *Dies* will have the following general theme: *Circolazione di testi e superamento delle barriere linguistiche e culturali* [The circulation of texts and the overcoming of linguistic and cultural barriers]

Publications

As mentioned above, many papers, sometimes reworked in the titles, are published in the series *Orientalia Ambrosiana*, of which four volumes have been issued. In his introduction to the first, founding director of the 6th class Professor Monsignor Gianantonio Borgonovo further clarified the objectives of the new Academy: *We are not limiting this endeavour to the cataloguing of the precious collection in our care, but rather setting our sights on a more creative and fruitful horizon, bringing together the best academics in the world to develop new research, further promoting and celebrating the legacy of the Ambrosian Library.*

Four volumes have been issued so far, the titles and contents of which are below:

1. *Gli studi orientalistici in Ambrosiana nella cornice del IV Centenario (1609-2009)* edited by Carmela Baffioni, Rosa Bianca Finazzi, Anna Passoni Dell'Acqua, Emidio Vergani, Bulzoni, Roma, 2012, pp. 125–143: Gabriella Uluhogian, *Il manoscritto armeno nelle biblioteche italiane*; pp. 144–170: Rosa Bianca Finazzi, *Cinquant'anni di ricerche sulle traduzioni armene*.

2. *Al-Ġazālī (1058–1111), La prima stampa armena, Yehūdāh Ha-Lēvī (1075–1141), La ricezione di Isacco di Ninive*, edited by Carmela Baffioni, Rosa Bianca Finazzi, Anna Passoni Dell'Acqua, Emidio Vergani, Bulzoni, Roma, 2013, pp. 101–119: Anna Sirinian, *Azdarar. Il primo priodico armeno*; pp. 121–131: Aldo Ferrari, *Una cultura policentrica. Il libro armeno da Bitlis a Pietroburgo [The Armenian book from Bitlis to St Petersburg]*; pp. 133–152: Benedetta Contin, *L'editio princeps delle Definizioni e Divisioni della filosofia di Davide l'Invincibile e il breve trattato Ogni male fa soffrire* (Costantinopoli1731).

3. *Storia e pensiero religioso nel Vicino Oriente. L'età Bagratide – Maimonide – Afraate*, edited by C. Baffioni, R.B.Finazzi, A.Passoni Dell'Acqua, E. Vergani, Bulzoni, Roma 2014, pp. 3–22: Theo Marten van Lint, Prolusion *La cultura armena nella visione del mondo di Grigor Magistros Pahlawuni*; pp. 23–38: Riccardo Pane, *Dimensione solidale del peccato e sacrificio della parola in Gregorio di Narek*; pp. 39–59: Marco Bais, *Le relazioni tra Chiesa armena e Chiesa albana tra IX e XI sec.*

4. *Le sacre scritture e le loro interpretazioni*, edited by Carmela Baffioni, Rosa Bianca Finazzi, Anna Passoni Dell'Acqua, Emidio Vergani, Bulzoni, Roma, 2015: pp. 121–141: Dickran Kouymjian, *Some Iconographical Questions about the Christ Cycle in Armenian Manuscripts and Early Printed Book*; pp. 143–165: Peter Cowe, *Rhetoric, Theology and Antiochene Exegesis in the Armenian Version of Lamentations*; pp. 167–191: Paolo Lucca, *Il testo armeno dell'Antico Testamento: problemi e tecniche di edizione*.

For some years now, the study of Armenian language, literature, print and history has enjoyed a new Italian home. Once again, the names of Grigor Magistros, David the Invincible, Grigor Narekatsi and many others resound within the Ambrosian Library's austere walls, finding new voices not only in specialist scholars from many different countries, but in Italian young inductees, newly drawn to the discipline.

ԳԱԲՐԻԵԼԼԱ ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԻԼԱՆԻ ԱՄԲՐՈԶԻԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ամբրոզյան, կամ Ամբրոզիանա գրադարանը 1609 թ. հիմնել է Միլանում կարդինալ եւ Միլանի արքեպիսկոպոս Ֆեդերիկո Բորրոմեոն (1564–1631), որը ծագում էր նշանավոր Լոմբարդի ընտանիքից եւ Միլանի հովանավոր սբ. Կարլո Բորրոմեոյի (Carlo Borromeo) հորեղբոր տղան էր: Գրադարանը հիմնվել էր ոչ սոսկ ձեռագրերի եւ տպագիր գրքերի պահպանման համար, այլեւ որպես արեւելյան քրիստոնեության հսկայական ժառանգության հետազոտման կենտրոն: Այդ թվում եւ համապատասխան լեզուների գծով փորձագետների ներգրավման եւ ապագա գիտնականների նախապատրաստման համար:

Ինչ վերաբերում է հայագիտությանը, ապա առաջինը դրա կազմակերպմանը ձեռնամուխ եղավ Բարտոլոմեո Աբգարոն (Bartolomeo Abgaro) 1611–1612 թթ., իսկ հայագիտական հետազոտությունների առաջին պտուղները Ֆրանչեսկո Ռիվոլայի խմբագրած երկու գրքերն էին. Հայերենի քերականությունը (Grammatica Armena, 1624) եւ Լատին-հայերեն բառարանը (Dizionario armeno-latino, 1621):

2009 թ. նշվում էր Ամբրոզիան գրադարանի 400-ամյակը, որը որոշվեց նշանավորել գրադարանին կից հիմնադրելով Ակադեմիա, նվիրված ի թիվս այլոց նաեւ արեւելագիտությանը, դրանով իսկ մարմնավորելով Ֆեդերիկո Բորրոմեոյի սկզբնական երազանքը:

Գրադարանի ավագն է պարոն Ֆրանկո Բուցցին (Franco Buzzi):

Հոբելյանի առթիվ 2008 թ. մարտի 20-ին հրապարակված եւ Միլանի արքեպիսկոպոս Դիոնիջի Կարլո Տետամացցիի (Dionigi Carlo Tettamanzi) ստորագրած կանոնադրությունը պարզ պատկերացում է տալիս Ակադեմիայի կառուցվածքի մասին:

Մասնավորապես, ներկայումս Ակադեմիան ներառում է յոթ դաս.

1. Սբ. Կարլո Բորրոմեոյի դարաշրջանի հետազոտություններ, 2. Ամբրոզյանական հետազոտություններ, 3. Դասական հետազոտություններ, 4. Իտալագիտություն, 5. Սլավոնագիտություն, 6. Մերձավոր արեւելքի գծով հետազոտություններ, 7. Հեռավոր արեւելքի գծով հետազոտություններ:

6-րդ դասը, նվիրված Մերձավոր արեւելքի գծով հետազոտություններին, բաղկացած է 4 բաժնից. արաբական, հայկական, եբրայական եւ ասորական:

Սկզբից եւ մինչ այսօր (2015 թ. դեկտեմբերը), Հայագիտության բաժնի անդամներ են եղել հետեւյալ գիտնականները (այբբենական կարգով). Գուչեբոտի Կլաուդիո (Իտալիա), Զեքեան Պողոս (Իտալիա), Թամրազյան Հրաչյա (Հայաստան), դե Լամբերտերի Շարլ (Ֆրանսիա), վան Լինթ Թեո (Անգլիա), Կալցոլարի Վալենտինա (Շվեյցարիա), Կոուե Պետեր (ԱՄՆ), Հովհաննիսյան Ռիչարդ (ԱՄՆ), Շիրինյան Աննա (Իտալիա), Ուայտենբերգ Յոզեֆ Յոհաննես, եմահու (Հոլանդիա), Ուլուհոջյան Գաբրիելլա (Իտալիա), Զուգասզյան Լեւոն (Հայաստան), Ֆինացցի Ռոզա Բյանկա (Իտալիա):

Այսպիսով, արդեն մի քանի տարի է, ինչ հայոց լեզվի, գրականության, մամուլի եւ պատմության ուսումնասիրությունը ընթանում է Միլանի գրադարանի ծածկի ներքո, ուր հնչում են Գրիգոր Մագիստրոսի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու անունները: Եւ լսում են դրանք ոչ միայն տարբեր երկրների մասնագետները, այլեւ գիտությանը դեռ նոր-նոր հաղորդակից դարձող իտալացի երիտասարդ հետազոտողները:

ГАБРИЭЛЛА УЛУОДЖЯН

НОВЫЕ ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ АРМЕНОВЕДЕНИЯ В ИТАЛИИ: АМБРОЗИАНСКАЯ АКАДЕМИЯ МИЛАНА.

Библиотеку Амброзиана или Амброзианскую библиотеку основал в 1609 году в Милане кардинал и архиепископ Милана Федерико Борромео (1564–1631), бывший родом из знатной Ломбардийской семьи, двоюродный брат покровителя Милана св. Карло Борромео (Carlo Borromeo). Библиотека была создана не просто для защиты и хранения рукописей и печатных книг, но и в как исследовательский центр огромного наследия восточного христианства и в том числе, с целью привлечения экспертов по соответствующим языкам и подготовки будущих учёных.

Что касается арменоведения, то первым за его организацию взялся Бартоломео Абгаро (Bartolomeo Abgaro) в 1611–1612 гг., а первыми плодами арменоведческих исследований были две книги, отредактированные Франческо Риволой (Francesco Rivola): Армянская грамматика (Grammatica Armena, 1624) и Латинско-армянский словарь (Dizionario armeno-latino, 1621).

В 2009 г. отмечалось 400-летие основания Амброзианской библиотеки, дату было решено ознаменовать основав при библиотеке Академию, посвящённую, в том числе, востоковедению, воплотив тем самым изначальную мечту Федерико Борромео. Префектом библиотеки, а также президентом Академии является монсеньор Франко Буцци (Franco Buzzi).

Устав, обнародованный в честь юбилея 20 марта 2008 года и подписанный архиепископом Милана Дионижди Карло Теттаманци (Dionigi Carlo Tettamanzi), даёт ясное представление о структуре Академии.

В частности, Академия в настоящее время включает семь классов:

1. Исследования эпохи св. Карло Борромео; 2. Амброзианские исследования; 3. Классические исследования; 4. Итальянистика; 5. Славистика; 6. Исследования по Ближнему Востоку; 7. Исследования по Дальнему Востоку.

6-й класс – Ближневосточных исследований – состоит из четырех секций: арабской, армянской, иврита и сирийской.

От начала и до наших дней (декабрь 2015), членами секции Арменоведения были следующие ученые (в алфавитном порядке):

Гуджеротти Клаудио (Италия), Зекеан Погос Левон (Италия), Калцолари Валентина (Швейцария), Кауи Питер (США), Куюмджян Тигран (США / Франция), де Ламбертери Шарль (Франция), ван Линт Тео (Англия), Ованнисян Ричард (США), Тамразян Рачья (Армения), Вайтенберг Йозеф Йоханнес, посмертно (Голландия), Улуоджян Габриэлла (Италия), Финацци Роза Бьянка (Италия), чукасзян Левон (Армения), Ширинян Анна (Италия).

Таким образом, уже несколько лет, изучение армянского языка, литературы, периодики и истории происходит в стенах Миланской библиотеки, где звучат имена Григора Магистроса, Давида Анахта, Григора Нарекаци. И слышат их не только специалисты из разных стран, но и молодые италянские исследователи, только-только приобщающиеся к науке.

AÉLITA DOLOUKHANYAN
Membre correspondant de l'Académie Nationale des Sciences de la RA
Docteur en sciences philologiques

VALERI BRIOUSSOV ET ARCHAK TCHOBANIAN (LIENS LITTERAIRES)

Les liens littéraires entre Valéri Brioussov et Archak Tchobanian constituent l'une des pages inoubliables et émouvantes de la littérature arménienne. Deux écrivains d'une grande érudition, philologues, parfaitement au courant des trésors mondiaux de la pensée, qui ont vécu et œuvré dans différents pays, mais qui sont liés par un nœud crucial qui est le suivant: le monde entier doit connaître l'Arménie Occidentale, qui a subi le génocide de 1915, et la mission historique mondiale de tout le peuple arménien, ainsi que les valeurs spirituelles qu'il a créées.

En 1916, le recueil *La poésie de l'Arménie*, destiné aux lecteurs russophones, a été publié à Moscou grâce aux efforts et à la contribution personnelle de Valéri Brioussov. Sa publication a été un phénomène notable dans la vie littéraire aussi bien russe qu'arménienne.

En tant que poète et critique littéraire, Valéri Brioussov a réuni avec soin tous les documents ayant trait à l'histoire et à la littérature arméniennes, il a relevé leur valeur réelle et documentaire, les a comparés avec les œuvres contemporaines de la littérature mondiale en donnant leur interprétation et leur appréciation.

Dans les annotations de son recueil, Valéri Brioussov mentionne scrupuleusement toutes les sources auxquelles il a eu recours en composant son riche recueil[1]. Il note qu'il a eu sous la main les traductions russes des ouvrages de Movses Khorénatsi, Sébéos, Ghévond, Movses Kalankatvatsi, Vardan Aréveltsi, Eghiché, Stépanos Siunétsi (Orbélian), qu'il connaît la *Réfutation des Sectes* d'Eznik Koghbatsi et *L'Histoire des Mongols d'après les sources arméniennes*[2] de Kérovbé Patkanian. Il s'est servi de la *Grammaire de la langue arménienne ancienne* de Nicolas Marr, célèbre arméniste et arménophile, il a étudié les recherches effectuées par Nicolas Adontz et Hovsep Orbéli, en particulier *L'Arménie à l'époque de Justinien* et *Le marzpan Vassak devant le jugement des historiens* de Nicolas Adontz, ainsi que les livres consacrés par N. Marr et H.

[1] Voir *La poésie de l'Arménie des temps les plus reculés à nos jours*, 1916, 493–512. Ci-après : *La poésie de l'Arménie*.

[2] Ibidem, 512.

Orbéli à la capitale Ani des Bagratides, de nombreux documents relatifs à l'archéologie caucasienne, etc.

V. Brioussov a vastement utilisé aussi les ouvrages des arménistes européens, tels H. Hubschman, F. Tournebize, Marckwart, Saint-Martin, E. Dulaurier et d'autres. Il connaît les deux tomes du chef-d'œuvre *Mémoires sur l'histoire et la géographie de l'Arménie* de Saint-Martin, fondateur des études arméniennes en France, ainsi que le volumineux tome consacré aux Croisades de Dulaurier. Parmi toutes ces sources, il distingue surtout l'œuvre d'Archak Tchobanian dont il cite les ouvrages suivants en français:

1) *Chants populaires*, Paris, 1896
2) *Les Trouvères arméniens*, Paris, 1906[3]
3) *L'Arménie*, Paris, 1896
4) *Zeitoun*, Paris, 1896, et bien d'autres

Valéri Brioussov note aussi que dans sa Préface du recueil *La Poésie de l'Arménie*, il y a de nombreuses annotations mentionnant les ouvrages d'Archak Tchobanian[4].

Valéri Brioussov mentionne également Archak Tchobanian en présentant la poésie arménienne occidentale. Il traduit deux poésies de cet auteur.

1) *Voici que de nouveau le Néant se transforme en Lumière*.
2) *Marine*.

Dans le tome intitulé *Œuvres* d'Archak Tchobanian, la poésie *Marin*e porte le titre de *Tressage*[5].

Марина

Над гладью моря вздохи ветерка
Лазурный шелк сгибают непривычно,
И, в складки ровные согнув слегка,
Кладут запутанно, но симметрично.
И кажется: прозрачное шитье
Голубизной сияет углубленной,
Но зелень трав подводных сквозь нее
Просвечивает неопределенно.

Marine

Au-dessus de la mer calme, la brise soupire,
Appliquant un pli insolite à la soie azurée,

---

